



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀԱՅՈՐԴՈՒՄ

* ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2006 թ. ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐԱՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 5

II. ԼՐԱՅԱՎ ՀՀ ՍԴ ՏԵՂԵԿԱԳՐԻ ԼՈՒՅԾՈՒՅԱՅՍՄՆ 10 ՏԱՐԻՆ

Գ. ՈՉՏՈՒՆԻ 25

III. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԵՏՆԱԿԱՆԻ ԱՄՔԻՆ

* ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ք. ԹՈՒՏԱՄՆՅԱՆ 29

IV. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (648-657)

* ՍՊԸ-648 ՔԱՂԱՔԱՅԻ ԱՐԱՄԱՆԱՏԻՐՈՒՅՑՄԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՍԱՅԻՆԻ 5-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 470 ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 34
* ՍՊԸ-649 ՔԱՂ. Մ. ՔՈՂԱՐՅԱՆԻ ԵՎ ՔԱՂ. Հ. ԴԱՎԹՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵՐԻ ՍԱՄԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 11 ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ 40
* ՍՊԸ-650 ՔԱՂԱՔԱՅԻ ՍԱՐԳՅՈՒՆ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 280 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՍԱՄԻ ԵՎ ՀՀ ՀՈԴՎԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 100 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՍԱՄԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 59
* ՍՊԸ-651 2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԽՈՓԵԼՈՒ ՍԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 67
* ՍՊԸ-652 ՔԱՂԱՔԱՅԻ ՀԵՆՐԻԿ ԴԱՄԻԵԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 290 ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՍԱՄԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 70
* ՍՊԸ-653 2006 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-ԻՆ ԹԵՂՐԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՆԻ ԻՆԼԱՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՍԵԱԿՈՒԹՅՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԻՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՍԱՄԻՆ ՓՈԽԸՆՔՈՒՆՄԱՆ ՀՈՒՃԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 80

* ԱԳ-654 2006 թվականի ՀՈՒՆԻՍԻ 2-ԻՆ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՎՏՈՏՐԱՎՈՐԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՓԵՏԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՉՔՐՈՒՄ ԵՎ ԴՐԱՑ ՎԵՐԱԴՐԵՎՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԱՄԻՆ ՀԱՅԱՅՆ ՀԱՅԱՅՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԱՄԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 83
* ԱԳ-655 2006 թվականի ԱՊՐԻԼԻ 28-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՂՐՂԶԱՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՍԱԳԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՊՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 86
* ԱԳ-656 2006 թվականի ՀՈՒՆԻՍԻ 5-ԻՆ ԹԵՀՐԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՆՁՆՄԱՆ ՀԱՍԱԳԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 90
* ԱԳ-657 1961 թվականի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ՀԱՍԳԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԿՏՎԱՅԻՆ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԻՐԱՎՈՒՔՆԵՐԻ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՆՈՒՄ (ԿԻՑ ՎԵՐԱՊԱՀՈՒՄՆԵՐՈՎ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 93

Հ Ա Ղ Ո Ր Դ ՈՒՄ

**ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2006Թ.
ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Հունվար - 2007թ.
թ. Երեւան**

**Հասկարգել է ՀՀ սահմանադրական դատարանի 25 հունվարի 2007թ.
ՄԴ-ԸՆ - 3 աշխարհական որոշմամբ**

**Դատական սահմանադրական վերահսկողության հիմնական առանձ-
նահատկությունները 2006 թվականին**

2006 թվականը Հայաստանում դատական սահմանադրական վերահսկողության համար առանձնահատուկ էր նրանվ, որ 2005թ. սահմանադրական փոփոխություններն անմիջականորեն առնչվեցին սահմանադրական արդարադատության ողջ համակարգին: Նախ. Սահմանադրության 93 հոդվածով սահմանվեց, որ «Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը»: Համաձայն Սահմանադրության 94 հոդվածի՝ «Սահմանադրական դատարանի լիազորություններն ու կազմավորման կարգը սահմանվում են Սահմանադրությամբ, իսկ գործունեության կարգը սահմանվում է Սահմանադրությամբ եւ սահմանադրական դատարանի մասին օրենքով»: Սահմանադրության 100 հոդվածը սահմանում է.

«Հոդված 100. Սահմանադրական դատարանն օրենքով սահմանված կարգով»

1) որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի իրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը.

2) մինչեւ միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է նրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը.

3) լուծում է հանրաքվեների արդյունքների հետ կապված վեճերը.

3.1.) լուծում է Հանրապետության Նախագահի եւ պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը.

4) անհադրահարելի կամ վերացած է ճանաչում Հանրապետության Նախագահի թեկնածուի համար առաջացած խոչընդոտները.

5) եզրակացություն է տալիս Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին.

6) եզրակացություն է տալիս Հանրապետության Նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարինության մասին.

7) եզրակացություն է տալիս սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները դադարեցնելու, նրան կալանավորելու, որպես մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաև նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ.

8) եզրակացություն է տալիս համայնքի դեկավարին պաշտոնանկ անելու հիմքերի մասին.

ՀԱՅՈՐԴՈՒՄ

9) օրենքով նախատեսված դեպքերում որոշում է կայացնում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին»:

Միաժամանակ, Սահմանադրության 101 հոդվածով՝ էապես ընդայնելով սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների ցանկը, նախատեսվեց.

«Հոդված 101. Սահմանադրությամբ եւ սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող են դիմել՝

1) Հանրապետության Նախագահը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1, 2, 3, 7-րդ եւ

9-րդ կետերով նախատեսված դեպքերում.

2) Ազգային ժողովը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3, 5, 7-րդ եւ 9-րդ կետերով նախատեսված դեպքերում.

3) պատգամավորների առնվազն մեկ հիմքերորդը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի

1-ին եւ 3-րդ կետերով նախատեսված դեպքերում.

4) կառավարությունը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1, 6, 8-րդ եւ 9-րդ կետերով նախատեսված դեպքերում.

5) տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց սահմանադրական իրավունքները խախտող պետական մարմինների՝ նորմատիվ ակտերի Սահմանադրությանը համապատասխանության հարցով.

6) յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը.

7) դատարանները եւ գլխավոր դատախազը՝ իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով.

8) մարդու իրավունքների պաշտպանը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված նորմատիվ ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով.

9) Հանրապետության Նախագահի եւ պատգամավորության թեկնածուները՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ եւ 4-րդ կետերի շրջանակներում իրենց առնչվող հարցերով:

Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում»:

Սահմանադրական նման փոփոխություններն օրենքադրության «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի արմատական փոփոխությունների անհրաժեշտություն: ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ ՀՀ Ազգային ժողով ներկայացվեց «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի նոր նախագիծ: Այն մանրազնին փորձաքննություն անցավ Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովում: Նոր օրենքն ուժի մեջ մտավ 2006թ. հուլիսի մեկին:

ՀԱՇՈՐԴՈՒՄ

Օրենքի պահանջներին համապատասխան ՀՀ սահմանադրական դատարանն ընդունեց նոր կանոնակարգ, որի հիման վրա ապահովում է դիմումների ընդունման եւ դատաքննության նախապատրաստական աշխատանքների կազմակերպումը, ինչպես նաև սահմանվում են դատական ծառայության առանձնահատկությունները սահմանադրական դատարանում:

«Սահմանադրական դատարանի մասին» օրենքն առավել որոշակիացրեց սահմանադրական դատարանի պետախշանական կարգավիճակը՝ օրենքի 1-ին հոդվածում ամրագրելով, որ. «Սահմանադրական դատարանը սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմինն է, որն ապահովում է Հայաստանի Հանրապետության իրավակարգում Սահմանադրության գերակայությունը եւ անմիջական գործողությունը»: Օրենքը լուրջ փոփոխություններ կատարեց սահմանադրական դատավարության ընթացակարգերում, ամրագրեց գործի հանգամանքների ի պաշտոնե պարզման սկզբունքը, հստակորեն սահմանվեցին առանձին գործերի քննության դատավարական առանձնահատկությունները, օրենսդրական նախադրյալներ ստեղծվեցին անհատական դիմումների ինստիտուտի արմատավորման համար:

Սահմանադրության 116 հոդվածի համաձայն՝ 101 հոդվածի 6-րդ կետու ուժի մեջ մտավ 2006թ. հուլիսի 1-ից: Հուլիսի 1-ի դրությամբ ստեղծվել էին բոլոր անհրաժեշտ օրենսդրական եւ կազմակերպչական երաշխիքներն անհատական դիմումներն ընդունելու եւ ընթացք տալու համար: Զեւագործեցին սահմանադրական դատարանի դատական կազմերը: Սահմանադրական դատարանի կողմից կազմակերպվեցին մի շարք սեմինարներ, վերապատրաստում անցավ եւ ընդլայնվեց աշխատակազմը, կազմակերպվեց մշտական գործող խորհրդատվական ծառայություն: Հուլիս-դեկտեմբեր ամիսներին այդ ծառայությանն է դիմել ավելի քան 600 քաղաքացի:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 67 հոդվածը նախատեսեց նաև նոր դրույթ, որը վերաբերում է դատարանի որոշումների կատարման վիճակի ամփոփմանը: Այս պրակտիկան առկա է շատ երկրներում եւ հնարավորություն է տալիս ոչ միայն վեր հանել դատարանի որոշումների կատարման բնագավառում առաջացած խոչընդոտները, այլև դրանց հաղթահարման ուղղությամբ ներկայացնել որոշակի դիրքորոշում, ներկայացնել սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներով ամփոփված՝ սահմանադրական օրինականության վիճակը երկրում: Այդ հոդվածը նախատեսում է. «**Հոդված 67. Որոշումների կարգաման վիճակի ամփոփումը**

Սահմանադրական դատարանը յուրաքանչյուր տարվա ավարտից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, հաղորդում է հրապարակում իր որոշումների կատարման վիճակի վերաբերյալ: Այն ուղարկվում է պետական եւ տեղական ինքնակառավարման համապատասխան մարմիններ»:

ՀԱՂՈՐԴՈՒՄ

Ամփոփ վիճակագրություն

2006 թվականին սահմանադրական դատարանում մուտքագրվել են սահմանադրական դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտների 287 դիմում, ինչպես նաև այդպիսի իրավասություն չունեցող անձանց 381 դիմում:

Սահմանադրական դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտների կողմից փաստացի դիմումների պատկերն այսպիսին է.

1. ՀՀ Նախագահ - 47 դիմում,
2. ՀՀ Ազգային ժողով - 0 դիմում,
3. պատգամավորների առնվազն մեկ իինգերորդ - 2 դիմում,
4. կառավարություն - 0 դիմում,
5. տեղական ինքնակառավարման մարմիններ - 0 դիմում,
6. ֆիզիկական անձինք - 221 դիմում,
7. իրավաբանական անձինք - 13 դիմում,
8. դատարաններ - 1 դիմում,
9. գլխավոր դատախազ - 1 դիմում,
10. մարդու իրավունքների պաշտպան - 2 դիմում,
11. Հանրապետության Նախագահի թեկնածուներ - 0 դիմում,
12. պատգամավորության թեկնածուներ - 0 դիմում:

Առանձին գործերով սահմանադրական դատարանի որոշումները եւ դրանց կատարումը

ՀՀ Նախագահի դիմումների հիման վրա ընդունված ՍՊ-որոշումները եւ դրանց կատարումը.

ՀՀ Նախագահի կողմից ներկայացված 47 դիմումներից 46-ը սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշումներով 2006 թվականին ընդունվել են քննության: Դրանք վերաբերում են միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրության հարցը որոշելուն:

Դրանցից 2-ը 2006թ. չեն քննվել: Մնացած 44-ով սահմանադրական դատարանն ըստ էության որոշումներ է կայացրել, որոնցով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունները ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող:

Նշված 44 միջազգային պայմանագրերի թվում են 22 բազմակողմ (14 ունիվերսալ և 8 տարածաշրջանային: և 22 երկողմ (16 օտարերկրյա պետությունների և 6 միջազգային կազմակերպությունների հետ: համաձայնագրեր: Քննության առարկա դարձած պայմանագրերից 27-ը՝ միջազետական, 16-ը՝ միջկառավարական և 1-ը՝ միջզերատեսչական են:

Քննության առնված 44 պայմանագրերից 39-ը վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից, մնացած պայմանագրերը ուժու չեն ներկայացվել ՀՀ Ազգային ժողով՝ ՀՀ Սահմանադրության 81 հոդվածի երկրորդ կետին համապատասխան կամ դրանց վերաբերյալ ՀՀ Ազգային ժողովը, ՀՀ Սահ-

ՀԱՇՈՐԴՈՒՄ

մանադրության 62 հոդվածի առաջին մասի համաձայն, դեռևս որոշում չի կայացրել:

Անցած տարվա ընթացքում քննության առնված միջազգային պայմանագրերի առնչությամբ իրավակիրառական պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման վիճակի վերաբերյալ ներպետական հատակ մոնիթորինգի մեխանիզմ գոյություն չունի: 2006թ. ընթացքում սահմանադրական դատարան ներկայացված 6 միջազգային պայմանագրերի հայերեն պաշտոնական տարրերակներն էական բովանդակային շեղումներ են ունեցել քնագրերից: Սահմանադրական դատարանի պահանջով այդ թերացումները շտկվել են: Սակայն նման փաստերը վկայում են միջազգային պայմանագրերի վավերացման նախապատրաստման որակի բարձրացման անհրաժեշտության մասին: Միաժամանակ, դատական պրակտիկան, հատկապես մարդու իրավունքների պաշտպանության ու ապահովման հարցերով, քիչ ուշադրություն է դարձնում ՀՀ Սահմանադրության 6 հոդվածի այն դրույթին, համաձայն որի՝ «Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը»: Որպես բնորոշ օրինակ կարելի է նշել «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթների սահմանադրականության հարցի քննության կապակցությամբ ուսումնասիրված՝ ընդհանուր իրավասության դատարանների 49 վճիռներն ու որոշումները:

ՀՀ ԱԺ պատգամավորների առնվազն մեկ հինգերորդի դիմումների հիման վրա ընդունված ՍԴ որոշումներն ու դրանց կատարումը.

Սահմանադրական դատարանում մուտքագրված՝ պատգամավորների առնվազն մեկ հինգերորդի կողմից ներկայացված 2 դիմումներն ել սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշումներով ընդունվել են քննության:

Քննության ընդունված 2 դիմումներից 1-ով որոշումը կայացվել է 2006թ. հոկտեմբերի 7-ին, մյուսով՝ 2007թ. հունվարի 16-ին:

2006 թվականի ընթացքում պատգամավորների առնվազն մեկ հինգերորդի դիմումներով իրավական ակտերի վիճարկող առանձին դրույթներ ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր: «Հայատանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ Հայատանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 35 հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի երկրորդ նախադասությունում ամրագրված դրույթի, 4-րդ ենթակետի, 36 հոդվածի 1-ին կետի՝ Հայատանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 07.11.2006թ. ՍԴ-664 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ ընտրական օրենսգրքի 35 հոդվածի 1-ին կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի եւ 36 հոդվածի 1-ին կետի դրույթները՝ այն մասով, որով նախատեսվում է կենտրոնական եւ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կազմում նշանակել դատավորների, ճանաչել ՀՀ Սահմանադր-

ՀԱՂՈՐԴՈՒՄ

բության 19 հոդվածի 1-ին մասին եւ 98 հոդվածի 1-ին մասին հակասող եւ անվավեր:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի հիման վրա ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի 1-ին մասին եւ 98 հոդվածի 1-ին մասին հակասող եւ անվավեր ճանաչել նաև ՀՀ ընտրական օրենսգրքի 35 հոդվածի 2-րդ կետի եւ 38 հոդվածի 3.1. կետի 1-ին եւ 2-րդ ենթակետերի այն դրույթները, որոնցով նախատեսվում է կենտրոնական եւ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների թափուր տեղերը լրացնել դատավորների թվից:

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 11-րդ մասի պահանջներին համապատասխան՝ անվավեր ճանաչված դրույթների կատարումն ապահոված այլ նորմատիվ ակտերը կամ դրանց համապատասխան դրույթները կորցնում են իրենց իրավաբանական ուժը՝ սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից»:

Սահմանադրական դատարանի որոշումը հիմք ընդունելով՝ ՀՀ Ազգային ժողովը փոփոխություններ է կատարել ՀՀ ընտրական օրենսգրքում:

Անհատական (ֆիզիկական և իրավաբանական անձանց) դիմումների հիման վրա ընդունված ՍՊ որոշումներն ու դրանց կատարումը.

Սահմանադրական դատարանում մուտքագրված 234 անհատական դիմումների մոտ 90 տոկոսը /210 դիմում/ չի ընդունվել սահմանադրական դատարանի կողմից, քանի որ դրանք չեն համապատասխանել «Սահմանադրական դատարանի նախին» ՀՀ օրենքի 27 և 28, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 21 և 22 հոդվածներով սահմանված՝ դիմումին ներկայացվող պահանջներին, և աշխատակազմի կողմից վերադարձվել են դիմումատուներին: Անհատական դիմումների ընդիհանուր վիճակագրության վերլուծությունը վկայում է, որ դրանց 9.9 տոկոսն է օրենքի նորմի սահմանադրականության հարցերին առնչվում: Հիմնական դիմումները վերաբերում են օրենքների կիրառմանն առնչվող հարցերին կամ ընդիհանուր իրավասության դատարանների իրավազորությանը վերաբերող տարրեր այլ հարցերի: Զգալի թիվ են կազմում նաև այն դիմումները, որոնք վերաբերում են նարդկանց սահմանադրական այս կամ այն իրավունքի խախտմանը, սակայն որը չի առնչվում օրենքի նորմի սահմանադրականությանը եւ սահմանադրական դատարանի ներկա լիազորությունների շրջանակներում հնարավոր չէ այն ինքնուրույն դատարնության առարկա դարձնել: Ակնհայտ է նաև, որ ոչ միայն ցածր է դիմումատունների իրավական գիտելիքների մակարդակը, այլև բավարար չէ նրանց ցուցաբերվող փաստաբանական օգնությունը: Այսուհանդերձ, սահմանադրական եւ օրենսդրական ներկա փոփոխություններն ստեղծել են որոշակի հնարավորություններ մարդկանց սահմանադրական արդարադատության իրավունքը երաշխավորելու ու պաշտպանելու համար՝

Սահմանադրական դատարանում մուտքագրված 24 դիմումներ /1-ը՝ իրավաբանական անձի, 23-ը՝ ֆիզիկական անձանց կողմից ներկայացված/ ընդունվել են սահմանադրական դատարանի կողմից և ներկայացվել

ՀԱՇՈՐԴՈՒՄ

դատական կազմերին՝ դրանց հիման վրա գործը քննության ընդունելու հարցը լուծելու համար:

Այդ դիմումներից 17-ն ընդունվել է քննության, ընդ որում, դրանցից 15-ը՝ դատական կազմերի որոշումներով, իսկ 2-ը՝ սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշումներով՝ հաշվի առնելով, որ դատական կազմերում որոշման ընդունման համար չի ապահովվել միաձայնություն: 7 դիմումների քննության ընդունումը մերժվել է՝ հիմնականում «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 7-րդ մասի հիմքերով: Ընդ որում, դրանցից 3-ի քննությունը մերժվել է դատական կազմերի կողմից, իսկ 4-ինը՝ սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշմամբ՝ հաշվի առնելով, որ դատական կազմերում որոշման ընդունման համար չի ապահովվել միաձայնություն:

Քննության ընդունված 17 դիմումներից 7-ով դեռևս ըստ էության որոշում չի կայացվել: 10 դիմումներով, որոնցից երեքը միավորված են եղել համանման պահանջներով երեք այլ դիմումների հետ (7 գործով), սահմանադրական դատարանն ըստ էության որոշումներ է կայացրել: Դրանցից 4 դիմումի հիման վրա իրավական ակտերի վիճարկվող դրույթները ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող, իսկ 6-ով՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող:

2006 թվականի ընթացքում 4 անհատական դիմումները, որոնցով օրենքների վիճարկվող դրույթները ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր, վերաբերում են հետեւյալներին:

1. «Զադ. Մ. Քոչարյանի և քադ. Հ. Դավթյանի դիմումների հիման վրա՝ «Սոցիալական ապահովության քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11 հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր 04.10.2006թ. ՍԴՈ-649 որոշմամբ որոշել է.

«1. «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի 2-րդ մասի դրույթները՝ ՀՀ Սահմանադրության 31, 32 (2-րդ մաս) եւ 37 հոդվածներով ամրագրված իրավունքների իրականացման արգելափակման առումով ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 6 (1-ին, 2-րդ մասեր), 42, 43 եւ 48 (կետ 12) հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 11-րդ մասի պահանջներին համապատասխան՝ անվավեր ճանաչված դրույթների կատարումն ապահոված այլ նորմատիվ ակտերը կամ դրանց համապատասխան դրույթները կորցնում են իրենց իրավաբանական ուժը՝ սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 11-րդ մասի եւ 68 հոդվածի 12-րդ մասի համաձայն սույն որոշումը տարածել դրա ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա ... »:

ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշման առնչությամբ ո՞չ ՀՀ կառավարությունը (օրենսդրական նախաձեռնության կարգով) և ո՞չ

ՀԱՂՈՐԴՈՒՄ

Ել Ազգային ժողովը որևէ օրենքի փոփոխության կամ լրացման վերաբերյալ նախագիծ շրջանառության մեջ չեն դրել, սահմանադրական դատարանն այդ մասին չի տեղեկացվել:

Ֆիզիկական անձանց, գործատուների, պետական կազմակերպությունների մոտ առաջացել է որոշման ոչ միատեսակ ընկալում՝ պայմանավորված պետական տարրեր պաշտոնաների ու մարմինների հրապարակավ արտահայտած կարծիքներով:

Իրավակիրառողների մոտ հիմնականում հանդիպում են հետևյալ մոտեցումները.

ա) նրանց մի մասը շարունակում է իրենց համոզմունքներից ելնելով սոցիալական քարտ չստացած քաղաքացիներից սոցիալական քարտ պահանջել և՝ աշխատանքի ընդունելիս /աշխատանքային պայմանագիրը կնքելիս/, և՝ աշխատավարձը վճարելիս: Սա հիմնականում պայմանավորված է նրանց այն բյուր կարծիքով, որ սահմանադրական դատարանի կողմից ՀՀ Սահմանադրությանը հակառակ և անվավեր ճանաչված օրենքների դրույթների վերաբերյալ որոշումները՝ ընդհանրապես, և ՍԴՈ-649 որոշումը՝ մասնավորապես, ուղղակիորեն իրենց չեն վերաբերում: Նրանց կարծիքով՝ սահմանադրական դատարանի ՍԴՈ-649 որոշմանը պետք է հաջորդի օրենսդիր և գործադիր մարմինների արձագանքը՝ իրավական ակտերում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու առումով, և միայն այդ փոփոխությունները և լրացումներն ուղղակիորեն իրենց կվերաբերեն, իրենք կապահովեն սահմանադրական դատարանի ՍԴՈ-649 որոշման կատարումը միայն նշված օրենսդրական փոփոխությունների միջոցով և արդյունքում, այլ ոչ թե անմիջականորեն: Նման սխալ մոտեցումը նախկինում նույնական դրսեւորվել է, որը, սակայն, պետք է հաղթահարվի, եւ բոլոր իրավակիրառողները պետք է հաշվի առնեն, որ սահմանադրական դատարանի որոշումներն ուժի մեջ են մտնում ու գործում իրապարակման պահից եւ պարտադիր են պետական ու տեղական ինքնակառակարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական եւ իրավաբանական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում (ՀՀ Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մաս, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61 հոդվածի 4-րդ եւ 5-րդ մասեր, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 50 հոդվածի 2-րդ մաս),

բ) մյուս մասը, սահմանադրական դատարանի որոշման սեփական ընկալման արդյունքում, արդեն իսկ հաշվարկված աշխատավարձերը, կենսաբոշակները եւ նպաստները վճարելիս՝ ոչ, սակայն աշխատանքային պայմանագիր կնքելիս, կենսաբոշակ կամ նպաստ նշանակելիս իրենց համոզմունքներից ելնելով սոցիալական քարտ չստացած քաղաքացիներից պահանջում է սոցիալական քարտ:

Անդրադարձալով ստեղծված իրավիճակին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն իր պաշտոնական կայքում շրջանառության մեջ է դրել մի տեղեկություն, որում մասնավորապես նշված է. «Հաշվի առնելով սոցիալական քարտերի կիրառման մասին ֆիզիկական

ՀԱՇՈՐԴՈՒՄ

և իրավաբանական անձանց կողմից բարձրացված հարցադրումները՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը տեղեկացնում է. 1. Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի 04.10.2006 թվականի թիվ ՍԴՈ-649 որոշման՝ ՀՀ Սահմանադրության 31 /վերաբերում է սեփականության իրավունքին/, 32 (2-րդ մաս, վերաբերում է աշխատավարձին) եւ 37 /վերաբերում է սոցիալական ապահովության իրավունքին/ հոդվածներով ամրագրված իրավունքների իրականացման արգելափակման առումով ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր են ճանաչվել միայն «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի 2-րդ մասի դրույթները:

Ըստ այդմ, վճարման են ենթակա հաշվարկված աշխատավարձերը, նշանակված կենսաթոշակները և նպաստները:

2. Սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր չի ճանաչել օրենքով սահմանված այլ գործառույթների իրականացման ժամանակ սոցիալական քարտի պարտադիր կիրառությունը: Այսինքն, համաձայն ՀՀ օրենտրության՝ աշխատանքային պայմանագիր կնքելիս, կենսաթոշակների և նպաստների նոր նշանակումներ կատարելիս, բանկային հաշիվ բացելիս, հարկեր, տուրքեր վճարելիս և այլ դեպքերում պարտադիր կիրառվում է սոցիալական քարտ:

3. Այնուամենայնիվ, ներկայում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը աշխատանքներ է տանում սոցիալական քարտերից հրաժարվող քաղաքացիների համար այլընտրանքային լուծումներ առաջարկելու ուղղությամբ:

Մասնավորապես, սոցիալական քարտից հրաժարվող անձանց հնարավորություն կտրվի իրենց իրավունքներն իրականացնելիս, յուրաքանչյուր դեպքի համար սոցիալական քարտի փոխարեն ներկայացնել սոցիալական քարտ չունենալու մասին տեղեկանք:

Նկատի ունենալով վերը նշվածը, նախարարությունն առաջարկում է քաղաքացիներին ձեռնպահ մնալ սոցիալական քարտերից հրաժարվելուց՝ մինչև խնդրի վերջնական լուծումն ապահովող համապատասխան իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելը»:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ նախ. դատարանն անվավեր եւ ուժը կորցրած է ճանաչել ոչ թե «Սոցիալական ապահովության քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ամբողջությամբ կամ դրա 11 հոդվածն ամբողջությամբ, այլ միայն օրենքի 11 հոդվածի 2-րդ մասի դրույթները՝ կոնկրետ անհատական դիմումի հիման վրա եւ քննության առարկայի շրջանակներում: Երկրորդ՝ հարցը վերաբերել է այն քաղաքացիների սահմանադրական իրավունքներին, որոնք իրենց համոզմունքներից ելնելով սոցիալական ապահովության քարտեր չեն ստացել: Երրորդ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն իրավասու չեն մեկնարանել սահմանադրական դատարանի որոշումը կամ դրա վերաբերյալ պարզաբնումներ տալ: Նախարարությունը պարզապես պետք է կատարեր այդ որոշումը՝ մշակելով ու ներդնելով նաև այլընտրանքային այնպիսի մե-

ՀԱՂՈՐԴՈՒՄ

Խանիզմներ, որով իրենց համոզմունքներից ելնելով սոցիալական քարտ չստացած քաղաքացիներին վերաբերող սոցիալական ապահովության նպատակով անհատական տվյալների հավաքումն իրականացվեր մարդկանց սահմանադրական իրավունքների երաշխավորմամբ։ Ինչ վերաբերում է նշված «մեկնարանությանը», ապա այստեղ չի ներկայացվել հիմնախնդրի բուն էությունը։ Սահմանադրական դատարանը կոնկրետ դիմումների հիման վրա եւ այդ դիմումներում քարձրացված հարցերի շրջանակներում քննելով տվյալ գործը, գտել է, որ օրենքի 11-րդ հոդվածի վիճարկող դրույթը հակասահմանադրական է՝ այնքանով, որքանով որա միջոցով, իրենց համոզմունքներով պայմանավորված սոցիալական քարտ չստանալու պատճառով, խախտվել են դիմումների սահմանադրական իրավունքները։ Դա նշանակում է, որ իրենց համոզմունքներից ելնելով սոցիալական քարտ չստացած քաղաքացիների համար պետք է օրենսդրութեն այլնուրանքային սահմանադրական լուծում գտնվի՝ այդ քարտի գործածության ողջ համակարգի ընդգրկումով, իսկ գործադիրը նրանց նկատմամբ չպետք է կիրառի իրավունքների անհամարժեք ու ոչ սահմանադրական սահմանափակումներ։

2. «Քաղաքացիներ Սոֆիկ Գասպարյանի եւ Արտակ Զեյնալյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160 հոդվածի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 16. 11. 2006 թվականի Ս'Դ-665 որոշմամբ որոշել է. «1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160 հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությունը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակությամբ, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 եւ 19 հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր»։

ՀՀ սահմանադրական դատարանի այս որոշման հետ կապված նույնականութեան ո՞չ ՀՀ կառավարությունում և ո՞չ Էլ Ազգային ժողովի շրջանակներում որևէ օրենքի փոփոխության կամ լրացման վերաբերյալ նախագծի շրջանառության մեջ դրվելու մասին սահմանադրական դատարանը տեղեկացնելու չէ։

Անկախ այդ իրողությունից, սահմանադրական դատարանի որոշմամբ նախ՝ հաղթահարվեց այն իրավիճակը, երբ Հայաստանում գրեթե 7 տարի ընդիմանուր իրավասության դատարանները, որպես կանոն, քննության չեն առնում առանձին ենթաօրենսդրական ակտերի՝ օրենքին համապատասխանության հարցերը եւ համատարած մերժում էին նման դիմումների քննության ընդունումը՝ խախտելով քաղաքացիների՝ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներով ամրագրված իրավունքները։ Սահմանադրական դատարանի որոշումից հետո որեւէ դատարան նման դիմումի քննությունը մերժել այլևս չի կարող։ Երկրորդ՝ իրավաբանական ու ֆիզիկական անձինք կամ նրանց ներկայացուցիչները՝ դեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5.1. բաժնի դրույթներով, նախապատ-

րաստվում են կամ արդեն դիմել են համապատասխան դատարաններին՝ իրենց նկատմամբ ուժի մեջ մտած վճիռների կամ որոշումների՝ նոր հանգամանքներով վերանայման համար։ Կան նաև սահմանադրական դատարան ներկայացված նոր անհատական դիմումներ, որոնցով վիճարկվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի մի շարք դրույթներ, որոնք, դիմողների կարծիքով, դարձյալ խոչընդոտում են Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներով ամրագրված իրենց իրավունքների արդյունավետ իրացմանը։

3. Մի շարք անհատական դիմումների հիման վրա քննված գործերով սահմանադրական դատարանն օրենքների վիճարկող նորմերը ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող։ Սակայն դատարանն իր որոշումների պատճառաբանական մասում արձանագրել է նաև իրավասուր մարմինների այնպիսի գործողություններ ու դրանց նպաստող՝ օրենսդրական քացեր, որոնք խոչընդոտում են մարդկանց սահմանադրական իրավունքների իրարժեք երաշխավորմանն ու ապահովմանը։ Սահմանադրական դատարանը կարեւոր է համարում, որ պետական իշխանության եւ տեղական ինքնակառավարման մարմիններն անհրաժեշտ ուշադրություն դարձնեն նաև այդ հանգամանքին։

Դատարանների դիմումների հիման վրա ընդունված ՍԴ որոշումներն ու դրանց կատարումը.

2006 թվականի ընթացքում դատարանների կողմից ներկայացված միակ դիմումով իրավական ակտի վիճարկող դրույթը ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր։ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի (դատավոր Է. Ավետիսյան) դիմումի հիման վրա քննության առնելով ««Դատավորի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի (18 հոդվածի նոր խմբագրություն) դրույթների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, ՀՀ սահմանադրական դատարանը որոշել է (20.09.2006թ. ՍԴ-647)։

«2004 թվականի մարտի 31-ին ընդունված՝ «Դատավորի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով (18 հոդվածի նոր խմբագրություն) նախատեսված դրույթը, համաձայն որի՝ կենսաբոշակի ամենամսյա հավելավճարի որոշման համար հիմք է ընդունվում դատավորի գրադեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույթաշփի, այլ ոչ թե աշխատավարձի, 75 տոկոսը, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 94 հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող եւ անվավեր»։

Սահմանադրական դատարանի նշված որոշման հիման վրա դեռեւս Ազգային ժողովի կողմից օրենսդրական փոփոխություններ չեն կատար-

ՀԱՂՈՐԴՈՒՄ

Վել, սակայն Երևան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը կոնկրետ գործը քննելիս առաջնորդվել է սահմանադրական դատարանի որոշմամբ:

ՀՀ գլխավոր դատախազի դիմումների հիման վրա ընդունված ՍՊ որոշումները եւ դրանց կատարումը.

ՀՀ գլխավոր դատախազը սահմանադրական դատարան է ներկայացրել մեկ դիմում՝ 2006թ. դեկտեմբերի 29-ին, որը դեռևս գտնվում է քննության նախապատրաստման փուլում:

Մարդու իրավունքների պաշտպանի դիմումների հիման վրա ընդունված ՍՊ որոշումները եւ դրանց կատարումը.

Սահմանադրական դատարանում մուտքագրված՝ մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված 2 դիմումներն էլ սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշումներով ընդունվել են քննության:

Քննության ընդունված 2 դիմումներով էլ սահմանադրական դատարանն ըստ էտորյան որոշում է կայացրել, որոնցով իրավական ակտերի վիճարկող դրույթները ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր:

Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա քննության առնելով «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 218 հոդվածի, Հայաստանի Հանրապետության հոդային օրենսգրքի 104, 106 և 108 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2002 թվականի օգոստոսի 1-ին ընդունված՝ «Երևանի Կենտրոն քաղային համայնքի վարչական սահմանում կառուցապատման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին» թիվ 1151-Ն որոշման՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31 հոդվածին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, ՀՀ սահմանադրական դատարանն իր 18.04.2006թ. ՍԴ-630 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218 հոդվածը՝ հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության հարկադիր օտարման իրավահարաբերությունների կանոնակարգման առումով չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 3, 8 (1-ին մաս), 31 (3-րդ մաս), 43 հոդվածների պահանջներին:

2. ՀՀ հոդային օրենսգրքի՝

ա) 104 հոդվածը՝ հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության հարկադիր օտարման իրավահարաբերությունների կանոնակարգման առումով չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 8 (1-ին մաս), 31 (3-րդ մաս), 43 հոդվածների պահանջներին,

բ) 106 հոդվածը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 31 (3-րդ մաս), 43 եւ 83.5. (1-ին եւ 2-րդ կետեր) հոդվածների պահանջներին,

գ) 108 հոդվածը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 3, 31 (3-րդ մաս) եւ 43 հոդվածների պահանջներին:

3. ՀՀ կառավարության 1 օգոստոսի 2002թ. թիվ 1151-Ն որոշումը՝

ՀԱՂՈՐԴՈՒՄ

«Երեւանի կենտրոն քաղային համայնքի վարչական սահմանում կառուցապատման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին», հիմքում ունենալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218 և ՀՀ հողային օրենսգրքի 104 հոդվածների դրույթները, հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության հարկադիր օտարման իրավահարաբերությունների ենթաօրենսդրական կազմակորման առումով չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 3, 8 (1-ին մաս), 31 (3-րդ մաս), 43, 83.5. (1-ին եւ 2-րդ կետեր), 85 (2-րդ մաս) հոդվածների պահանջներին:

4. Առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի դրույթներով եւ հաշվի առնելով, որ ՀՀ Ազգային ժողովը եւ ՀՀ կառավարությունը պարտավոր են հնարավոր սեղմ ժամկետներում քննության առարկա հիմնախնդրին առնչվող բազմաթիվ իրավական ակտեր ՀՀ Սահմանադրության եւ սահմանադրական դատարանի որոշման պահանջներին համապատասխանեցնել եւ օրենքով հստակ կանոնակարգել բացառիկ՝ գերակա հանրային շահերով պայմանավորված հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման իրավական ռեժիմը, սույն որոշման մեջ ՀՀ Սահմանադրությանը չհամապատասխանող ճանաչված իրավական նորմերի ուժը կորցնելու վերջնական ժամկետը սահմանել օրենքի հիման վրա նման իրավական ռեժիմի ուժի մեջ մտնելու պահը, բայց ոչ ուշ, քան 2006թ. հոկտեմբերի 1-ը»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ ժամկետում ՀՀ կառավարության եւ ՀՀ Ազգային ժողովի կողմից օրենսդրական անհրաժեշտ փոփոխություններ չկատարվեցին՝ քաղաքացիների խախտված իրավունքները վերականգնելու եւ նրանց սեփականության իրավունքի երաշխավորման ու պաշտպանության արդյունավետ նախադրյալներ ստեղծելու առումով:

ՀՀ սահմանադրական դատարանի 18.04.2006թ. ՍԴ-630 որոշման պատճառաբանական մասի 10-րդ կետում, օրենքով բացառիկ՝ գերակա հանրային շահերով պայմանավորված հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման իրավական ռեժիմը սահմանելու նպատակով, սահմանադրական դատարանը նաեւ արտահայտեց հետևյալ դիրքորոշումը, որ «Օրենքը միաժամանակ պետք է նախատեսի, որ սեփականատիրոջ եւ պետության (ի դեմս նրա լիազոր մարմնի) միջեւ կնքվում է գերակա հանրային շահով պայմանավորված՝ հասարակության եւ պետության կարիքների համար գույքի օտարման եւ համարժեք փոխհատուցման պայմանագիր, որում պետք է հստակ շարադրված լինեն վերոհիշյալ պահանջներից բխող երկկողմ պարտավորությունները, ինչպես նաեւ այն պայմանը, որ նման պայմանագրով տրված փոխհատուցումը չի կարող դիտվել որպես հարկվող եկամուտ»:

Ի կատարումն նշված դիրքորոշման, ՀՀ կառավարությունը 2006թ. հոկտեմբերի 26-ին ընդունել է հետևյալ երկու որոշումները.

ա) «Պետության կարիքների համար անշարժ գույքի իրացման գործըն-

ՀԱՂՈՐԴՈՒՄ

քացում քաղաքացիների օգտագործման իրավունքի դադարեցման դիմաց վճարված գումարներից պահված եկամտահարկի վերադարձման առանձնահատկությունները սահմանելու մասին» թիվ 1505-Ն որոշումը,

բ) «ՀՀ 2006 թվականի պետական բյուջեի եկամուտների և ծախսների գումարներն ավելացնելու, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի N 2162-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու, պետության կարիքների համար անշարժ գույքի իրացման գործընթացում քաղաքացիների սեփականության իրավունքի դադարեցման դիմաց դրամական օգնության տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ պետական բյուջեից գումար հատկացնելու մասին» թիվ 1605-Ն որոշումը:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 26.11.2006թ. ընդունվեց օրենք «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին», որն ստորագրվել է ՀՀ Նախագահի կողմից 12.12.2006թ. եւ ՀՀ պաշտոնական տեղեկագրում հրապարակվել 20.12.2006թ.: Սահմանադրական դատարանն այդ օրենքում դատարանի ՍԴՈ-630 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները հաշվի առնելու հարցին այս հաղորդման մեջ չի կարող անդրադառնալ՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջներից ելնելով, քանի որ նման անդրադարձը կարող է դիտվել որպես նախապես հայտնված կարծիք դատարանում հնարավոր քննվելիք գործի հանգամանքների առնչությամբ:

Ընդհանուր հետեւություններ

Դատական սահմանադրական վերահսկողության բնագավառում տարվա արդյունքների ամփոփումից հետեւում է.

I. Սահմանադրական դատարանի որոշումների պատշաճ կատարումը երաշխավորելու համար անհրաժեշտ է օրենսդրության ապահովել, որպեսզի.

ա) սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում հակասահմանադրական ճանաչված ակտն ընդունած պետական մարմինը հատուկ քննության առարկա դարձնի իր կողմից ընդունված ակտը՝ փոխսկապակցված դրույթներով հանդերձ, Սահմանադրության պահանջներին համապատասխանեցնելու հարցը եւ ապահովի, որպեսզի իրավական վակուում չառաջանա,

բ) պետական մարմինները եւ պաշտոնատար անձինք սահմանադրական դատարանի որոշումների կատարումը երաշխավորեն դրանց ամբողջության մեջ, հաշվի առնելով ոչ միայն որոշման եզրափակիչ մասը, այլև պատճառարանական մասում շարադրված իրավական դիրքորոշումները, որոնք սահմանադրական իրավունքի աղբյուր են եւ իրենց բնույթով հանդիսանում են սահմանադրական դրույթների պաշտոնական մեկնաբանություն: Միջազգային սահմանադրական արդարադատության պրակտիկան միարժեքորեն վկայում է, որ սահմանադրական դատարանն իր որոշման մեջ Սահմանադրության նորմի իրավական բովանդակության բացա-

ՀԱՇՈՐԴՈՒՄ

հայտման կամ օրենքի նորմի սահմանադրական բովանդակության բացահայտման միջոցով ձեռակերպում է իր իրավական դիրքորոշումը, որը պարտադիր բնույթ ունի ինչպես իրավակիրառողների, այնպես էլ օրինաստեղծ մարմինների համար,

գ) բացառվեն պետական մարմինների եւ պաշտոնատար անձանց կողմից սահմանադրական դատարանի որոշումների տարաբնույթ մեկնարանությունները: Նման մեկնարանությունները ենթադրում են նաև ճնշում դատարանի վրա, որով խախտվում է դատարանի անկախության սահմանադրական սկզբունքը: Միաժամանակ, եթե որեւէ ֆիզիկական կամ իրավաբանական անձ գտնում է, որ սահմանադրական դատարանի որոշումից հետո այդ որոշման պահանջներն իր նկատմամբ այս կամ այն մարմնի կողմից ճիշտ չեն կիրառվել, ապա պետք է դիմի ընդհանուր իրավասության դատարան՝ պահանջելով հաշվի առնել սահմանադրական դատարանի որոշումը: Ի տարբերություն քաղաքացիների, դատարաններն իրավասու են իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող ցանկացած նորմատիվ ակտի դրույթների սահմանադրականության հարցով դիմել սահմանադրական դատարան: Այս հնարավորությունը պետք է օգտագործվի նաև այն դեպքերում, եթե տարբեր իրավական ակտերով փորձ է արվում շրջանցել սահմանադրական դատարանի որոշման կատարումը:

Հատուկ ուշադրության առարկա պետք է դառնա «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 11-րդ մասի պահանջների կատարումը, համաձայն որի. «Անվավեր ճանաչված նորմատիվ ակտի կատարումն ապահոված այլ նորմատիվ ակտերի համապատասխան դրույթները կորցնում են իրենց իրավաբանական ուժը՝ վիճարկվող ակտի ուժը կորցնելու հետ միաժամանակ»: Այս առումով յուրաքանչյուր պետական մարմին սահմանադրական դատարանի նմանաբնույթ որոշման ուժի մեջ նտնելու պահից իր կողմից ընդունված իրավական ակտերի, այսպես կոչված, գույքագրման հստակ կարգ պետք է սահմանի:

II. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ նոր օրենքի 46 հոդվածի 5-րդ մասը նախատեսում է, որ ՀՀ Նախագահը, Ազգային ժողովը, կառավարությունը, վճռաբեկ դատարանը, մարդու իրավունքների պաշտպանը եւ գլխավոր դատախազը կարող են իրենց ներկայացուցիչներն ունենալ սահմանադրական դատարանում, որոնք նախապես ծանոթանալով քննվող գործերի նյութերին, մասնակցելով դատավարությանը, անհրաժեշտության դեպքում դատաքննության ընթացքում տալով պարզաբանումներ, ոչ միայն կնպաստեն արդյունավետ սահմանադրական արդարադատության իրականացմանը, այլև կարենու դեր կարող են իրականացնել սահմանադրական դատարանի որոշումների կատարումն ապահովելու գործում: Ներկայումս դեռեւս ներկայացուցչական այս ինստիտուտը չի ձեւավորվել: Սակայն միջազգային փորձը վկայում է, որ այն լուրջ ներուժ ունի եւ հարկավոր է ներկայացուցիչների տվյալ ինստիտուտի հնարավորությունները պատշաճ ձեւով օգտագործել:

ՀԱՂՈՐԴՈՒՄ

III. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 40 հոդվածը սահմանում է. «Հոդված 40. Սահմանադրական դատարանի պահանջները»

1. Սահմանադրական դատարանը, իսկ գործը դատաքննության նախապատրաստելու կապակցությամբ նաև սահմանադրական դատարանի կողմից որպես տվյալ գործով գեկուցող նշանակված սահմանադրական դատարանի անդամը (անդամները: սահմանադրական դատարանի նախագահի գիտությամբ իրավասու է (են: պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններից, դրանց պաշտոնատար անձանցից պահանջելու փաստաթղթեր, եզրակացություններ եւ այլ նյութեր, հանձնարարելու կատարել ստուգումներ, ուսումնասիրություններ, փորձաքննություններ, հետազոտություններ, իսկ ֆիզիկական եւ իրավաբանական անձանցից՝ պահանջելու նրանց տրամադրության տակ գտնվող նյութեր:

2. Սահմանադրական դատարանի եւ գեկուցողի պահանջները եւ հանձնարարականները (այսուհետ՝ պահանջ) պետք է կատարվեն սահմանադրական դատարանի կամ գեկուցողի սահմանած ժամկետում:

Եթե այդ ժամկետում սահմանադրական դատարանի կամ գեկուցողի պահանջների կատարումն անհնարին է, ապա պահանջի հասցեատերը պարտավոր է պահանջի կատարման ժամկետը լրանալուց ոչ ոչ, քան երեք օր առաջ սահմանադրական դատարանին կամ գեկուցողին գրավոր իրագեկել ժամկետը երկարաձգելու անհրաժեշտության մասին: Սահմանադրական դատարանը եւ գեկուցողը կարող են երկարաձգել պահանջի կատարման ժամկետը կամ պահանջները վերահասցեագրել մեկ այլ մարմնի (անձի): Հակառակ դեպքում ուժի մեջ է մնում սահմանադրական դատարանի կամ գեկուցողի արդեն իսկ սահմանած ժամկետը:

3. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սահմանադրական դատարանի պահանջները չկատարվելու կամ ոչ պատշաճ կատարվելու, դրանց կատարումից խոսափելու կամ կատարման ժամկետները խախտելու դեպքում սահմանադրական դատարանն այդ մարմինների պաշտոնատար անձանց նկատմամբ կարող է նշանակել օրենքով սահմանված պատասխանատվության միջոց:

Պատասխանատվության միջոցի նշանակումը չի ազատում սահմանադրական դատարանի պահանջների կատարումից:

Սույն մասում նշված գործողությունների կամ անգործության համար ֆիզիկական անձինք կամ իրավաբանական անձի դեկավարը կարող են սուլգանվել՝ օրենքով սահմանված չափով:

4. Պատասխանատվության միջոց նշանակվելուց հետո սահմանադրական դատարանի պահանջները վերատիմ չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կամ դրանց կատարումից խոսափելը կամ կատարման ժամկետները խախտելն առաջացնում է քրեական պատասխանատվություն»:

Սույն հոդվածի պահանջների կատարումը ձեւական բնույթ է կրում, որովհետեւ օրենքով սահմանվելիք նշված պատասխանատվության միջոցները դեռեւս սահմանված չեն:

IV. Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61 հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ «Սահմանադրական դատարանի գործով ըստ եռյան ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական եւ իրավաբանական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում»։ Միաժամանակ, օրենքի 66 հոդվածը սահմանում է. «**Հոդված 66. Որոշումը չկատարելու հետևանքները**

Սահմանադրական դատարանի որոշումը չկատարելը, ոչ պատշաճ կատարելը կամ կատարմանն արգելք հանդիսանալն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն»։

Այս նորմը նույնապես շարունակում է հիմնականում դեկլարատիվ բնույթ կրել, քանի որ նյութական եւ դատավարական իրավունքի նորմերով որոշակիացված չէ։ Միաժամանակ, իրավաստեղծ բոլոր մարմինները մշտապես ուշադրության կենտրոնում պետք է ունենան այն հանգանանքը, որ Հայաստանի Հանրապետությունում չի կարող ընդունվել որեւէ օրենք կամ այլ իրավական ակտ, որը հակասում է ՀՀ սահմանադրական դատարանի որոշմանը։ Այս հանգանանքը հստակ ամրագրված է նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածում, որի 2-րդ մասում, մասնավորապես, նախատեսվում է. «Օրենքները չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, գործող օրենքներին, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներին»։ Ենթաօրենսդրական ակտերի առումով նույն պահանջներն ամրագրված են տվյալ օրենքի 12-14-րդ հոդվածներում։

V. Սահմանադրական արդարադատությունը սահմանադրական վերահսկողության ձեւերից միայն մեկն է։ Սահմանադրության գերակայության երաշխավորման հարցում դատական սահմանադրական վերահսկողության հետ մեկտեղ կարեւոր դերակատարություն ունեն սահմանադրական բոլոր ինստիտուտները, որոնք ընդունում են իրավական ակտեր կամ հանդես են գալիս որպես սահմանադրական դատարան դիմող սուբյեկտներ։ Սահմանադրության գերակայության երաշխավորման տեսանկյունից երկու դեպքում էլ առկա են լուրջ խնդիրներ։ Նախ՝ 2005թ. սահմանադրական փոփոխություններն այս կամ այն չափով առնչվեցին ՀՀ Սահմանադրության 2/3-ից ավելի դրույթների։ Ակնհայտ է, որ այդ փոփոխություններից հետո իրավական ամրող դաշտը Սահմանադրությանը համապատասխանեցնելու ծրագրավորված, համակարգված ու հետևողական աշխատանք պետք է տարբեր։ Դա վերաբերում է թե՛ օրենքներին եւ թե՛ ենթաօրենսդրական ակտերին։ Սահմանադրական դատարանում տարբեր գործերով իրավակիրառական պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ այս աշխատանքներն արդյունավետ ու առավել համակարգված իրականացման կարիք ունեն։ Սահմանադրության ընդու

ՀԱՂՈՐԴՈՒՄ

նումից մեկ տարի է անցել, սակայն այս ոլորտում ծավալուն աշխատանքը դեռ առջեւում է:

Երկրորդ՝ Սահմանադրության գերակայության ու անմիջական գործողության երաշխավորման համար էական դեր ունի սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների ակտիվությունը: Օրինակ, Լիտվայի սահմանադրական դատարանի գործունեության ուսումնասիրությունը վկայում է, որ քննվող գործերի 74 տոկոսն ընդհանուր իրավասության դատարանների դիմումների հիման վրա է իրականացվում: Հայաստանի Հանրապետությունում դատարանները մեկ տարվա ընթացքում սահմանադրական դատարան են դիմել միայն մեկ անգամ: Պատգամավորների 1/5-ը դիմել է երկու գործով, մարդու իրավունքների պաշտպանը՝ նույնպես երկու գործով, ՀՀ գլխավոր դատախազը՝ մեկ գործով, իսկ մեկ տարվա ընթացքում ՀՀ կառավարությունը եւ տեղական ինքնակառավարման մարմինները դեռևս սահմանադրական դատարան չեն դիմել: Սա այն դեպքում, եթե ներկայում փոփոխված Սահմանադրության եւ գործող իրավական ակտերի միջեւ անհամապատասխանության լուրջ խնդիրներ են առկա:

Մեզանում շատերի մոտ առկա է այն հոգերանությունը, որ սահմանադրական դատարան դիմելն այս կամ այն անձի կամ մարմնի դեմ է ուղղված: Իրավական պատշաճ մշակույթը պահանջում է նկատի ունենալ, որ սահմանադրական դատարանն իրավունքի դատարան է եւ նրան դիմելը միմիայն նպատակ պետք է ունենա երաշխավորել Սահմանադրության գերակայությունը եւ անմիջական գործողությունը: Ուստի անհրաժեշտ է նաև հոգերանական այդ արգելվն հաղթահարել եւ հաշվի առնել այն իրողությունը, որ արդյունավետ սահմանադրական արդարադատություն իրականացնելու համար անհրաժեշտ է երկրում ապահովել սահմանադրական ժողովրդավարության համարժեք միջավայր: Նման պարագայում ճիշտ կը նկալի նաև Սահմանադրության 5 հոդվածի իրավական բովանդակությունը, եւ դատարանը կը նկալի որպես պետական իշխանություն իրականացնող ինքնուրույն եւ անկախ մարմին, այլ ոչ թե որպես պետականական այլ լիազորություններ ունեցող ինստիտուտներին աջակցող ինստիտուտ:

VI. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 7-րդ մասը սահմանում է, որ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով նախատեսված գործերով որոշում ընդունելիս՝ «...սահմանադրական դատարանը պարզում է վիճարկվող ակտի կամ վերջինիս առանձին դրույթների համապատասխանությունը Սահմանադրությանը՝ մասնավորապես հաշվի առնելով՝

- 1) իրավական ակտի պահանջվող տեսակը.
- 2) իրավական ակտն ընդունելու եւ գործողության մեջ դնելու Սահմանադրությամբ նախատեսված կարգի պահպանվածությունը.
- 3) մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրա-

ՀԱՇՈՐԴՈՒՄ

Վունքների ու ազատությունների ապահովման եւ պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների թույլատրելիությունը.

4) Սահմանադրությամբ նախատեսված՝ իշխանությունների բաժանման եւ հավասարակշռման ապահովածությունը.

5) պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների եւ դրանց պաշտոնատար անձանց լիազորությունների թույլատրելի սահմանները.

60 Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը»:

Նման պահանջը ոչ միայն ենթադրում է ըստ ձեւի եւ ըստ բովանդակության սահմանադրական վերահսկողություն իրականացնելու անհրաժեշտությունը, այլև հասուլ ընդգծում է, որ իրավական ակտը գնահատելիս պետք է հաշվի առնել, թե ինչպես են տվյալ ակտում իրացվել սահմանադրական իիմնական նորմ-նպատակների եւ նորմ-սկզբունքների պահանջները: Դրանք առաջին հերթին վերաբերում են Սահմանադրության սահմանադրական կարգի հիմունքներում ամրագրված 1-5 հոդվածների հիմնարար դրույթներին:

Նման պահանջն ամբողջությամբ պետք է վերաբերի նաեւ օրինասեղծ եւ իրավակիրառ բոլոր մարմիններին:

Միջազգային սահմանադրական պրակտիկան վկայում է, որ ժողովրդական զարգացման ուղի ընտրած երկրների համար առանցքային նշանակություն ունի հասարակական հարաբերությունների սահմանադրականացումը: Դա իր հերթին նշանակում է ոչ միայն իրավական համակարգում Սահմանադրության գերակայության երաշխավորում, այլև Սահմանադրության անմիջական գործողության ապահովում: Սահմանադրական ժողովրդավարությունն առկա է այնտեղ եւ այն չափով, որտեղ եւ որ չափով Սահմանադրությունը դառնում է ապրող իրողություն, ձեւավորվում է սահմանադրական այնպիսի մշակույթ, երբ հասարակական հարաբերությունների բոլոր դորտներում սահմանադրական արժեքները, նորմերն ու սկզբունքները հիմնարար ու գործուն նշանակություն են ստանում: Սահմանադրական արդարադատության պրակտիկան վկայում է, որ այս առումով լորջ խնդիրներ կան մեր երկրում՝ ինչպես իրավական ակտերի որակի բարձրացման, այնպես էլ արդարադատական պրակտիկայում Սահմանադրության անմիջական գործողության ապահովման ուղղությամբ:

Սահմանադրական դատարանի համար ելակետային նշանակություն ունի իրավունքի գերակայության երաշխավորումը, եւ այդ առնչությամբ դատարանի որոշումներում ձեւավորված իրավական դիրքորոշումը բխում է Սահմանադրության 3-րդ հոդվածի դրույթների իրավական բովանդակությունից: Սակայն սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավակարգավորման պրակտիկայում դեռևս խորությամբ չեն ընկալվել, որ

ՀԱՂՈՐԴՈՒՄ

«Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները եւ ազատությունները բարձրագույն արժեքներ են:

Պետությունն ապահովում է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Պետությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

Հատուկ ուշադրության առարկա պետք է լինի նաև Սահմանադրության 43 հոդվածի այն դրույթը, համաձայն որի՝ «Մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները»: Դրա անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ, ինչպես վկայում են սահմանադրական դատարանում գործերի քննության արդյունքները, ձեւավորված իրավակիրառական պրակտիկան, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63 հոդվածի հիման վրա գնահատելու շրջանակներում ընդհանուր իրավասության դատարանների կողմից ընդունված բազմաթիվ վճիռների ու որոշումների ուսումնասիրությունը, թե՛ օրենսդրական եւ թե՛ իրավակիրառական պրակտիկայում այս հարցերին դեռևս իրավական պետության պահանջներին համարժեք պատշաճ ուշադրություն չի դարձվում:



ԼՐԱՑԱՎ ՀՅ ՍԴ ՏԵՂԵԿԱԳՐԻ ԼՈՒՅՍԸՆԾԱՅՄԱՆ 10 ՏԱՐԻՆ

* 1996թ. դեկտեմբերի 18-ին, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 55 աշխատակարգային որոշմամբ, ՍԴ տեղեկագրի նախապատրաստման և հրատարակման նպատակով ստեղծվեց Խմբագրական խորհուրդ: Նույն օրը՝ թիվ 56 աշխատակարգային որոշմամբ, հաստատվեց ՍԴ տեղեկագրի զիմանակը՝ Խմբագիրը:

* 1996թ. դեկտեմբերի 20-ին, ՀՀ արդարադատության նախարարության թիվ 37/2-14 որոշմամբ, նախարարությունում գրանցվեց տեղեկագրի կանոնադրությունը:

* 1997թ. փետրվարի 6-ին, ՀՀ սահմանադրական դատարանի կազմավորման օրվանից ուղիղ մեկ տարի հետո, լույս տեսավ ՀՀ ՍԴ եռամսյա պարբերականի առաջին համարը՝ 4 տպագրական մամուլ ծավալով: 2002 թ-ից տեղեկագիրը հրատարակվում է 6 մամուլով:

Տասնմեկ տարի առաջ, նոր կազմավորված ՀՀ սահմանադրական դատարանը կոչված էր դատնալու մեր նորանկախ հանրապետության կայուն առաջընթացի կարևոր երաշխիքներից մեկը, նպաստելու քաղաքացիական հասարակության ձևավորմանը, իրավունքի գերակայության հաստատմանը, ինքնիշխան Հայաստանի զարգացմանը՝ ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետության կայացման ճանապարհով:

Անցյալ տարի, ՀՀ սահմանադրական դատարանի տասնամյա հորելյանին նվիրված միջոցառումներն առիթ հանդիսացան ամփոփելու և գնահատելու հայ նոր իրականության մեջ ծնված, իր նախատիպը չունեցող, սահմանադրական արդարադատության առաջին կառույցի գործունեությունը: Արդյունքում արձանագրվեց դատարանի հետագա գործունեության համար պարտավորեցնող այն փաստը, որ գործելով անկատար օրենսդրական լիազորությունների շրջանակում, ՀՀ սահմանադրական դատարանը կայացել, ինքնահաստատվել ու միջազգային լայն ճանաչման է արժանացել: Այդ արդյունքին, մեր երկրում սահմանադրական արդարադատություն իրականացնող կառույցը, հասել է գործելով լայն հրապարակայնության պայմաններում՝ առավելագույնս օգտագործելով ընձեռված հնարավորությունները, երկրում սահմանադրական արդարադատության արմատավորման, Սահմանադրության գերակայության երաշխավորման, այդ ոլորտում իրականացվող միջազգային գործընթացների գործուն մասնակիցը լինելու, սահմանադրական մտածողություն ու մշակույթ ձևավորելու ճանապարհով:

Օրենսդրությանք նախատեսված լիազորությունների հետ մեկտեղ, այս ամենն իրականացվել է արտասահմանյան տարբեր երկրների սահմանադրական իրավունքի ճանաչված մասնագետների, միջազգային կառույցների հետ համագործակցության, փորձի փոխանակումների, սեմինարների ու կոնֆերանսների կազմակերպման, մասնագիտական ու հանրամատչելի գրականության, պարբերականների ու հանդեսների լույսընծայման, ավանդույթ դարձած «Սահմանադրություն և իրավունք» հանրապետական օլիմպիադային մասնակցող աշակերտներին և ուսանողներին սահմանադրական մտածողությանն ու մշակութային արժեքներին, սահմանադրական արդարադատության հիմնախնդիրներին ու առանձնահատկություններին հաղորդակից դարձնելու միջոցով:

ՀՀ ՍԴ-ի գործունեությունը հասարակությանը ներկայացնելուն էր կոչված դատարանի տեղեկագիրը:

ՀՀ ՍԴ տեղեկագրի 42 համարներում՝ «Վերլուծական նյութեր», «Երիտասարդ գիտնականի ամբիոն», «ՀՀ ՍԴ որոշումները», «Միջազգային լրատու», «Մարդու իրավունքների պաշտպանություն», «Տեղեկատվություն», «ՀՀ սահմանադրական դատարանում», «Նոր գրքեր» և այլ խորագրերի ներքո տպագրվել են ՀՀ ՍԴ 657 որոշումներ, 500-ից ավելի գիտավերլուծական, ճանաչողական և տեղեկատվական հոդվածներ, նամակներ, ինչպես նաև մարդու իրավունքների եվրոպական դատարանի, արտասահմանյան երկրների սահմանադրական արդարադատության մարմինների մի շարք որոշումներ:

ՀՀ ՍԴ տեղեկագրի էջերում հանդես են եկել ՀՀ ՍԴ անդամները, իրավագիտության տարբեր ճյուղերի ճանաչված մասնագետներ, իրավագիտության ասպարեզ նոր մուտք գործող երիտասարդներ: Գիտավերլուծական հոդվածներում շոշափվել են թե՛ սահմանադրական իրավունքի ու իրավագիտության ընդհանուր հարցեր, և թե՛ մեր հանրապետությունում սահմանադրական իրավունքի զարգացման, սահմանադրական արդարադատության և վերահսկողության տեսական ու կիրառական մի շարք հիմնախնդիրներ:

Սահմանադրական դատարանի առջև դրված խնդիրները և տեղեկագրում տպագրված հոդվածներում շոշափված հարցերն ավելի ամբողջական պատկերացնելու համար, հարկ է նշել, որ եթե նախորդ հարյուրամյակում սահմանադրական դատարանները, որպես իրավական ժողովրդավարության ու քաղացիական հասարակության ինստիտուտներ, Աևմտաելիրոպական երկրներում կայացան ու զարգացան հարուստ իրավական մշակույթի, անհրաժեշտ հասարակական իրավագիտակցության, ձևավորված ժողովրդավարական ավանդույթների ու արժեքների, հստակ գործող պետական մեխանիզմների բարենպաստ միջավայրում, ապա՝ մեր երկրում պատկերը բոլորովին այլ էր:

Սիա թե ինչու, ՀՀ ՍԴ տեղեկագրում տպագրված հոդվածներում արտացոլված են անցումային փուլերում գտնվող երկրների համար քննութագրական այն հիմնախնդիրներն ու խոշընդոտները, որոնք, սեփական գործունեությունն ավելի արդյունավետ դարձնելու համար, ՀՀ սահմանադրական դատարանը պիտի հաղթահարեր, անցնելով՝ երկրում սահմանադրական արդարադատության համակարգային կայացման, ժողովրդավարական արժեքների ու իրավական պետության սկզբունքների արմատավորման համար հայեցակարգային մոտեցումներ առաջարկելու դժվարին ճանապարհը:

Այդ ուղին սկսվեց իրավունքի գերակայության երաշխավորման վարդապետության որոնքը ճանաչելով մարդու իրավունքները որպես բարձրագույն արժեք, անօտարելի ու անմիջականորեն գործող իրավունք, որպես իշխանության սահմանափակման սահմանադրական հենք, որն իր արտացոլումը գտավ 2005թ-ի ՀՀ սահմանադրական փոփոխություններում:

Ինչպես հայտնի է, 2005 թվականին ՀՀ Սահմանադրությունում կատարված փոփոխությունների արդյունքում՝ ընդլայնվեց սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների շրջանակը, իսկ 2006թ. հունիսի 1-ից ուժի մեջ մտավ նաև ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետը, որի համաձայն ՀՀ ՍԴ կարող է դիմել յուրաքանչյուր ոք (ֆիզիկական և իրավաբանական անձինք):

2006թ. հունիսի 1-ից ուժի մեջ մտած «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ նոր օրենքի 62-րդ հոդվածի 7-րդ կետով ընդունվեց նաև հատուկ կարծիքի ինստիտուտը, որի համաձայն, Սահմանադրության 100 հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված գործերով որոշում ընդունելիս, ՍԴ անդամը կարող է ներկայացնել հատուկ կարծիք՝ որոշ-

ման ինչպես եզրափակիչ, այնպես էլ պատճառաբանական մասի վերաբերյալ, որը դատարանի որոշման հետ հրապարակվում է ՍԴ տեղեկագրում: Այս համարում, առաջին անգամ, ՍԴ-Ը-649-ի հետ ներկայացվում է նաև ՀՀ ՍԴ անդամներ Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի և Ֆ. Թոխյանի հատուկ կարծիքը:

ՀՀ ՍԴ տեղեկագրի խմբագրությունը, պարբերականի լույսընծայման տասնամյակի կապակցությամբ, շնորհավորում և շնորհակալություն է հայտնում բոլոր նրանց, ովքեր իրենց հոդվածներով, խորհուրդներով, առաջարկություններով ու դիտողություններով աջակցել են տեղեկագրի լույսընծայմանը:

Գ. ՈՉՏՈՒՆԻ

Туманян Кристинэ

Специалист-методист Научно-учебного центра Генеральной прокуратуры РА, соискатель Института философии, социологии и права НАН РА

ПСИХОЛОГИЯ ТЕРРОРИЗМА*

Международное сообщество на сегодняшний день еще не выработало унифицированного и общепризнанного определения понятия «терроризм». Различные подходы как в юридической, так и в политической науке и практике к определению терроризма обусловлены как сложностью этого опасного социально-политического явления, так и сохраняющимися до сих пор противоречивыми интересами членов международного сообщества, различных социальных групп и отдельных государств. Обобщенно современный терроризм можно определить как систему использования насилия для достижения политических целей посредством принуждения государственных органов, международных и национальных организаций, государственных и общественных деятелей, отдельных граждан или их групп к совершению тех или иных действий в пользу террористов, для того чтобы избежать реализации последними угроз по отношению к определенным лицам или группам, объектам жизнеобеспечения общества, источникам повышенной опасности для людей или окружающей среды.

Понятия «террор» и «терроризм» вошли в политический лексикон чуть более двух столетий назад, но сами эти явления существовали и в глубокой древности. Насилием сопровождалась вся история человечества, в том числе и в тех формах, которые сегодня характеризуются как террор и терроризм. Многие правители древности и средневековья применяли насилие в отношении неугодных им лиц или групп для запугивания и уничтожения. Известно много примеров деспотического и тиранического правления, использования правящими элитами террористических методов для сохранения своего господствующего положения. Однако насилие, применявшееся властью, вызывало сопротивление со стороны тех, против кого оно было направлено, и

* Статья публикуется в авторской редакции

ЧЕРНОБИЛЬ И ТЕРРОРИЗМ

порождало действия весьма похожие на акции современных террористов.

В настоящее время терроризм представляет угрозу стабильности многих стран мира.

Генеральный секретарь ООН Кофи Анан охарактеризовал возникшую перед мировым сообществом нарастающую угрозу следующим образом: *"Терроризм наносит удар по самой сути ценностей, которые защищает ООН. Он представляет собой глобальную угрозу демократии, принципу верховенства права, правам человека и стабильности. В условиях глобализации нам важно добиться реального согласования международных усилий по борьбе с терроризмом во всех его формах проявления"*.

Насилие, в общем, и, в частности, терроризм, занимая важное место в политической истории человечества, с древнейших времен и по сей день рассматриваются субъектами политики как одни из основных, хотя и крайних, но неизбежных, не очень желательных теоретически, но достаточно удобных практических средств достижения своих целей. Об этом свидетельствовали еще древние греки: "Если в речи Перикла только лишь признается тиранический характер афинского господства над союзниками, то в выступлении Клеона свойственный тирании террор объявляется уже единственным возможным способом сохранения этого господства, а в ультиматуме афинских представителей жителям маленького островка Мелоса откровенно и цинически провозглашается *profession de foi* насилиников - их убеждение в санкционированном будто бы самою природою праве сильного на власть"¹.

Вместе с тем понятно, что использование насилия несет с собой серьезные деструктивные последствия: гибель людей, разрушение материальных ценностей, дегуманизацию социальных отношений. Однако это мало кого и когда останавливало².

Терроризм, прежде всего как форма насилия, является составной частью социально-политической жизни. "Насилие, как способ принуждения, в той или иной степени, присуще любому обществу"³.

При психологическом исследовании такого сложного социального явления как терроризм необходимо рассмотреть все факторы, прямо и косвенно влияющие на возникновение и развитие этого явления.

Терроризм возникает и развивается в результате взаимодействия многих факторов, имеющих исторические, этнопсихологические, политические и другие корни. Возникновению и развитию терроризма способствуют слабость государственного аппарата и, в частности, кор-

1 Фролов Э.Д. Огни Диоскуров. античные теории переустройства общества и государства. - Л., 1984. - С. 29.

2 Подробнее об этом см.: Ольшанский Д.В. Психология террора. - Екатеринбург: "Деловая книга". - М.: Академический Проект, ОППЛ, 2002. - С. 18-20.

3 Политическая психология / Под. общ. ред. Деркача А.А., Жукова В.И., Лаптева Л.Г. - М., 2001. - С. 355.

румпированность чиновников, низкий профессионализм спецслужб, крупные просчеты в области внешней и внутренней политики, игнорирование этнопсихологических закономерностей, истории, а также низкая правовая культура общества.

Чтобы понять причины массового терроризма, необходимо осознавать две главные реалии. Во-первых, в современном сложном мире это наиболее эффективная форма боевых действий. Во-вторых, истинные цели организаторов террористических актов практически никогда не совпадают с "мнимыми" целями, стоящими перед конкретными исполнителями, и с теми "внешними" эффектами терактов, которые видит широкая общественность⁴.

Терроризм появляется, когда общество переживает глубокий кризис, в первую очередь - кризис идеологии и государственно-правовой системы. В таком обществе появляются различные оппозиционные группы: политические, социальные, национальные, религиозные, - для которых становится сомнительной законность существующей власти и всей ее системы управления. Если такие группы придут к выводу, что добиться своих целей законным путем нельзя, они могут попытаться достигнуть желаемого через насилие, т.е. терроризм. При этом моральным оправданием убийств оппозиция будет, разумеется, считать высокую важность и чистоту своих целей⁵.

Два обстоятельства сделали терроризм необычайно эффективным и "широко потребительным" оружием именно в XX-XXI веках.

Прежде всего, этому способствовал технологический рывок: невиданное ранее развитие высоких технологий и создание глобальных технологических систем и сетей (железные дороги, сеть авиалиний, электроэнергетика, ядерные технологии, компьютерные сети и т.д.). Западный мир сейчас полностью зависит от них. Еще полтора века назад на Земле просто не существовало таких объектов, разрушение которых могло бы парализовать жизнь в большой стране. А сегодня эти объекты имеются в огромном количестве⁶.

Взрыв одной электрической подстанции может повергнуть в полный хаос движение на железных дорогах или воздушное сообщение. Химическое отравление воздуха в метро (как показала secta "Аум-Синрике", осуществившая теракт с применением газов в токийском метрополитене⁷) способно не только повлечь десятки и тысячи человеческих жертв, но и вызвать в обществе полную панику. Заброс опас-

⁴ См.: Шестаков В. Террор - мировая война. - М.: "ОЛМА-ПРЕСС", 2003. - С. 7.

⁵ См.: Варчук Т.В. Криминология. - М.: "ИНФРА-М", 2002. - С. 207.

⁶ См.: Шестаков В. Террор - мировая война. - М.: "ОЛМА-ПРЕСС", 2003. - С. 10.

⁷ Утром 20 марта 1995 года, в час пик, пять вагонов на трех линиях токийского метрополитена были заряжены при помощи маленьких пакетиков, в которых был газ зарин. Итог: 12 убитых и более 5000 раненых или тяжелобольных. Через несколько недель после акта терроризма secta "Аум-Синрике" ("Высшая Истина"), руководимая Секо Ассахара, взяла на себя ответственность за данный акт. Вскоре в нескольких километрах от горы Фудзи полицейские обнаружили мастерскую, где изготавлялся отправляющий газ зарин.

ЧԵՐԼԻԾՎԱՆ ԱՅԼԻՔ

ной инфекции в один единственный водонакопитель способен возбудить эпидемию не только в одном городе, но и во многих странах мира, куда уехали заразившиеся... И рассылка безобидного лабораторного штамма сибирской язвы, не приспособленного для ведения бактериологической войны, покажется детской игрой в сравнении с боевыми образцами бактериологического оружия или компьютерными вирусами, уничтожающими системы автоматического контроля на атомных электростанциях.

Но дело не только в этом... "Тerrorизm силен не числом и умением, а ОБЩЕСТВЕННЫМ МНЕНИЕМ", - справедливо отмечает английский философ Ян Шрайбер⁸. "Тerrorизm вызывает сложный комплекс - ненависти, восхищения, отчаяния, надежды и страха. Это - крикое зеркало, но с мощным усилителем", - говорит он, под "усилителем" имея ввиду масс-медиа. Ведь действительно, сегодня акты терроризма приобретают глобальный характер благодаря работе средств массовой информации и прежде всего электронных СМИ. Они мгновенно разносят известия об актах терроризма (обычно по-разному искаженные) по всему миру. Из самого страшного явления они деляют шоу. Ведь кошмар рушащихся нью-йоркских небоскребов наблюдал по телевидению и в сети интернета весь мир, и поэтому весь мир без исключения был подвергнут террору. Человечество явно вступает в fazu нового переустройства жизни, и тут первую роль будет играть терроризм, как универсальный инструмент запугивания наций и сообществ. Конечно же, ни телевидение, ни интернет не виноваты в этом безумном торжестве террора. Они просто создают благоприятную среду для распространения информации об актах терроризма.

Механизм терроризма заложен в человеке очень глубоко, замаскирован пластами словесных обоснований. Чаще всего террористическим действиям дает толчок чувство безвыходности из той ситуации, в которой оказалось некое меньшинство, психологический дискомфорт, который побуждает его оценивать свое положение как драматическое⁹. При этом меньшинство может быть как национальным (например, баски, корсиканцы, ирландцы), так и объединяющимся по каким-то идеологическим убеждениям или религиозным мотивам. Но во всех случаях мотивация схожая: наш народ, наша культура, наш язык, наша вера на грани исчезновения, а поскольку наши доводы "никому не интересны", остается лишь один путь - насилие.

Для личности террориста характерно негативное мироощущение, которое возникает под воздействием ряда факторов. Для личности террориста характерна позиция "Я хороший - мир плохой", которая становится средством моральной самозащиты, позволяющей оправдать свои действия. При этом у террориста зарождается новая концеп-

⁸ С 1976 года Шрайбер работает в криминологическом центре в Гарварде.

⁹ См.: Васильев В.Л. Юридическая психология. - 5-е изд., доп. и перераб. - СПб.: "Питер", 2005. - С. 380-381.

ЧԵՐԼՈՒԾՎԱՆ ԱՅՈՒԹԵՐ

ция уверенности в своей правоте, которая сводит к минимуму возможности позитивного воздействия на террористическую группу и отдельного террориста. Эмоции, возникающие при этом у террориста, как правило, агрессивны и стеничны. На этой почве возникают деструктивные культуры как система мировоззрения и мироощущения. В основе их детерминации лежат этнопсихологические противоречия, связанные с несовместимостью различных этносов. Ядро этих культов, как правило, составляют искренние фанатики, готовые идти на смерть ради своих убеждений¹⁰.

Независимо от того, какими мотивами руководствуются террористы, какие цели они ставят перед собой и какие идеи выдвигают, терроризм - это несомненное зло, угроза для общества в целом и для каждого отдельного человека. В современном мире терроризм несет человечеству как старые, так и новые опасности. В связи с этим весьма актуальной задачей сегодня является задача противодействия терроризму.

¹⁰ См. там же.



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՅԻ ԱՐԱՄ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-ԻՆ
ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻ ՎԱՐԱՐ
ՕՐԵՆՍԳՐՖԻ 470 ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԸ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

26 սեպտեմբերի 2006թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (գեկուցող), Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, մասնակցությամբ՝ դիմոն՝ քաղ. Ա. Մարտիրոսյանի, նրա լիազոր ներկայացուցիչ Է. Խաչիկյանի եւ պատասխանող կողմի ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի օրենսդրության վերլուծության եւ զարգացման վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25 եւ 69 հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Արամ Մարտիրոսյանի դիմումի հիման վրա՝ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի մայիսի 5-ին ընդունված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 470 հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Ահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Արամ Մարտիրոսյանի դիմումն է սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործի նյութերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998թ. մայիսի 5-ին: Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից այն ստորագրվել է 1998թ. հունիսի 28-ին եւ, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի համաձայն, ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 1-ից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 470 հոդվածը բաղկացած է 5 կետից եւ սահմանում է.

«1. Առուվաճառքի պայմանագրով կողմերից մեկը (վաճառողը) պարտավորվում է մյուս կողմին (գնորդին) որպես սեփականություն հանձնել (գույք) ապրանք, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը եւ դրա համար վճարել որշակի գումար (գինը):

2. Սույն պարագաներով նախատեսված դրույթները կիրառվում են արժեթղթերի եւ արժութային արժեքների առուվաճառքի նկատմամբ, եթե դրանց առուվաճառքի համար հատուկ կանոններ սահմանված չեն օրենքով:

3. Սույն օրենսգրքով կամ այլ օրենքով նախատեսված դեպքերում առանձին տեսակների ապրանքներ գնելու ու վաճառելու առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով եւ այլ իրավական ակտերով:

4. Սույն պարագաներով նախատեսված դրույթները կիրառվում են գույքային իրավունքների վաճառքի նկատմամբ, եթե այլ բան չի բխում այդ իրավունքների բովանդակությունից կամ բնույթից:

5. Սույն պարագաներով նախատեսված դրույթները կիրառվում են առուվաճառքի պայմանագրի առանձին տեսակների (մանրածախ առուվաճառք, ապրանքների մատակարարում, ապրանքների մատակարարում պետական կարիքների համար, էներգամատակարարում, անշարժ գույքի վաճառք) նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրի այդ տեսակների նկատմամբ սույն օրենսգրքի կանոններով»:

2. Ըստ գործում առկա դատական ակտերի՝ Երեւան քաղաքի բնակիչ Ա. Մարտիրոսյանը 2003թ. հունվարին չգրանցված ամուսնական հարաբերությունների մեջ է մտել Ա. Վելյանի հետ, համատեղ կյանքի ընթացքում երեխա չեն ունեցել: Ընտանեկան հարաբերություններն ամրապնդելու նպատակով Ա. Վելյանի մայրը՝ Լ. Ալեքսանյանը, որոշել է դատերը որպես օժիտ նվիրել ԳԱԶ-31029 մակնիշի ավտոմեքենա: Այդ կապակցությամբ նա 2800 ԱՄՆ դոլար գումարով Բ. եւ Ն. Գրիգորյաններից գնել է վերոհիշյալ ավտոմեքենան եւ, որպեսզի իրենց ընտանիքին մշտապես օգնություն ցույց տվող հարազատները շիմանան այդ մասին եւ ինքը չգրկվի նրանց օգնությունից, շինու գործարքով որպես ավտոմեքենայի գնորդ է ներկայացրել Ա. Մարտիրոսյանին: Հետագայում Ա. Մարտիրոսյանը լրել է կնոջը եւ իր հետ տարել ավտոմեքենան, ուստի Լ. Ալեքսանյանը դիմել է Շենգավիք համայնքի առաջին ատյանի դատարան՝ խնդրելով անվակեր ճանաչել Ա. Մարտիրոսյանի եւ Բ. ու Ն. Գրիգորյանների միջեւ 16.06.2003թ. կնքված ավտոմեքենայի առուվաճառքի գործարքը, քանի որ ավտոմեքենայի իրական գնորդը եղել է ինքը:

Հակընդեմ հայցով դիմելով դատարան՝ Ա. Մարտիրոսյանը խնդրել է բոնագանձել Լ. Ալեքսանյանից 231.000 ՀՀ դրամ՝ պատճառաբանելով, որ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Վիճելի ավտոմեքենայով աշխատել է «Երվանդ Թագվորյան» ՍՊԸ-ում որպես վարորդ, սակայն ավտոմեքենան արգելանքի վերցնելու հետեւանքով դադարեցվել է աշխատանքային պայմանագիրը, որի արդյունքում ինքը կրել է նյութական վնաս՝ վերը նշված գումարի չափով:

Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 28.06.05 թ. վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաբննիչ դատարանի 14.11.05 թ. վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

Դիմելով ՀՀ վճռաբեկ դատարան՝ Ա. Մարտիրոսյանը խնդրել է բեկանել ՀՀ քաղաքացիական գործերով վերաբննիչ դատարանի 14.11.05թ. վճռով եւ գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության: ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ տնտեսական գործերով պալատը որոշել է ՀՀ քաղաքացիական գործերով վերաբննիչ դատարանի 14.11.05թ. վճռով բողնել անփոփոխ, իսկ վճռաբեկ բողոքը՝ առանց բավարարման:

3. Քաղաքացի Ա. Մարտիրոսյանը 25.07.06թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 470 հոդվածի՝ ՀՀ Սահմանադրության 3 հոդվածին, 8 հոդվածի 1-ին մասին եւ 31 հոդվածի 2-րդ մասին համապատասխանության հարցը որոշելու համար:

ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված դիմումում, ըստ էության, վիճարկվում են քաղաքացու նկատմամբ կիրառված՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 470 հոդվածի 1-ին կետի դրույթները:

Ըստ դիմողի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 470 հոդվածի 1-ին կետը չի ապահովում ՀՀ Սահմանադրության 3 հոդվածի պահանջները, իրավական որոշակիության բացակայության պայմաններում չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 8 հոդվածի 1-ին մասի եւ 31 հոդվածի 2-րդ մասի դրույթներին:

Դիմողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 470 հոդվածին դատարանների կողմից տրվել է կամայական մեկնարանություն, այն է՝ իրը մեքենայի համար պայմանագրով նախատեսված գումարն իր կողմից չի վճարվել:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար դիմողը վկայակոչում է նաև ՀՀ սահմանադրական դատարանի 2006թ. ապրիլի 18-ի թիվ 630 որոշման 11-րդ կետի 6-րդ պարբերությունում տրված՝ սահմանադրական դատարանի դիրքորոշումը, համաձայն որի՝ որեւէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին:

Դիմողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 470 հոդվածի դրույթները, որոնք նախատեսում են պայմանագրի առարկան փոխանցելու, պայմանագրով նախատեսված գումարը վճարելու դեպքերը, չեն կարող ՀՀ Սահմանադրության 31 հոդվածի 2-րդ մասի իմաստով դիտարկվել որպես օրենք, ուստի հակասում են ՀՀ Սահմանադրության 3 հոդվածին, 8 հոդվածի 1-ին մասին և 31 հոդվածի 2-րդ մասին:

4. Պատասխանողը գտնում է, որ դիմողի փաստարկները հիմնավոր չեն, եւ դիմումը ենթակա է մերժման՝ հետեւյալ նկատառումներով.

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Առուվաճառքի պայմանագիրը երկկողմ հատուցելի պայմանագիր է, որի շրջանակներում պայմանագրի կողմերը պարտավոր էին կատարել համապատասխանաբար երկու գործողություն՝ գույքի հանձնում եւ դրա դիմաց վճարում: Միայն դրանց ավարտից հետո խոսք կարող է լինել գնորդի մոտ սեփականության իրավունքի ծագման եւ ՀՀ Սահմանադրության 8 հոդվածի 1-ին մասի իմաստով պետության կողմից դրա ճանաչման ու պաշտպանման, ինչպես նաև 3 հոդվածով սահմանված մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության մասին:

Մինչդեռ, ինչպես երեւում է գործի նյութերից, վաճառողի հետ առուվաճառքի մասին բանակցությունները վարչել են եւ գումարը վճարվել է ոչ դիմողի կողմից:

Ինչ վերաբերում է ՀՀ Սահմանադրության 31 հոդվածի 2-րդ մասին, ապա, ըստ պատասխանողի՝ այստեղ կիրառվել են ոչ թե սեփականության իրավունքից զրկման ինստիտուտը, այլ՝ շինծու գործարքի կանոնները, այսինքն՝ դատական կարգով ապացուցվել է, որ դիմողը վիճարկվող գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք չի բերել:

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 470 հոդվածի 1-ին կետը սահմանում է առուվաճառքի պայմանագրի հասկացությունը եւ կողմերի իիմնական պարտականությունները, սակայն դրանց կատարման պայմաններն առավել մանրամասնորեն կարգավորված են 470 հոդվածի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի այլ հոդվածներով (օրինակ՝ 472-474 հոդվածները նվիրված են պայմանագրի առարկան փոխանցելուն, 501-505 հոդվածները կարգավորում են պայմանագրով նախատեսված գումարը վճարելու հետ կապված հարաբերությունները եւ այլն): Մասնավորապես, 501 հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Գնորդը պարտավոր է ապրանքի համար վճարել առուվաճառքի պայմանագրով նախատեսված գինը ...», իսկ համաձայն 502 հոդվածի՝ «Գնորդը պարտավոր է վճարել ապրանքի համար այն վաճառողից ստանալուց անմիջապես առաջ կամ հետո, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով, այլ օրենքներով, իրավական ակտերով կամ առուվաճառքի պայմանագրով եւ չի դրույմ պարտավորության էությունից»: Ուստի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 470 հոդվածի դրույթներն անհրաժեշտ են մեկնարանել դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված այլ հոդվածների համադրությամբ: Այս պարագայում, վիճարկվող հոդվածի 1-ին կետի դրույթները հստակ իրավական բովանդակություն են ստանում՝ սահմանելով առուվաճառքի պայմանագրի առարկան եւ կողմերի իրավական վիճակը:

Այս համատերաստում հստակ է նաև «գնորդ» հասկացության իրավական բովանդակությունը: Օրենսգրքի 470 հոդվածի 1-ին կետի դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդիրն այդ իմաստով գնորդ է համարում քաղաքացիական իրավունքի այն սուբյեկտին, որը միաժամանակ ապահովում է հետևյալ պայմանները.

ա) առուվաճառքի պայմանագրում նշված է որպես գնորդ,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

բ) պարտավորվում է ընդունել պայմանագրով նախատեսված գույքը,

գ) պարտավորվում է վճարել պայմանագրով նախատեսված գույքի համար:

Գնորդի նման պարտականությունը սահմանված է նաեւ օրենսգրքի 500-502 հոդվածներով:

Միաժամանակ, 1980թ. ապրիլի 11-ին Վիեննայում ստորագրված՝ «Ապրանքների միջազգային առուվաճառքի պայմանագրերի մասին» ՍԱԿ-ի կոնվենցիայի (Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 2005թ. դեկտեմբերի 8-ին) 53 հոդվածի համաձայն՝ «Գնորդը պարտավոր է վճարել ապրանքի գինը եւ ընդունել ապրանքը...», իսկ 54 հոդվածի համաձայն՝ «Գինը վճարելու գնորդի պարտավորությունը ներառում է այն պիտի միջոցների ձեռնարկումը եւ այնպիսի ձեռականությունների պահպանումը, որոնք կարող են պահանջվել, պայմանագրի կամ օրենքների ու ցուցումների համաձայն, վճարման իրականացումը հնարավոր դարձնելու համար»:

6. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 470 հոդվածի դրույթներին համապատասխան իրականացված գործարքի արդյունքում «գնորդը» օրինական կարգով կարող է սեփականության իրավունք ձեռք բերել, եւ տվյալ պարագայում օրենսգրքի վիճարկվող հոդվածի եւ Սահմանադրության 3, 8 եւ 31 հոդվածների դրույթների միջեւ որեւէ հակասություն չի կարող առաջանալ: Քննության առարկա գործի նյութերի ուսումնասիրությունից, սակայն, բխում է, որ ընդհանուր իրավասության դատարանների կողմից դիմողի՝ սեփականության իրավունքի ձեռքբերման գործարքն է ճանաչվել շինծու եւ անվավեր: Այս հանգամանքները, ինչպես նաև դիմումատուի այն պնդումը, համաձայն որի՝ ինքն է վճարել վիճելի ավտոմեքենայի գինը, այլ ոչ թե Լ. Ալեքսանյանը, ընդհանուր իրավասության դատարանների իրավագործության խնդիր են եւ դուրս են սահմանադրական դատարանում գործի քննության առարկայի շրջանակներից:

7. ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 470 հոդվածի 1-ին կետի դրույթները ձեռակերպված են հստակ, որեւէ իրավական անորոշություն չեն առաջացնում եւ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին, ինչպես նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի 2006թ. ապրիլի 18-ի թիվ 630 որոշմամբ արտահայտված դիրքորոշմանը համահունչ ապահովում են ՀՀ Սահմանադրության 8 հոդվածի 1-ին մասի դրույթների իրացումը, սահմանելով օրինական կարգով սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքերից մեկի՝ առուվաճառքի պայմանագրի բովանդակությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Բ Ո Շ Ե Յ**.

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 470 հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3 հոդվածին, 8 հոդվածի 1-ին մասին և 31 հոդվածի 2-րդ մասին:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
26 սեպտեմբերի 2006 թվականի
ՍԴ-648**

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂ. Մ. ՔՈՉԱՐՅԱՆԻ ԵՎ ՔԱՂ. Հ. ԴԱՎԹՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ
ՀԻՄԱՆ ՎՐԱ «ՍՈՅԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 11 ՀՈԴՎԱԾԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾՎԱԾ
ՀԱՄԱԳԱՏԱԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱԲՑ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

4 հոկտեմբերի 2006թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապյանի (գելուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմող քաղաքացիներ Մ. Ջոշարյանի եւ Հ. Դավթյանի, դիմոդների ներկայացուցիչներ Գ. Մանուկյանի եւ Ա. Պապիկյանի, պատասխանող՝ ՀՀ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Ռ. Պետրոսյանի, գործով իրավիրկածներ՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Ա. Վարդանյանի, Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի նախագահ Վ. Խաչիկյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1 կետի, 101 հոդվածի 6 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Քաղ. Մ. Ջոշարյանի եւ քաղ. Հ. Դավթյանի դիմումների հիման վրա՝ «Սոցիալական ապահովության քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11 հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Գործի քննության առիթ են հանդիսացել քաղաքացիներ Մանուշակ Քոչարյանի և Հրանուշ Դավթյանի դիմումները սահմանադրական դատարան, որոնց հիման վրա սահմանադրական դատարանի որոշմամբ գործերը միավորվել են և քննվել դատարանի նույն նիստում:

Լսելով սույն գործով գեկուցողի հաղորդումը, կողմերի և վկայի քացարությունները, իրավիրվածների պարզաբանումները, հետազոտելով «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

I. «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2003թ. սեպտեմբերի 24-ին, ստորագրվել է ՀՀ Նախագահի կողմից 2003թ. հոկտեմբերի 8-ին: Վիճարկվող 11-րդ հոդվածը, համաձայն նշված օրենքի անցումային դրույթների (հ. 17), ուժի մեջ է մտել 2004թ. հուլիսի 1-ից:

Օրենքի 11 հոդվածը սահմանում է.

«1. Սոցիալական քարտի համարը կիրառվում է քաղաքացիների անհատական տվյալները մշակելիս՝

1) քաղաքացուն աշխատավարձ և դրան հավասարեցված եկամուտ վճարելու, սոցիալական ապահովության և ապահովագրության պետական ու ոչ պետական ծրագրերով նախատեսված կենսարոշակ, նպաստ, հատուցում նշանակելու և վճարելու ժամանակ.

2) հարկեր, տուրքեր, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ, ինչպես նաև պարտադիր այլ վճարներ վճարելու ժամանակ.

3) կազմակերպությունների կողմից այն տեղեկատվական բազաները վարելու ժամանակ, որտեղից սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված գործառնություններն իրականացնելու համար օրենքով սահմանված դեպքերում տեղեկատվություն է տրամադրվում պետական կառավարման մարմիններին.

4) քաղաքացու կողմից բանկային հաշիվ բացելու ժամանակ.

5) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական և համայնքային ենթակայության կազմակերպությունների թղթային ու ինքնաշխատ տեղեկատվական բազաները վարելու ժամանակ:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված գործառնությունների հաշվառման ու հաշվետվական փաստաթղթերը՝ սոցիալական քարտ չունեցող անձանց մասով, համարվում են անվավեր, եթե դրանցում նշված չեն սոցիալական քարտերի համարները:

3. Սոցիալական քարտի և սոցիալական քարտի համարի կիրառման կանոնները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

2006թ. մայիսի 23-ին ՀՀ Ազգային ժողովն օրենք է ընդունել ««Սոցիալական ապահովության քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին», որի հոդված 2-ով «Սոցիալական քարտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածը լրացվել է հետեւյալ բովանդակությամբ 4-րդ մասով. «4. Սոցիալական

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

քարտը հոգեւոր խնդիրներին չի առնչվում եւ մարդու խղճի ու կրոնական համոզմունքների դեմ չի կարող օգտագործվել»:

II. Սահմանադրական դատարան դիմող քաղաքացիները կենսաթոշակառու են, չեն ստացել սոցիալական քարտ, քանի որ գտնում են, որ սոցիալական քարտ ստանալը հակասում է իրենց կրոնական համոզմունքներին: Սոցիալական քարտ չունենալու պատճառով ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի Ընդգավիրի տարածքային կենտրոնի կողմից կասեցվել է նրանց կենսաթոշակի վճարումը: Դիմողները քաղաքացիական հայց են ներկայացրել դատարան՝ իրենց կենսաթոշակի վճարումն ապահովելու համար: Նրանց հայցը 12.01.2006թ. Երեւան քաղաքի Ընդգավիրի առաջին ատյանի դատարանը բավարարել է: 2006թ. մարտի 22-ին ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը վճռել է «Մ. Քոչարյանի եւ Հ. Դավթյանի հայցն ընդուն ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի Ընդգավիրի տարածքային կենտրոնի՝ կենսաթոշակի վճարման պահանջի մասին, մերժել»: ՀՀ վճռաբեկ դատարանը 2006թ. մայիսի 19-ին որոշել է ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 22.03.2006թ. վճիռը քողնել անփոփոխ: Վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանները, մասնավորապես, իրենց մոտեցումները հիմնավորելիս հիմք են ընդունել «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի պահանջները:

Ըստ դիմողների՝ օրենքի 11 հոդվածը հակասում է ՀՀ Սահմանադրության 3 հոդվածին, 5 հոդվածի 2-րդ մասին, 6 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերին, քանի որ խախտում է դրանցում ամրագրված սահմանադրական կարգի հիմունքները, ինչպես նաև Սահմանադրության 26 հոդվածի 1-ին մասին, 27 հոդվածի 1-ին մասին, 37 եւ 42 հոդվածներին, քանի որ խախտում է դրանցում ամրագրված իրավունքները:

Վիճարկելով օրենքի 11 հոդվածի սահմանադրականության հարցը, իրականում դիմող կողմն իր եզրափակիչ խոսքում առաջ քաշեց օրենքի 11 հոդվածի 2-րդ եւ 4-րդ մասերի սահմանադրականության խնդիրը: Ընդունում, օրենքի 11 հոդվածի 4-րդ մասի դրույթները դիմողների նկատմամբ չեն կիրառվել ընդհանուր իրավասության դատարանների վերջնական դատական ակտով, քանի որ այդ նորմը լրացվել է վերջնական դատական ակտն ընդունելուց հետո:

III. Պատասխանող կողմը գտնում է, որ սոցիալական ապահովության քարտերի համակարգի նպատակը ոչ թե մարդու խղճին եւ կրոնական համոզմունքներին «դեմ գնալի է», այլ մարդու նույնականացումը, նրան վերաբերող տվյալները մեկ տեղում կենտրոնացնելը՝ նպատակ, որը, իր կարծիքով, չի կարող դիտվել հակասահմանադրական: Հերքելով օրենքի 11 հոդվածի առնչությունը Սահմանադրության 3, 5, 6, 27 եւ 42 հոդվածների հետ, պատասխանող կողմը գտնում է, որ այն առնչվում է Սահմանադրության 26 հոդվածին, որով ամրագրվում է մտքի, խղճի եւ կրոնի ազատությունը, 31 հոդվածին, որով պաշտպանվում է սեփականության իրավունքը

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Եւ 37 հոդվածին, որն ամրագրում է սոցիալական ապահովության իրավունքը՝ այն կախման մեջ չդնելով սոցիալական քարտից կամ որեւէ այլ փաստաթղթից: Ըստ պատասխանողի՝ այն հանգամանքը, որ կրոնական համոզմունքների պատճառով սոցիալական քարտ չստացած քաղաքացիները չեն ստանում աշխատավարձ, կենսաբոշակ եւ նպաստ, հուշում ե, որ օրենքում առկա է սահմանադրականության խնդիր: Ավելին, ըստ պատասխանող կողմի ներկայացուցիչ՝ իրենք նույնպես հանգել են այն եզրակացությանը, որ օրենքի 11 հոդվածի 2-րդ մասը եւ 4-րդ մասը հակասում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 26, 31 եւ 37 հոդվածներին, քանի որ ոտնահարվել են մարդկանց սահմանադրական իրավունքները, սոցիալական քարտերի համակարգի արմատավորման խնդիրը չի կարող լուծվել հարկադրանքի միջոցով: Պատասխանող կողմը փաստեց նաեւ, որ օրենքում կան որոշ ներքին հակասություններ:

IV. Գործում առկա նյութերի վերլուծությունը վկայում է, որ սոցիալական ապահովության քարտ չստանալու համար տարբեր քաղաքացիներ ազատվել են աշխատանքից, նրանց չեն վճարվել նպաստ, աշխատավարձ, միանվագ դրամական օգնություն, գրկել են ԽՍՀՄ խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում իրենց ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունքից, արգելափակվել են նրանց կողմից բանկային գործարքների կատարումը: Իսկ 2006թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ, համաձայն ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի տվյալների, միայն հիմնադրամի համակարգում հաշվառված 530246 կենսաբոշակառուներից կասեցվել է 1317-ին կենսաբոշակի վճարումը՝ սոցիալական քարտ չունենալու պատճառով:

V. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 11-րդ մասի եւ 68 հոդվածի 7-րդ մասի պահանջներից ելնելով՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ համարեց քննության առնել «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի սահմանադրականությունը՝ Սահմանադրության «Սահմանադրական կարգի հիմունքները» գլխում ամրագրված հիմնարար սկզբունքների, ինչպես նաև այնպիսի սահմանադրական իրավունքների երաշխավորման համատեքստում, որպիսիք են սեփականության (հհ. 8, 31), աշխատանքի եւ վարձատրման (հ. 32, մասեր 1-ին եւ 2-րդ), սոցիալական ապահովության (հ. 37), օրենքով չսահմանված պարտականությունից ազատ լինելու (հ. 42) իրավունքները: Դրանք այն իրավունքներն են, որոնց առնչվում է քննության առարկա խնդիրը, եւ որոնք չեն կարող սահմանափակվել ոչ տվյալ հոդվածով եւ ոչ էլ Սահմանադրության 43 հոդվածով նախատեսված հիմքերով: Սահմանադրության 44 հոդվածը թույլ է տալիս թվարկված իրավունքների (բացի Սահմանադրության 42 հոդվածում ամրագրվածից) սահմանափակումը միայն ժամանակավորապես՝ ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ՝ «արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում»:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Միաժամանակ, այն հանգամանքը, որ օրենքի կիրառման ընթացքում դիմող քաղաքացիների խնդիրն առաջացել է իրենց կրոնական համոզմունքների հետեւանքով, անհրաժեշտ է դարձնում դիտարկել օրենքի վիճարկող նորմերի առնչությունները Սահմանադրության 14.1. հոդվածի (խորականության արգելք՝ նաև հայացքների ու կրոնի հիմքով), 26 հոդվածի (մտքի, խոհի եւ կրոնի ազատություն), 27 հոդվածի (համոզմունքը փոխելու հարկադրանքի արգելք) նորմերի հետ:

VI. Պարզելու համար, թե որքանո՞վ է օրենքի վիճարկող հոդվածն ապահովում մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված հիշյալ իրավունքները, անհրաժեշտ է դիտարկել օրենքի իրավակարգավորման առարկան՝ իր ամբողջության մեջ: Տվյալ օրենքով Հայաստանի Հանրապետությունում ստեղծվում է տեղեկատվական համակարգերում անհատական տվյալների մշակման ընթացքում քաղաքացու նույնականացման նոր համակարգ: Նպատակ է դրվում օրենսդրությամբ սահմանված կարգով կանոնակարգել ու բարելավել տեղեկատվության փոխանակման գործընթացները, ապահովել քաղաքացու անհատական տվյալների գաղտնիությունը: Գլխավոր խնդիրը տվյալ պարագայում այն է, թե որքանո՞վ է օրենքում հաշվի առնված, մի կողմից՝ պետության ու հանրային շահերի, մյուս կողմից՝ մարդու եւ քաղաքացու իրավունքների եւ օրինական շահերի հավասարակշռությունը՝ չստեղծելով իրավական անհստակություն կամ օրենսդրական ներքին հակասություններ:

Գործի բննությունը նախ վկայեց, որ օրենքը գերծ չէ որոշ ներքին հակասություններից, որոնց առկայությունը հավաստեց նաև պատասխանող կողմը: Վեճի առարկայի տեսանկյունից էական է «իրավունք» եւ «պարտականություն» հասկացությունների ներքին շփոթի բացառումը, որն առկա է օրենքի 11 հոդվածի հետ համակարգային առումով փոխկապակցված 13 հոդվածում: Վերջինիս 1-ին մասում նշված է, որ «քաղաքացին իրավունք ունի՝ 1) ստանալ սոցիալական քարտ», իսկ 2-րդ մասի 2-րդ կետում՝ որ «քաղաքացին պարտավոր է [...] իր սոցիալական քարտը ներկայացնել այն մարմիններին, որոնց դա անհրաժեշտ է սույն օրենքի 11-րդ հոդվածի պահանջները կատարելու համար»: Օրենքի 11 հոդվածի 1-ին մասում թվարկվում են ոլորտները, որոնցում օգտագործվելու են քարտերը: 13 հոդվածի 1-ին մասի համատեքստում դա նշանակում է, որ նշված ոլորտներում քարտն օգտագործվելու է միայն այն քաղաքացիների մասով, որոնք օգտվել են սույն օրենքով իրենց ընձեռված իրավունքից եւ ստացել են սոցիալական քարտ: Մինչդեռ նոյն 11 հոդվածի 2-րդ մասի ուժով քարտի կիրառումը 1-ին մասով թվարկված ոլորտներում դառնում է համընդիմանոր պարտադրանք, ամենից՝ օգտվել է քաղաքացին 1-ին մասով սահմանված իր իրավունքից, թե՝ ոչ:

Երկրորդ՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից օրենքի 11 հոդվածի դրույթներին տրված մեկնարանություններով հանդերձ, հակասություն է առաջացել «Սոցիալական քարտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի 2-րդ մասի եւ «Պետական կենսաբոշակների մասին» ՀՀ օրենքի 60 հոդ-

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

վածի միջեւ, քանի որ վերջինս սպառիչ սահմանել է կենսաթոշակի վճարումը կասեցնելու միայն երկու հիմք՝ «կենսաթոշակառուի կողմից վեց ամսի անընդմեջ անձամբ կենսաթոշակ չստանալու դեպքում» և «հաշմանդամության ժամկետը լրանալու դեպքում»։ Ընդ որում, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքն ավելի վաղ է ուժի մեջ մտել (10.04.2003թ.): «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի (ուժի մեջ է մտել 31.05.2002թ.) 24 հոդվածի 3-րդ մասի պահանջն է, որ «Սիեւնոյն մարմնի ընդունած հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի միջեւ հակասությունների դեպքում գործում են ավելի վաղ ուժի մեջ մտած իրավական ակտի նորմերը»։ Միաժամանակ, նոյն հոդվածի 7-րդ մասով նախատեսված է, որ «Հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերի կամ նոյն իրավական ակտի տարբեր մասերի միջեւ հակասության դեպքում պետական եւ տեղական հճախակառավարման մարմինները ֆիզիկական ու իրավաբանական անձանց հետ հարաբերություններում պետք է կիրառեն ֆիզիկական եւ իրավաբանական անձանց համար նախընտրեն նորմատիվ իրավական ակտը կամ դրա մասը»։ Մինչդեռ իրավակիրառական, այդ թվում՝ դատական, պրակտիկան անտեսել է այս նորմերի պահանջները։

VII. 1. Սոցիալական քարտի առկայությունը դարձնելով պարտադիր պայման օրենքի 11 հոդվածում թվարկված բոլոր գործառույթներում, ներառյալ կենսապահովման այնպիսի միջոցներ, որպիսիք են աշխատավարձը, կենսաթոշակը, նպաստը, հասուցումը, դրամական փոխանցման ստացումը, օրենքը մի շարք քաղաքացիների դրել է երկրնտրանքի առջեւ։ Կամ զրկվել իրենց սոցիալական իրավունքների իրականացումից, կամ հանողմունք ունենալու եւ դրան հավատարիմ մնալու իրավունքից։ Երկու դեպքում էլ դա առնչվում է մարդու արժանապատվությանը։

Վավերացնելով Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը՝ Հայաստանի Հանրապետությունը ճանաչել է դրա Նախարանի այն հիմնարար դրույթը, ըստ որի՝ «մարդու իրավունքները բխում են մարդկային անհատին ներհատուկ արժանապատվությունից»։ Սահմանադրության 3 հոդվածի 1-ին մասում նշված է. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները եւ ազատությունները բարձրագույն արժեքներ են»։ «Բարձրագույն արժեք» հասկացությունն այստեղ վերացական չէ եւ ունի որոշակի իրավական բովանդակություն։ «Բարձրագույն արժեք» նշանակում է, որ որևէ այլ արժեք, այդ թվում եւ պետական, եւ հանրային խնդիրների լուծմանը կոչված որևէ համակարգ, չի կարող ավելի բարձր դասվել։ Սրանից էլ բխում է Սահմանադրության նոյն հոդվածի 3-րդ մասով ամրագրված նորմը. «Պետությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»։ Հետեւարար, քննության առարկա օրենքի 11-րդ հոդվածից բխող իրավիճակը, որով քաղաքացիների որոշ կատեգորիաներ գրկվում են Սահմանադրությամբ չսահմանափակվող ճանաչված իրենց առանձին հիմնարար իրավունքնե-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

የի իրականացման հնարավորությունից, չի ապահովում արդարացի հավասարակշռություն հանրության ընդհանուր շահի եւ անձի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև եւ չի բխում Սահմանադրության 3 հոդվածի պահանջներից:

2. Օրենքի 11 հոդվածի 2-րդ մասով սոցիալական քարտի բացակայությունը հիմք է դառնում, մասնավորապես, սահմանափակելու Սահմանադրության 37 հոդվածով ամրագրված սոցիալական ապահովության իրավունքի, ինչպես նաև Սահմանադրության 32 հոդվածի 2-րդ մասով ամրագրված՝ աշխատանքի վարձատրության իրավունքի իրականացումը: Կենսարոշակը, ինչպես նաև աշխատավարձը՝ քաղաքացու վաստակած միջոցներ են եւ նրա սեփականությունը: Մասնավորապես, դիմողները կենսարոշակի են անցել 1991 եւ 1994 քվականներին եւ մինչեւ 2005թ. հունվար ստացել են իրենց կենսարոշակը, որից հետո դրանց վճարումը կասեցվել է:

Կենսարոշակի վճարումը գործնականում սեփականությունը սեփականատիրոջ փոխանցելու միջոց է: Կենսարոշակը սոցիալական ապահովության միջոց լինելով հանդերձ, սեփականության ձեւ է՝ նաև ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի (տես՝ Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործը): Հետեւաբար, անհրաժեշտություն է ծագում դիտարկել օրենքի վիճարկվող դրույթները նաև Սահմանադրության 8 եւ 31 հոդվածների պահանջներից ենելով, որոնցից առաջինը հոչակում է սեփականության իրավունքի ճանաչումն ու պաշտպանությունը, իսկ երկրորդն ամրագրում է. «Ոչ որի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի»: ՀՀ օրենքներում չկա որեւէ նորմ, որով նախատեսված լինի սոցիալական քարտերի բացակայությունը որպես սեփականությունից զրկելու հիմք: Մասնավորապես, այն բացակայում է «Պետական կենսարոշակների մասին» ՀՀ օրենքի 60 հոդվածի 1-ին մասում, որտեղ, ինչպես նշվեց, սահմանվում են կենսարոշակ վճարելը կասեցնելու հիմքերը, ինչպես նաև 2-րդ մասում, որը վերաբերում է կենսարոշակի վճարումը դադարեցնելու հիմքերին:

Բացի դրանից, «Սոցիալական ապահովության քարտերի մասին» օրենքով սահմանելով սոցիալական քարտի պարտադիր լինելը՝ հատուցում նշանակելու եւ վճարելու ժամանակ, օրենքը հնարավորություն է ստեղծում, օրինակ, հասարակության եւ պետության կարիքների համար սեփականությունն օտարելիս խուսափել քաղաքացուն փոխհատուցման վճարումից, որը, ըստ Սահմանադրության 31 հոդվածի՝ պարտադիր է եւ պետք է լինի «նախնական եւ համարժեք»: Հետեւաբար, «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի դրույթները վեճի առարկայի շրջանակներում չեն ապահովում Սահմանադրության 8 եւ 31 հոդվածների պահանջների իրազրուցումը:

3. Ըստ դիմողների՝ օրենքի 11 հոդվածը հակասում է նաև Սահմանադրության 42 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի պահանջներին: Սահմանադրության այս հոդվածի 1-ին մասը շեշտում է Սահմանադրությամբ չարձանագրված այլ իրավունքների առկայությունը: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենքի վիճարկվող հոդվածը որեւէ առնչություն

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

չունի Սահմանադրության 42 հոդվածի 1-ին մասի հետ, բայց անմիջականորեն առնչվում է 2-րդ մասին, որն արգելում է քաղաքացուն վերագրել օրենքով չնախատեսված որեւէ պարտականություն:

Սահմանադրության 42 հոդվածի հետ օրենքը համադրելիս՝ կարեւորվում է նաև այդ հոդվածի 3-րդ մասը, ըստ որի՝ «Անձի իրավական վիճակը վատրարացնող օրենքները եւ այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն»։ Կատարված աշխատանքի վարձատրությունից զրկելը, նախկինում սոցիալական ապահովության պարտադիր վճարների կատարումով վաստակած կենսաքոշակի վճարման կատեցումը, ինչպես նաև մինչ օրենքի ընդունումը կայացած աշխատանքային պայմանագրերով չնախատեսված նոր պայման ավելացնելու պարտադրանքը նշանակում է՝ հակառակ սահմանադրական այս պահանջին, հետադարձ ուժ տալ օրենքին։ Օրենքի հետադարձ գործողությունն առավել ցայտուն է այն բազմաթիվ դեպքերում, երբ աշխատավարձի կամ բոշակի վճարումների ուշացման հետեւանքով քաղաքացին զրկվել է օրենքի ուժի մեջ մտնելուն նախորդող տարփա կենսաքոշակից կամ աշխատավարձից։

4. Նկատի ունենալով, որ օրենքի 11 հոդվածի հատկապես 2-րդ մասի գործողության հետեւանքով նյութական դժվարին վիճակում հայտնվածների զգալի մասը բոշակառուներ են, այդ նորմերը խոչընդոտում են Սահմանադրության 48 հոդվածի 12-րդ կետի պահանջի կատարումը, որով սոցիալական պետության հիմնական խնդիրներից է հոչակվել տարեց մարդկանց արժանապատիվ կենսամակարդակի ապահովումը։

VIII. Քանի որ օրենքի 11 հոդվածն անդրադառնում է նաև նպաստի ինստիտուտին, որի ձեւերից մեկն է Երեխայի համար նախատեսված նպաստը, իսկ օրենքի 7 հոդվածը նախատեսում է սոցիալական քարտի անհրաժեշտությունը նաև այս դեպքում, 11 հոդվածի հետ համակարգային կապի մեջ պետք է դիտել նաև օրենքի 7 հոդվածը։ Այստեղ թվարկվում են տվյալներն ու փաստաթղթերը, որոնք ներկայացվելու են քարտ ստանալու համար։ Ի թիվս դրանց, 7 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը նախատեսում է ծննդյան վկայականներ՝ 16 տարին չլրացած քաղաքացիների համար։ Երեխան ո՞չ աշխատանքային հարաբերությունների սուբյեկտ է (համենայնդեպս, մինչեւ որոշակի տարիքը), ո՞չ բոշակառու, ո՞չ հարկատու։ Օրենքի այս դրույթի եւ 11 հոդվածի 2-րդ մասի ուժով, ծննդի համոզմունքի հետեւանքով իրեն հասանելիք նպաստից զրկվում է Երեխան։

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, որին մասնակից է նաև Հայաստանի Հանրապետությունը, 3 հոդվածում նշում է. «1. Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զրադիր պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում Երեխայի շահերի լավագույն ապահովմանը։ 2. Մասնակից պետությունները պարտավորվում են Երեխային ապահովել նրա բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությամբ եւ հոգատարությամբ՝ նկատի ու-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նենալով նրա ծնողների, խնամակալների կամ օրենքով նրա համար պատասխանատվություն կրող այլ անձանց իրավունքներն ու պարտականությունները, եւ այդ նպատակով ձեռնարկում են օրենսդրական ու վարչական բոլոր համապատասխան միջոցները»:

Երեխաների նպաստին անմիջապես վերաբերող դրույթ ՀՀ Սահմանադրությունը չի պարունակում, եւ այդ իրավունքը պետք է դիտարկել Սահմանադրության 37 հոդվածի համատեքստում, որում նշված է ընդհանուրապես սոցիալական ապահովության իրավունքը՝ բացի հոդվածում թվարկվածից, նաեւ «օրենքով նախատեսված այլ դեպքերում», որոնց շրջանակում էլ գտնվում է երեխայի նպաստի իրավունքը: Այն պետք է դիտարկել նաեւ Սահմանադրության 34 հոդվածի համատեքստում, որում նշված է, որ «Յուրաքանչյուր ոք ունի իր եւ իր ընտանիքի համար քավարար կենսամակարդակի [...] իրավունք», ինչպես նաեւ Սահմանադրության 48 հոդվածի 1-ին կետի առնչությամբ, որով պետության հիմնական խնդիր են հոչակում ընտանիքի, մայրության եւ մանկության պաշտպանությունն ու հովանավորումը:

Երեխայի նպաստը դնելով սոցիալական քարտի հետ կախման մեջ, օրենքի 11 հոդվածի վիճարկվող դրույթները՝ երեխաների նպաստի մասով, խոշընդոտում են Սահմանադրության նշյալ հոդվածներով ամրագրված իրավունքների իրականացումը, իսկ չհամապատասխանելով միջազգային իրավունքի նշված նորմերին եւ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններին՝ անտեսում են նաեւ Սահմանադրության 3 հոդվածի պահանջը:

IX. Բոլոր նշված սահմանադրական խնդիրներն իրավակիրառական արակտիկայում հիմնականում ծագել են քաղաքացիների կրոնական համոզմունքների հետեւանքով: Սահմանադրական դատարանի խնդիրը չէ պարզել այդ համոզմունքների դաշտանարքանական էությունը, սակայն օրենքի կիրառման առաջին իսկ պահից ծագած այս խնդիրները մղել են ե՛ օրենսդրին, ե՛ գործադիր իշխանությանը տվյալ անձանց համար գտնելու այլընտրանքային լուծումներ: Սասնավորապես, օրենսդրի 2006թ. ընդունելու և «Սոցիալական ապահովության քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որում օրենքի 11-րդ հոդվածը լրացվել է 4-րդ մասով. «Սոցիալական քարտը հոգեւոր խնդիրներին չի առնչվում եւ մարդու խղճի ու կրոնական համոզմունքների դեմ չի կարող օգտագործվել»: Այն փաստորեն պարունակում է երկու դրույթ: Առաջինը՝ որ օրենքը հոգեւոր խնդիրներին չի առնչվում: Նման նորմը գործնականում գործի է իրավական բովանդակությունից: Երկրորդ դրույթը՝ «կրոնական համոզմունքների դեմ» քարտի օգտագործման արգելքը, վերացական բնույթ է կրում եւ չի համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45 հոդվածի 3-րդ մասի այն պահանջին, որ «Նորմատիվ իրավական ակտերում չպետք է կիրառվեն նորմեր, որոնց կատարումն անհնար է կամ անընդունելի, կամ որոնց չկատարման համար իրավական հետեւանքներ նախատեսված

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

չեն»: Օրենքի 11 հոդվածի նման լրացումը գործնականում տվյալ հոդվածի գոյություն ունեցող նորմերի իրավական բնույթի ու բովանդակության վրա որեւէ ազդեցություն չի ունեցել:

Կառավարությունն իր հերթին 2005թ. հուլիսի 14-ի N 990-Ն որոշմամբ սահմանել է. «Կրոնական խնդիրներ ունեցող քաղաքացիներին իրենց դիմումների հիման վրա հատկացվում են առանց գծիկավոր պայմանանշանի ու առանց Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության խորհրդանիշի սոցիալական քարտեր»: Այս որոշումը նույնպես չի նպաստել հիմնախնդրի վերջնական կարգավորմանը:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել նաև, որ օրենքի 11 հոդվածի վիճարկվող դրույթները, մասնավորապես՝ 2-րդ մասը, վերաբերում են ոչ միայն սոցիալական քարտից կրոնական դրապատճառներով հրաժարվածներին, այլ իրավունքների իրականացման սահմանափակումներ են նախատեսում բոլոր անձանց համար, ովքեր, անկախ դրամապատճառից, սոցիալական քարտ չունեն: Այս առումով խնդիրը չպետք է դիտարկվի զուտ կրոնական եւ այլ համոզնունքների տեսանկյունից, այլ՝ անխատիր բոլոր մարդկանց իրավունքների սահմանափակման սահմանադրորեն թույլատրելի սահմանների տեսանկյունից:

X. Քննության առարկայի առնչությամբ իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը, դատաքննության ընթացքում բերված առանձին փաստարկներն ու պարզաբանումները վկայեցին, որ անհրաժեշտ ըմբռնում գոյություն չունի սահմանադրական այնպիսի առանցքային նորմ-սկզբունքների առնչությամբ, ինչպիսիք են «Պետությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք» (հ. 3, մաս 3-րդ) կամ «Սահմանադրությունն ունի քարձրագույն իրավաբանական ուժ, եւ նրա նորմերը գործում են անմիջականորեն» (հ. 6, մաս 1-ին): Բացի դրանից, ցանկացած նորմատիվ իրավական ակտ պետք է ապահովի եւ երաշխավորի Սահմանադրության 3 հոդվածի պահանջն առ այն, որ «Պետությունն ապահովում է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան», ինչպես նաև 43 հոդվածի երկրորդ մասի պահանջը, համաձայն որի՝ «Մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները»:

Քննության առարկայի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ հիշյալ նորմերի պահանջները երաշխավորելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ սահմանադրորեն տարբեր իրավունքների սահմանափակման առանձնահատկություններն ու բնույթը: Որքան էլ որ այլոց իրավունքների երաշխավորումն է դատնում անհատի հասարակական վարքագծի կանո-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նակարգման սահմանը, միեւնույն է, Սահմանադրությունը, ինչպես նշվեց, չի նախատեսում որոշակի իրավունքների սահմանափակում: Իսկ այդ իրավունքների ապահովման կարգը չի կարող դրանց իրականացման արգելանք դառնալ, այլ պետք է երաշխավորի այն: Սահմանադրություն նախատեսված սահմանափակման ենթակա իրավունքների առնչությամբ, համաձայն մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների, մարդու իրավունքի սահմանափակումը կարող է իրականացվել միայն օրենքով՝ երաշխավորելով համաշխավությունը, չաղավաղելով իրավունքի էռթյունը (սահմանափակման հետևանքով իրավունքը չըրկվի իր բովանդակությունից, չվտանգվի դրա գոյությունը):

«Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի 2-րդ մասի դրույթների՝ այս տեսանկյունից վերլուծությունը վկայում է, որ իրավակիրառական պրակտիկայում իրականում առկա է ոչ թե իրավունքների համաշափ սահմանափակման, այլ սահմանադրություն սահմանափակման ոչ ենթակա (խոսքը չի վերաբերում ռազմական կամ արտակարգ իրավիճակներին) առանձին իրավունքների արգելափակման իրողությունը: Նման վիճակն առաջացել է, թերեւս, նաև օրենքի 11 հոդվածի 2-րդ մասի անհստակ ձեւակերպումից: Այս սահմանում է, որ «Սույն հոդվածի 1-ին մասում նշված գործառնությունների հաշվառման ու հաշվետվական փաստաթղթերը՝ սոցիալական քարտ չունեցող անձանց մասով, համարվում են անվավեր, եթե դրանցում նշված չեն սոցիալական քարտերի համարները»: Խնդիրը լուծված չէ այն դեպքում, եթե անձն ունի սոցիալական քարտ, սակայն համարը նշված չէ: Օրենքի 11 հոդվածի 2-րդ մասում «սոցիալական քարտ չունեցող անձանց մասով» դրույթի առկայությունը վկայում է, որ ի սկզբանե այս նորմը ոչ թե համապարտադիր իրավակարգավորիչ բնույթ ունի, այլ վերաբերել է անձանց որոշակի խմբի՝ նախատեսելով նրանց առանձին իրավունքների իրականացման արգելափակում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61 հոդվածի 1-ին մասով, 63 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Յ**.

1. «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի 2-րդ մասի դրույթները՝ ՀՀ Սահմանադրության 31, 32 (2-րդ մաս) եւ 37 հոդվածներով ամրագրված իրավունքների իրականացման արգելափակման առումով ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 6 (1-ին, 2-րդ մասեր), 42, 43 եւ 48 (կետ 12) հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 11-րդ մասի պահանջներին համապատասխան՝ անվավեր ճանաչված

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

դրույթների կատարումն ապահոված այլ նորմատիվ ակտերը կամ դրանց համապատասխան դրույթները կորցնում են իրենց իրավաբանական ուժը՝ սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 11-րդ մասի և 68 հոդվածի 12-րդ մասի համաձայն սույն որոշումը տարածել դրա ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**4 հոկտեմբերի 2006 թվականի
ՍՊԸ-649**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐՑԻՔ

**Քաղ. Մ. Քոչարյանի եւ քաղ. Հ. Պավթյանի դիմումների
հիման վրա՝ «Սոցիալական ապահովության քարտերի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 11 հոդվածի՝
Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը
համապատասխանության հարցը որոշելու վեռաբերյալ գործով
Սահմանադրական դատարանի ՍԴ-649 որոշման վերաբերյալ**

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 62 հոդվածի 7 կետով եւ Սահմանադրական դատարանի կանոնակարգի 35 հոդվածով, ներկայացնում ենք մեր հատուկ կարծիքը:

Նշված գործով Սահմանադրական դատարանի ՍԴ-649 որոշմամբ (4 հոկտեմբերի 2006 թ.) «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի 2 մասի դրույթները՝ «ՀՀ Սահմանադրության 31, 32 (2-րդ մաս) եւ 37 հոդվածներով ամրագրված իրավունքների իրականացման արգելափակման առումնվ» ճանաչվեցին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 6 (1 եւ 2 մասեր), 42, 43 եւ 48 (կետ 12) հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր: Ընդհանուր առմամբ **համաձայն լինելով** որոշման հետ, անհրաժեշտ ենք համարում նրա պատճառաբանական եւ եզրափակիչ մասերում լրացնիչ անդրադառնալ հետեւյալ կարեւոր հանգամանքներին:

Պատճառաբանական մաս.

1. Սահմանադրական դատարանի որոշման պատճառաբանական մասում նշված է, որ անհրաժեշտ է «դիտարկել օրենքի վիճարկվող նորմերի առնչությունները Սահմանադրության 14.1 հոդվածի (խորականության արգելք՝ նաև հայացքների ու կրոնի հիմքով), 26 հոդվածի (մտքի, խղճի եւ կրոնի ազատություն), 27 հոդվածի (կարծիքը փոխելու հարկադրանքի արգելք) նորմերի հետ:

Իրոք, օրենքի գործողության հետեւանքով դժվարին վիճակում հայտնվողները՝ հիմնականում կրոնական խնդիրներ ունեցող քաղաքացիներն են: Ի հավելումն Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշմանն առ այն, որ խնդիրը ոչ թե դավանարանական հարցերի քննարկումն է, այլ պարզելք, ապահովված է արդյոք քաղաքացու՝ կարծիք եւ համոզմունք ունենալու իրավունք՝ անկախ այն բանից, թե որքանով է այդ համոզմունքը «սխալ» կամ «ճիշտ», անհրաժեշտ ենք գտնում նշել, որ իրականում քարտից հրաժարվելը՝ կրոնական եւ այլ համոզմունքների հետեւանք է, ուստի ակնհայտ է, որ այդ պատճառով սոցիալական ապահովության կամ այլ իրավունքների արգելափակումը՝ կրոնական կամ այլ համոզմունք ունենալու ազատության սահմանափակում է, եւ այդ առումնվ օրենքի 11 հոդվածի

2 մասը խոչընդոտում է նաեւ **Սահմանադրության 26 և 27 հոդվածների** պահանջների իրագործումը: Սիամանանակ այս նորմը նաեւ կրոնի եւ հայցքների հմքով խտրականության դրսեւրում է, որն արգելված է **Սահմանադրության 14.1 հոդվածով**:

2. Քաղաքացիները, դիմելով Սահմանադրական դատարան «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի սահմանադրականության խնդրով, թեև իրենց հիմնավորումներում շեշտել են կենսաթոշակ ստանալու իրավունքի ոտնահարումը, այնուհանդերձ չեն առանձնացրել հոդվածի որեւէ մաս: Ուստի որոշումն այս գործով, կաշկանդված չլինելով դիմողների հիմնավորումներով, պետք է դիտարկել 11 հոդվածը ողջ ծավալով:

Օրենքի 11 հոդվածի 1 մասի առաջին նախադասությամբ սահմանված դրույթը («սոցիալական քարտի համարը կիրառվում է քաղաքացիների անհատական տվյալները մշակելիս»), չի ապահովում իրավական որոշակության չափանիշերը, քանի որ չի նշում, որ խոսքը հետագայում թվարկած գործառնությունների եւ ոլորտների հետ կապված տվյալների մասին է: Մյուս կողմից, օրենքում ընդհանրապես չկա «անհատական տվյալներ» եւ «անհատական տվյալների մշակում» հասկացությունների սահմանումը: Հետեւարար, գործում է ՀՀ օրենսդրության մեջ առկա սահմանումը: Հետեւարար, գործում է ՀՀ օրենսդրության մեջ առկա սահմանումը, մանավանդ որ, ըստ քննարկվող օրենքի 2 հոդվածի 1 մասի, սոցիալական քարտերի մասին օրենսդրությունը բաղկացած է նաեւ «այլ օրենքներից»: Միակ օրենքը, ուր կա «անհատական տվյալներ» եւ «անհատական տվյալների մշակում» հասկացությունների սահմանումը՝ «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքն է, ըստ որի 3 հոդվածի, «անհատական տվյալ» նշանակում է՝ «ֆիզիկական անձին վերաբերող փաստերի, դեպքերի, հանգամանքների մասին ցանկացած դրվագ այնպիսի գույքով, որը թույլ է դրալիս կամ կարող է թույլ դրալ նոյնականացնել անհապի ինքնությունը», իսկ դրանց մշակումը՝ «ցանկացած գործողություն կամ գործողությունների խումք՝ կապված անհատական տվյալների [...] օգրագործման հետ»: Հետեւարար, «Սոցիալական ապահովության քարտերի մասին» օրենքի 11 հոդվածի հիշյալ ձեւակերպումը՝ թվարկած ոլորտների հետ կապվածության բացակայության եւ «անհատական տվյալներ» ու «անհատական տվյալների մշակում» հասկացությունների սահմանման բացակայության պայմաններում, անտեսում է **Սահմանադրության 23 հոդվածում** ամրագրված՝ անձնական կյանքի հանդեպ հարգանքի իրավունքը, հակասում է Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 8 հոդվածին, Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին (տես՝ «Վ-ն ընդդեմ Ֆրանսիայի» գործով որոշումը):

Ըննության առարկա օրենքի 11 հոդվածի 1 մասի առաջին նախադասությանը հաջորդում է քարտի կիրառման ոլորտների թվարկումը: Համադրելիս այդ ոլորտներն օրենքի 3 հոդվածում բերված «սոցիալական քարտ» հասկացության սահմանման հետ, ըստ որի այն՝ «փաստաթուղթ է, որի միջոցով ապահովում է քաղաքացիների սոցիալական ապահովության

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

իրավունքի իրականացումը», ակնհայտ է դառնում, որ քարտի կիրառումը տարածվել է օրենքում նշված ոլորտից դուրս. 1-ին կետում (աշխատավարձի եւ հատուցման մասով), 2 կետում (հարկեր, տուրքեր, պարտադիր այլ վճարներ), 3 կետում (կազմակերպությունների կողմից նույն գործառնությունների հետ կապված տեղեկատվական բազաները վարելու ժամանակ), 4 կետում (բանկային ոլորտ), իսկ 5 կետը, որ նախատեսված է քարտերի կիրառումը «պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական եւ համայնքային ենթակայության կազմակերպությունների թղթային եւ ինքնաշխատ տեղեկատվական բազաները վարելու ժամանակ», ըստ էության վերացնում է կիրառման ոլորտի գաղափարն իսկ:

«Անհատական տվյալների ավտոմատացված մշակման հետ կապված՝ անձանց պաշտպանության մասին» Եվրոպական Կոնվենցիայի (28.01.1982) 5 հոդվածը սահմանում է, որ ավտոմատ մշակման ենթակա անձնական տվյալները պետք է պահպեն եւ օգտագործվեն դրանց համար օրենքով նախատեսված նպատակների համար, համապատասխան, համարժեք այդ նպատակներին, չգերազանցեն դրանց, թույլ տան անձի նույնականացումը ոչ ավելի, քան նախատեսվել է այդ նպատակներով, նաև չօգտագործվեն այդ նպատակներին հակառակ: «Սոցիալական ապահովության նպատակներով օգտագործվող անհատական տվյալների պաշտպանության մասին» Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի No R(86)1 (23.01.1986) Հանձնարարականով սահմանված է, որ սոցիալական ապահովության համար նախատեսված տվյալների մասին տեղեկատվությունը չի կարող օգտագործվել սոցիալական ապահովության շրջանակներից դուրս, սոցիալական ապահովության հետ առնչություն չունեցող նպատակներով (Սկզբունք 4.3):

Ըստ Սահմանադրության **3 հոդվածի 2-րդ մասի**, պետությունը պաշտպանում է մարդու իրավունքները «միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան»: Հետեւաբար, օրենքի 11 հոդվածի 1 մասն ամբողջությամբ, հակասելով միջազգային իրավունքին, չի ապահովում նաև Սահմանադրության հիշյալ նորմի գործողությունը: Միաժամանակ օրենքի 11 հոդվածի 1 մասն անտեսում է **Սահմանադրության 23 հոդվածի** այն նորմը, որով «արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին»:

3. Օրենքի 11 հոդվածի 4 մասը սահմանում է. ««Սոցիալական քարտը հոգեւոր խնդիրներին չի առնչվում եւ մարդու խղճի եւ կրոնական համոգմունքների դեմ չի կարող օգտագործվել»: Դիմող կողմը նշել է նաև այս դրույթի հակասությունը ՀՀ Սահմանադրությանը: **Պատասխանող կողմը** ես իր եզրափակիչ ելույթում **համաձայնեց այդ պնդման հետ**: Գտնում ենք, որ «կրոնական համոգմունքների դեմ» քարտի օգտագործման արգելքի սահմանումը ոչ միայն կոռեկտ չէ, այլև առաջացնում է հավելյալ սահմանադրական խնդիր: Իրավակիրառական պրակտիկայում քարտն օգտագործվում է ոչ թե համոգմունքների, այլ այն կրող անձի դեմ. համոգմունքը չէ, որ զրկվում է ապրուստի միջոցից, այլ անձը: Բայց ավելի վտան-

գավոր հակասահմանադրական հետեւանքներով է հղի այն, որ վերոհիշյալ լրացումով օրենսդիրը սահմանափակվել է «կրոնական համոզմունքների դեմ» քարտն օգտագործելու արգելքով՝ լրացում, որը ոչ միայն չի վերացնում **Սահմանադրության 27 հոդվածի** հետ կապված խնդիրն, այլ ավելի ցայտուն է դարձնում այն: Զեւակերպումից, ըստ որի քարտը «չի կարող օգտագործվել կրոնական համոզմունքների դեմ», բխում է, որ այլ համոզմունքների դեմ օգտագործվել կարող է: Հետեւաբար, օրենքի 11 հոդվածի 4-րդ կետը վտանգում է Սահմանադրության 27 հոդվածի պահանջների իրագործումը:

4. Հասկացութային անորոշությանը գումարվում են օրենքի ներքին հակասությունները, որոնց առկայությունը հաստատեց նաև պատասխանող կողմը: Սրանցից կարեւորագույնը՝ «իրավունք» և «պարտականություն» հասկացությունների շփորձն է, որն առավել ցայտուն է օրենքի 11 հոդվածի հետ համակարգային առումով փոխսկապակցված 13 հոդվածում:

Օրենքի 13 հոդվածի 1-ին մասում նշված է, որ «քաղաքացին **իրավունք** ունի՝ 1) ստանալ սոցիալական քարտ», իսկ 2-րդ մասի 2-րդ կետում՝ որ «քաղաքացին **պարտավոր** է [...] իր սոցիալական քարտը ներկայացնել այն մարմիններին, որոնց դա անհրաժեշտ է սույն օրենքի 11-րդ հոդվածի պահանջները կատարելու համար»: Օրենքի 11 հոդվածի 1 մասում թվարկվում են ոլորտները, որոնցում օգտագործվելու են քարտերը: Սահմանադրական դատարանի որոշման պատճառաբանական նասում նշված է. «13 հոդվածի 1-ին մասի համատեքստում դա նշանակում է, որ նշված ոլորտներում քարտն օգտագործվելու է միայն այն քաղաքացիների մասով, որոնք օգտվել են սույն օրենքով իրենց ընձեռած իրավունքից եւ ստացել են սոցիալական քարտ: Մինչդեռ նույն 11 հոդվածի 2-րդ մասի ուժով քարտի կիրառումը 1-ին մասով թվարկած ոլորտներում դառնում է համընդիանուր պարտադրանք, անկախ նրանից, օգտվե՞լ է քաղաքացին 13 հոդվածի 1-ին մասով սահմանած իր իրավունքից թե ոչ»: Այնուհանդերձ, խնդիրը չի կարող համարվել լուծված, եթե ուժի մեջ է մնում 13 հոդվածի հիշյալ պարտավորեցնող դրությը, որից, մեր կարծիքով, բխում են նույն հակասահմանադրական հետեւանքները, որոնք նշվեցին 11 հոդվածի 2 մասի առումով:

5. Օրենքի 13 հոդվածի 1 մասում թվարկված են քաղաքացու իրավունքները. 1) ստանալ սոցիալական քարտ, 2) ստանալ հայտի ձեւաթուղթ, 3) «դիմել տեղեկատվական բազայում ներառված իր անհատական տվյալներին ծանոթանալու» խնդրանքով եւ 4) դիմել նոր սոցիալական քարտ ստանալու խնդրանքով (եթե բազայում առկա են անձանություններ): Այս շարքը ո՞չ սպառիչ է, ո՞չ բավարար: Բացի այն, որ 1, 2 եւ 4 կետերում նշված իրավունքները նույն հոդվածի 2 մասում վերածվում են պարտավորության, 3 կետն էլ չի պարունակում որեւէ ուեալ իրավունք եւ անրովանդակ է. տեղեկատվական բազայում ներառված տվյալներն, ըստ օրենքի 6 հոդվածի 1 մասի եւ 7 հոդվածի 1 մասի, սույն անձնագրային տվյալներ են, որոնք քաղաքացին ինքն է ներկայացրել, ուրեմն դրանց ծանոթանալու խնդիր չունի: Մինչդեռ «իրավունքների» այս շարքում բացակայում է կարեւորագույն մի դրույթ, որով պիտի ապահովվեր համոզմունքներին հակասող

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

գործողություն պարտադրելու արգելքի պահանջը եւ համոզմունքը փոխելու իրավունքը: Գործին կցված փաստարդերում կա համոզմունքի հետեւանքով քարտից հրաժարվելու մասին քաղաքացիների հայտարարություն, որի տակ **ստորագրողների թիվը հասնում է 100 հազարի:** Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի նախագահի տեղեկանքում նշված է, որ սոցիալական քարտ չունենալու պատճառով 2006 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ թոշակ չեն ստացել **1317 թոշակառու:** Այս թվերի համարդությունը կարող է մոտավոր պատկերացում տալ, թե օրենքի կիրառման ընթացքում ո՞րքան քաղաքացի է պարտադրվել հակառակ իրենց համոզմունքներին ստանալ սոցիալական քարտ: Իրավիճակի հակասահմանադրական հետեւանքները վերացնելու համար կարեւորում ենք **քարտից հրաժարվելու իրավունքը:** Այս նորմի բացակայությունը չի ապահովում օրենքի 13 հոդվածի 1 մասի ներդաշնակությունը Սահմանադրության **26 հոդվածի 1 մասի** (կրոնը կամ համոզմունքները փոխելու իրավունք) եւ **27 հոդվածի 1 մասի** (մարդուն՝ իր կարծիքից հրաժարվելու հարկադրանքի արգելք) նորմերի հետ:

6. Սահմանադրական դատարանի որոշման պատճառաբանական մասում, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9 կետի, նաև նշված են վիճարկվող հոդվածի հետ համակարգային առումով փոխկապակցված օրենքի 7 հոդվածի որոշ նորմերի գործողության հակասահմանադրական հետեւանքները :

Մասնավորապես, նշվել է, որ օրենքի 7 հոդվածի 1 մասի 4 կետը, ներառելով սոցիալական քարտերի տեղեկատվական բազայում ծննդյան վկայականի համարը մինչեւ 16 տարեկան քաղաքացիների համար, պարտադրում է սոցիալական քարտը նաև երեխաներին, հաշվի չառնելով, որ երեխան ո՛չ աշխատանքային հարաբերությունների սուբյեկտ է, ո՛չ թոշակառու, ո՛չ հարկատու: Նշվել է նաև, որ «օրենքի այս դրույթի եւ 11 հոդվածի 2 մասի ուժով, ծննդի համոզմունքի հետեւանքով իրեն հասանելիք նպաստից զրկվում է երեխան»: Որոշման այս մասում արձանագրվել է նաև, որ երեխաների նպաստի հարցի կախվածությունը սոցիալական քարտից խոչընդոտում է Սահմանադրության **34, 37 եւ 48 (1 կետ)** հոդվածների դրույթների իրականացմանը, իսկ չհամապատասխանելով Երեխայի իրավունքների մասին Կոնվենցիայի 3 հոդվածի նորմին, խոչընդոտում է նաև **Սահմանադրության 3 հոդվածի** նորմերի իրագործմանը: Գտնում ենք, որ պետք է նշել օրենքի այս դրույթի հակասությունը երեխաների իրավունքների հետ նաև այն առումով, որ նորմը պարտադրում է քարտը դեռ իր համոզմունքներն ու հայացքները չձեւավորված երեխային, չվերապահելով նրան՝ հայացքները ձեւավորվելուց հետո քարտից հրաժարվելու իրավունքը: Հետեւարքը, այս նորմը խախտում է նաև երեխայի՝ ապագայում համոզմունք ունենալու եւ դրան համապատասխան վարվելու իրավունքնը, այսինքն՝ **Սահմանադրության 26 եւ 27 հոդվածների** պահպանչներին:

7. Օրենքի 7 հոդվածի 3 մասը վերաբերում է համակարգի համար կարեւոր սահմանադրական հարցին՝ տվյալների գաղտնիության պաշտպանությանը: Զաղաքացու ներկայացրած անձնագրային տվյալների հիման

Վրա կազմված թվանիշը՝ սուկ «բանալի» է դեպի այն տվյալները, որոնք մասնավորապես արտացոլելու են նրա նյութական վիճակը, որը գոյանում է օրենքի 11 հոդվածում թվարկած գործառնությունների ժամանակ: Հենց այս տվյալների գաղտնիութունը պիտի պահպանվի, այնինչ ըստ օրենքի 7 հոդվածի 3 մասի, օրենքով սահմանված կարգով պաշտպանվելու է ոչ թե սրանց, այլ «*սոցիալական քարոզ սրանալու համար ներկայացված անհատական տվյալների գաղտնիությունը*»: Այս դրույթը սահմանափակում է գաղտնիության պաշտպանության հարցը միայն քարտ ստանալու համար քաղաքացու կողմից ներկայացված անձնագրային տվյալներով, որոնց գաղտնիության պահպանման խնդիր չկա: Մյուս կողմից, օրենքը չի նախատեսել գաղտնիությունը պաշտպանելու որեւէ մեխանիզմ: Սրան ավելանում է «անհատական տվյալներ» հասկացության անորոշությունը: Հետեւարար, չկա որեւէ երաշխիք, որ օրենքն ի նկատի ունի սուկ թվարկած ոլորտներին առնչվող տեղեկությունները: Դրանով իսկ հակասելով Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 8 հոդվածին, Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին, այս նորմը չի ապահովում **Սահմանադրության 3 հոդվածի** գործողությունը, միեւնույն ժամանակ ընդլայնում է **Սահմանադրության 23 հոդվածում** ամրագրված՝ անձնական կյանքի հանդեպ հարգանքի իրավունքի ուժնահարման հնարավորությունը:

Եզրափակիչ մաս.

1. «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի 1 մասի առաջին նախադասությունը՝ մշակվելու ենթակա անհատական տվյալների շրջանակը չնշելու հիմքով, նույն հոդվածի 1 մասի 1 կետը (աշխատավարձի եւ հատուցման մասով), 2, 3, 4 եւ 5 կետերը՝ սոցիալական ապահովության միջոց հանդիսացող փաստաթոթի (քարտի) գործողությունը սոցիալական ապահովության ոլորտից դուրս տարածելու եւ միմյանց հետ առնչություն չունեցող տվյալների միավորումը հնարավոր դարձնելու հիմքով, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 6 (1 եւ 2 մասեր) եւ 23 հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

2. «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի 2 մասը, բացի որոշման մեջ նշված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հոդվածների, ճանաչել նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14.1, 26 (1 մաս), 27 (1 մաս) հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

3. «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի 4 մասը՝ միայն կրոնական համոզմունքների դեմ քարտի օգտագործումն արգելելու եւ այլ համոզմունքների դեմ այն օգտագործելու արգելքը չնախատեսելու հիմքով, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27 հոդվածի (1 մաս) պահանջներին հակասող եւ անվավեր:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4. «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի հետ համակարգային առումով փոխվազակցված 7 հոդվածի 1 մասի 4 կետը՝ անշահահասների մասով ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 6 (1 եւ 2 մասեր), 34, 37 եւ 48 (1 կետ) հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

5. «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի 7 հոդվածի 3 մասը՝ բացի անձնագրային տվյալներից քարտի համարի տակ կուտակվելիք այլ տվյալների գաղտնիության պաշտպանության խնդիրը անտեսելու հիմքով ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 6 (1 եւ 2 մասեր) եւ 23 հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

6. «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի հետ համակարգային առումով փոխվազակցված 13 հոդվածի 1-ին մասը՝ արդեն ստացած քարտից համոզմունքի հետեւանքով հրաժարվելու իրավունքը չնախատեսելու, հետեւաբար համոզմունքը փոխելու ազատության նսեմացման հիմքով ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6 (1 եւ 2 մասեր), 26 (1 մաս) հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

7. «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածի 2 մասի 2-րդ կետը՝ նույն հիմքերով, որոնք նշված են օրենքի 11 հոդվածի 2 մասի առումով, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 6 (1 եւ 2 մասեր), 14.1, 26 (1 մաս), 27 (1 մաս), 31, 32 (2 մաս), 37, 42, 43 եւ 48 (կետ 12) հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

ՀՀ ՍՊ անդամներ

**ՌԱՖԱՅԵԼ ՊԱՊԱՅԱՆ
ՎԱԼԵՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
ՖԵԼԻՔՍ ԹՈԽՅԱՆ**

13. 10. 2006



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՅԻ ՍԱՐԳՅՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻ ՕՐԵՆՍԳՐՔԻ 280 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՎ ՀՀ
ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 100 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ Բ
ՀԱՍՊԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

10 հոկտեմբերի 2006թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (գեկուցող), Հ. Դանիելյանի, Ֆ. Թոփյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմող՝ քաղ. Ս. Հակոբյանի եւ պատասխանող կողմին ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի օրենսդրության վերլուծության եւ զարգացման վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1 կետի, 101 հոդվածի 6 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25 եւ 69 հոդվածների,

դոմքաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Սարգյուլ Հակոբյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 280 հոդվածի 1-ին մասի եւ ՀՀ հոդվածի օրենսգրքի 100 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ս. Հակոբյանի դիմումն է սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործի նյութերը, սույն գործով գեկուցողի հաղորդումը եւ կողմերի բացատրությունները, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝

Պ Ա Ր Զ Ե Յ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն (ԶՕ) ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի մայիսի 5-ին: Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից այն ստորագրվել է 1998թ. հունիսի 28-ին եւ «ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի համաձայն ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 1-ից:

ՀՀ հողային օրենսգիրքն (ՀՕ) ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2001 թվականի մայիսի 5-ին: Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել է 2001 թվականի հունիսի 4-ին եւ ուժի մեջ է մտել 2001 թվականի հունիսի 15-ից:

ԶՕ 280 հոդվածը վերնագրված է՝ «Սեփականության իրավունքից հրաժարվելը»: ԶՕ 280 հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Քաղաքացին կամ իրավաբանական անձը կարող է հրաժարվել իրեն պատկանող գույքի սեփականության իրավունքից՝ այդ մասին գրավոր հայտարարելով կամ այնպիսի գործողություններ կատարելով, որոնք ակնհայտ վկայում են գույքի տիրապետումից, օգտագործումից եւ տնօրինումից նրա մեկուսացման մասին՝ առանց այդ գույքի նկատմամբ որևէ իրավունք պահպանելու մտադրության»:

ՀՕ 100 հոդվածը վերնագրված է՝ «Հողամասերի նկատմամբ քաղաքացիների եւ իրավաբանական անձանց իրավունքների դադարման հիմքերը»: ՀՕ 100 հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է. «Հողամասերի նկատմամբ քաղաքացիների եւ իրավաբանական անձանց սեփականության իրավունքները դադարում են».

ա) հողամասից կամովին հրաժարվելու դեպքում [...]»:

2. Վիճարկելով ԶՕ 280 հոդվածի 1-ին մասի եւ ՀՕ 100 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի սահմանադրականությունը, դիմողը գտնում է, որ «...դրանք հակասում են ՀՀ Սահմանադրության 3 հոդվածին, 8 հոդվածի 1-ին պարբերությանը, 31 հոդվածի 2-րդ պարբերությանը» եւ իր դիրքորոշումները հիմնավորում է հետեւյալով.

ա/ ԶՕ եւ ՀՕ վիճարկվող դրույթները չեն համապատասխանում իրավական որոշակիության պահանջներին, քանի որ չեն սահմանում գույքի նկատմամբ սեփականության իրավունքից հրաժարվելու եւ այդ հիմքով գույքի նկատմամբ սեփականության իրավունքի դադարման բավարար հատակ ձեւակերպված ընթացակարգ.

թ/ ԶՕ եւ ՀՕ վիճարկվող դրույթները չեն հստակեցնում գույքի նկատմամբ սեփականության իրավունքից հրաժարվելու մասին գրավոր հայտարարության, գույքի նկատմամբ սեփականության իրավունքից հրաժարվելու մասին ակնհայտորեն վկայող գործողությունների, գույքից կամովին հրաժարվելու բովանդակությունը, չեն սահմանում գույքի նկատմամբ սեփականության իրավունքից հրաժարվելու դեպքերում սեփականության իրավունքի դադարման հատակ ձեւակերպված ընթացակարգ, ինչպիսի պարագայում դատական մարմինները վիճարկվող դրույթներին տվել են կամայական մեկնաբանություն՝ գույքից հրաժարվելու մասին գրավոր հայտարարություն կամ գույքից հրաժարվելու մասին ակնհայտությունը»:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

թեն վկայող գործողություններ, կամ գույքից կամովին հրաժարում դիտարկելով չիազորված անձի կողմից սեփականատիրոջ անունից, նրա անտեղյակության պայմաններում օրենքի խախտմամբ գրված, անստորագիր հայտարարությունը,

գ/ ՔՕ եւ ՀՕ վիճարկվող դրույթները չեն ապահովում սեփականության իրավունքի ճանաչման եւ պաշտպանության արդյունավետ երաշխիքներ:

Դիմողն իր դիրքորոշումների հիմնավորման համար վկայակոչում է նաև ՀՀ սահմանադրական դատարանի 2006թ. ապրիլի 18-ի թիվ 630 որոշման 11-րդ կետի 6-րդ պարբերության դրույթները, որոնց համաձայն՝ «...օրենքը պետք է համապատասխանի ... Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որեւէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ճետակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»:

Սահմանադրական դատարանի նշված դիրքորոշման հիման վրա դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթները, «...որոնք նախատեսել են սեփականությունից զրկելու դեպքեր...», չեն կարող ՀՀ Սահմանադրության 31 հոդվածի 2-րդ պարբերության իմաստով դիտարկվել որպես օրենք:

3. Պատասխանող կողմը, առարկելով դիմող կողմի փաստարկների դեմ, նշում է, որ գույքից հրաժարվելու մասին գրավոր հայտարարությանը վերաբերող հստակ ընթացակարգ գոյություն է ունեցել ինչպես 1997թ. գործող, այնպես էլ ներկայումս գործող օրենսդրությամբ: Այսպես, «Զաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ գանգատները քննարկելու կարգի մասին» 1990թ. դեկտեմբերի 4-ի ՀՀ օրենքի 2-րդ կետը սահմանում է. «Զաղաքացու գրավոր դիմումը պետք է ստորագրված լինի, նշելով ազգանունը, անունը, հայրանունը եւ առաջարկության, դիմումի կամ գանգատի էության շարադրանքից բացի, նաև տվյալներ բովանդակի նրա բնակության կամ աշխատանքի կամ ուսման վայրի մասին»: Հայտարարությունը նույնականացնելու դիմում է, հետեւաբար, դրա վրա նույնականացնելու դիմումի մեջ պահանջները, եւ այդ պահանջների՝ ՀՀ քաղաքացիական եւ հողային օրենքով սահմանված պահանջները, եւ այդ պահանջների՝ ՀՀ քաղաքացիական պահանջները համապատասխան առանձին ամրագրումն ավելորդություն է:

Ըստ պատասխանող կողմի՝ ներկայումս գործող «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 31 հոդվածը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները, իսկ բուն օրենքը, մասնավորապես՝ դրա 28 եւ 29 հոդվածները հանգամանորեն կարգավորում են վարչական վարույթի իրականացման մեխանիզմը: Հողից հրաժարվելու դիմումի առթիվ նույնականացնելու դիմումը կարգավորության պահանջները հարուցվում է վարչական վարույթ, հետեւաբար՝ օրենքով այդ հարաբերությունները հստակ կարգավորված են եւ իրավական որոշակիության առումով որեւէ հակասություն գոյություն չունի:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Պատասխանող կողմն անընդունելի է համարում դիմողի այն պնդումը, որ օրենքը «պետք է կոնկրետ թվարկեր գույքից հրաժարվելն ակնհայտորեն վկայող գործողությունները, որպեսզի դատարաններն այդ գործողությունների առկայությունը հաստատելով՝ որոշում կայացնեին»։ Ըստ պատասխանողի՝ օրենքով հնարավոր չէ թվարկել բոլոր հնարավոր գործողությունները։ Դրանք կարող են հանդես գալ ինչպես գործողության՝ հրաժարվելու մասին հայտարարության, այնպես էլ անգործության՝ հարկերը շմուծելու, հողամասը չմշակելու եւ այլնի ձևով։

Ըստ պատասխանողի՝ գործի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հենց դիմումից մի քանի այդպիսի գործողություններ են կատարվել։ Բացի դիմումից եւ ստացականից, գործում առկա են եղել նաև զյուղապետարանի կողմից տրված տեղեկանքն այն մասին, որ դիմողը հողանաս չունի 2000թ. փետրվարի 1-ի դրությամբ, եւ նա այդ տեղեկանքի շնորհիվ ընդգրկվել է սոցիալական ապահովության «Փարոս» համակարգում, որի մասին տեղեկանքը նույնպես առկա է քաղաքացիական գործում։ Թե՛ւ դիմողն իր բացատրությունում նշում է, որ մինչեւ օրս էլ ինքը հարկային մարմիններից ծանուցումներ է ստանում հողի հարկի վճարումների վերաբերյալ, սակայն գործում առկա է հարկային մարմնի գրությունն այն մասին, որ դիմումը մինչեւ 1999թ. վճարել է հողի հարկը, իսկ 2000-2003թթ. համար չի ներկայացվել որպես հողի սեփականատեր։ Պատասխանողի կարծիքով, սա նույնպես կարելի է դիտել որպես սեփականության իրավունքից հրաժարվելու ձև։

Ըստ պատասխանող կողմի՝ դիմուի բերած հիմնավորումներն ու եզրահանգումները բավարար հիմք չեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 280 հոդվածի 1-ին մասում եւ ՀՀ հողային օրենսգրքի 100 հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ամրագրված դրույթները «ՀՀ Սահմանադրության 3 հոդվածին, 8 հոդվածի 1-ին պարբերությանը, 31 հոդվածի 2-րդ պարբերությանը հակասող ճանաչելու համար»։

4. Դիմումին կից ներկայացված նյութերի եւ դատական ակտերի հիման վրա ուսումնասիրելով գործի հանգանաքները եւ վիճարկող դրույթների իրացմանն ուղղված՝ տարբեր դատական ատյանների դիրքորոշումները, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, մի դեպքում, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական գործերով վերաբննիչ դատարանի 2005 թվականի մայիսի 19-ի թիվ 05-490 գործով կայացված վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը մերժվել՝ հիմք ընդունելով, որ.

ա) Սարգոյն Հակոբյանը հակընդդեմ հայցի մասով ոչ պատշաճ պատասխանող է,

բ) համայնքի ղեկավարի կողմից որոշում չի կայացվել վիճելի հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու վերաբերյալ, եւ այն օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցում չի ստացել,

գ) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48 հոդվածին համապատասխան արժանահավատ ապացույցներ չեն ներկայացվել վիճելի հողամասը 240 ԱՄՆ դոլարով վաճառելու վերաբերյալ,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

դ) հողից հրաժարվելու վերաբերյալ դիմումն ստորագրված չէ:

Դիմումին կից ներկայացված մյուս դատական ակտերով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը բավարարվել՝ հիմք ընդունելով.

ա) ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավանի գյուղապետարանում կազմված՝ «Հողից հրաժարվածների ցուցակը»,

բ) 01.02.2002թ. ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավանի գյուղապետարանի կողմից տրված տեղեկանքն այն մասին, որ Սարգսով Հակոբյանը հողամաս չունի,

գ) Վիճելի հողամասը 240 ԱՄՆ դոլարով վաճառելու վերաբերյալ ստացականը:

Դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքների համաձայն.

ա) Արագածավանի հողային բարեփոխումների եւ սեփականաշնորհման հանձնաժողովի 17.04.1991թ. թիվ 5 որոշմամբ դիմումին հատկացվել է 1,65 հեկտար գյուղատնտեսական նշանակության հող՝ գրանցված 207,008 ծածկագրի ներքո,

բ) նշված որոշման հիման վրա դիմումը 2003թ. մարտի 12-ին ստացել է սեփականության իրավունքի վկայական,

գ) հողից հրաժարվելու վերաբերյալ դիմումն ստորագրված չէ,

դ) առկա չէ դիմումի սեփականության իրավունքի դադարման մասին համապատասխան որոշումը,

ե) Վիճելի հողամասը 240 ԱՄՆ դոլարով վաճառելու վերաբերյալ ստացականը պարունակում է դիմումի անձնագրային տվյալների հետ չհամընկնող անձնագրային տվյալներ (ստացականի բովանդակությունը մեջբերված է՝ ՀՀ քաղաքացիական գործերով վերաբենիչ դատարանի 30.11.2005թ. վճռում):

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ այս հանգամանքների գնահատումն ընդհանուր իրավասության դատարանների խնդիրն է: Նշված փաստաթղթերի եւ դրանց առնչվող գործողությունների օրինականության հարցը կարող էր նաև քննության առարկա դառնալ քրեական հարաբերությունների համատեքստում: Այդ առումով, սահմանադրական դատարանը նպատակահարմար է գտնում գործի նյութերը տրամադրել ՀՀ գլխավոր դատախազությանը:

5. Սահմանադրական դատարանը դիմումի առարկայի շրջանակներում գնահատելով դիմող կողմից փաստարկներն իրավական նորմերի սահմանադրականության առնչությամբ, գտնում է, որ նշված նորմերի սահմանադրականության հարցը քննության առարկա կարող է հանդիսանալ այլ նորմերի հետ համակարգային փոխկապվածության համատեքստում: Այդ տեսանկյունից առանձնահատուկ կարեւորություն ունեն նախ՝ ՀՕ 280 հոդվածի 2-րդ մասի դրույթները, համաձայն որոնց՝ «Սեփականության իրավունքից հրաժարվելը հիմք չէ գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքները եւ պարտականությունները դադարելու համար, մինչեւ այլ անձի կողմից այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բե-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

բելը»: Երկրորդ՝ հողի նկատմամբ սեփականության իրավունքից հրաժարվելու կարգը սահմանված է ՀՕ 101 հոդվածում:

Միաժամանակ, ճիշտ չէ դիմողի պնդումն առ այն, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 280 հոդվածի 1-ին մասի եւ ՀՀ հոդային օրենսգրքի 100 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթները «...նախատեսել են սեփականությունից զրկելու դեպքեր»: Նշված իրավական նորմերը կարգավորում են սեփականության իրավունքի դադարման իրավահարաբերությունները՝ սեփականատիրոջ կամովին հրաժարման պայմաններում:

Սեփականության իրավունքի օրենսդրական ապահովման միջազգային փորձի եւ ՀՀ օրենսդրության համեմատական վերլուծությունը վկայում է, որ դատաքննության առարկայի տեսանկյունից հիմնական եւ ընդհանրական մոտեցումն այն է, որ.

1) սեփականության իրավունքից հրաժարվելը մարդու եւ քաղաքացու իրավունք է, որով անձը հրաժարվում է կոնկրետ գույքի նկատմամբ տիրապետում, տնօրինման եւ օգտագործման իր իրավունքից,

2) սեփականության իրավունքի պաշտպանվածության երաշխիքների առումով, ինչպես նաև նկատի ունենալով, որ սեփականության իրավունքից հրաժարումը կարող է շոշափել այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը, հրաժարումը պետք է օրենսդրության հստակ կանոնակարգված լինի,

3) հրաժարումը քաղաքացու կողմից պետք է օրենքով սահմանված կարգով հայտարարվի կամ այնպիսի գործողությունների հետեւանք լինի, որոնք ակնհայտորեն վկայում են նման մտադրության մասին,

4) սեփականության իրավունքից հրաժարվելը հիմք չէ գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքները եւ պարտականությունները դադարելու համար՝ մինչեւ այլ անձի կողմից այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելը:

Այս ընդհանուր պայմաններն անհրաժեշտ ու բավարար են սեփականության իրավունքից հրաժարվելու՝ մարդու եւ քաղաքացու իրավունքը երաշխավորելու համար:

Որքանով են տարբեր երկրների օրենսդրությամբ ամրագրված այս մոտեցումներն առկա մեր օրենսդրության մեջ: Այդ հարցի սպառիչ պատասխանը, դիմումի առարկայի շրջանակներում, կարող ենք ստանալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 280 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի, ՀՀ հոդային օրենսգրքի 100 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի եւ 101 հոդվածի, «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ գանգատները քննարկելու կարգի մասին» 04.12.1990թ. օրենքի 2-րդ կետի, «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» 24.11.1999թ. օրենքի հոդված 2-ի, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» օրենքի 31 հոդվածի եւ 50 հոդվածի 1-ին մասի ա) կետի համեմատական վերլուծության արդյունքում: Նշված իրավական նորմերի համարումը վկայում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 280 հոդվածը սահմանել է սեփականության իրավունքից հրաժարվելու ընդհանուր իրավական հիմքը, իսկ ՀՀ հոդային

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

օրենսգրքի 100 և 101 հոդվածները՝ հոդամասի նկատմամբ քաղաքացիների եւ իրավաբանական անձանց իրավունքների դադարման համատեքստում, հստակ ու որոշակի կանոնակարգել են հոդամասից հրաժարվելու հիմքերը, մասնավորապես՝ հաշվի առնելով նաև ՀՀ Սահմանադրության 3, 8 և 31 հոդվածների պահանջները։ Մասնավորապես, ՀՀ հոդային օրենսգրքի 101 հոդվածով սահմանվում է։

1. Հոդամասի նկատմամբ իրավունքները դադարում են նման իրավունքներ ունեցող քաղաքացու կամ իրավաբանական անձի՝ հոդամասից կամովին հրաժարվելու մասին դիմումի հիման վրա։

2. Հոդամասից կամովին հրաժարվելու դեպքում քաղաքացիները կամ իրավաբանական անձինք այդ մասին դիմում են ներկայացնում համայնքի վարչական սահմաններում համայնքի ղեկավարին (Երեւան քաղաքում՝ Երեւանի քաղաքապետին), համայնքի վարչական սահմաններից դուրս՝ մարզպետին։

3. Դիմումն ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, համայնքի ղեկավարը կայացնում է որոշում համապատասխան հոդամասը համայնքային սեփականություն, իսկ Երեւանի քաղաքապետը կամ մարզպետը՝ պետական սեփականություն ճանաչելու վերաբերյալ։ Ընդ որում, համայնքի ղեկավարի, մարզպետի, Երեւանի քաղաքապետի որոշումը ենթակա է պետական գրանցման՝ օրենսդրությանը սահմանված կարգով։

Խնդիրը տվյալ պարագայում ոչ թե իրավական նորմի անհստակությունն է, այլ այն, թե ինչպես է այն կիրառվել դատական պրակտիկայում։

6. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 280 հոդվածի 1-ին մասի այն դրույթի առնչությամբ, համաձայն որի սեփականության իրավունքից հրաժարվելը նախատեսվում է նաև «...այնպիսի գործողություններ կատարելով, որոնք ակնհայտ վկայում են գույքի տիրապետումից, օգտագործումից եւ տնօրինումից նրա մեկուսացման մասին՝ առանց այդ գույքի նկատմամբ որեւէ իրավունք պահպանելու մտադրության», ապա։

1) քաղաքացիական օրենսգրքի 280 հոդվածի խնդիրը չէ բոլոր հնարավոր ղեարերի թվարկումը։ Այդ հոդվածի առարկան է սեփականության իրավունքից հրաժարվելու երկու տարբեր իրավական հիմքերի ամրագրումը՝ այդ մասին գրավոր հայտարարելով կամ ակնհայտ գործողությամբ,

2) որպես սեփականության իրավունքի պաշտպանության երաշխիք է հանդես գալիս տվյալ հոդվածի 2-րդ մասը։

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Բ Ո Շ Ե Ց**։

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 280 հոդվածի 1-ին մասի եւ Հայաստանի Հանրապետության հոդային օրենսգրքի 100 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**10 հոկտեմբերի 2006 թվականի
ՍՊԸ-650**

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍՔՓԵԼՈՒ
ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՑՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ.**

Քաղ. Երեւան

10 հոկտեմբերի 2006թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալյայանի, Հ. Դանիելյանի,
Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի,
Ռ. Պապյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական
ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների եւ էկոնո-
միկայի նախարարի տեղակալ Ս. Ղարայանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100
հոդվածի 2 կետի, 101 հոդվածի 1 կետի, «Սահմանադրական դատարանի
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38, 63 եւ 72 հոդ-
վածների,

դրսաց նիստում գրավոր լճացակարգով քննեց «2005 թվականի հու-
նիսի 29-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության
կառավարության եւ Սիրիայի Արաբական Հանրապետության կառավա-
րության միջև եկամուտների կրկնակի հարկումից խուսափելու մասին
կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հան-
րապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը
որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի դիմումն է ՀՀ սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունները, հետազոտելով կոնվենցիան և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Սույն կոնվենցիան ստորագրվել է 2005թ. հունիսի 29-ին՝ Երևանում:

Կոնվենցիայի նպատակը երկու պայմանավորվող պետություններից մեջի կամ երկուսի ուղղիղենտ հանդիսացող անձանց եկամուտների կրկնակի հարկումից խոսափելն է:

2. Կոնվենցիան սահմանում է հետեւյալ հարկատեսակները. Հայաստանի դեպքում շահութահարլ եւ եկամտահարկ, Սիրիայի դեպքում՝ եկամտահարկ առեւտրային, արդյունաբերական եւ ոչ առեւտրային շահույթից, շարժական եւ անշարժ գույքից ստացվող եկամտից, ինչպես նաև աշխատավարձից եւ ոչ ուղղիղենտներից, սահմանված կամ հետագայում սահմանվելիք լրացուցիչ գանձումներից:

3. Կոնվենցիան ունի Արձանագրություն, որը դրա անբաժանելի մասն է:

4. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է, մասնավորապես.

ա/ ձեռնպահ մնալ Կողմերից մեկի կամ երկուսի ուղղիղենտ հանդիսացող անձանց ստացած այն եկամուտը հարկելուց, որի հարկման իրավունքը կոնվենցիայով վերապահված է մյուս Կողմին,

բ/ չհարկել այն ուսանողի, պրակտիկանտի կամ ստաժորի ապրելու, ուսանելու կամ մասնագիտանալու համար՝ Հայաստանից դուրս գտնվող արբյուրներից ստացած վճարումները, ով հանդիսանում է կամ անմիջապես մինչեւ Հայաստան ժամանելը հանդիսացել է մյուս Կողմի պետության ուղղիղենտ եւ գոտվում է Հայաստանում բացառապես իր ուսման կամ մասնագիտացման նպատակով,

գ/ ՀՀ ժամանելուց հետո 2 տարին չգերազանցող ժամանակահատվածում մյուս Կողմի այն ուղղիղենտին, որը Հայաստան է ժամանել համալսարան, գիտահետազոտական ինստիտուտ կամ այլ համանման ուսումնական հաստատություն հետազոտման կամ դասավանդման նպատակով, չհարկել դրանց դիմաց ստացած վարձատրության կապակցությամբ,

դ/ ապահովել, որպեսզի պայմանավորվող պետությունների իրավասումարմինները փոխանակեն այնպիսի տեղեկատվություն, որոնք անհրաժեշտ են կոնվենցիայում ընդգրկված հարկերի վերաբերյալ պայմանավորվող պետությունների ներքին օրենքների դրույթների կիրառման համար՝ պայմանով, որ այդ օրենքներով սահմանված հարկումը չի հակասի կոնվենցիային,

ե/ ճանաչել դիմանագիտական ներկայացուցչությունների եւ հյուպատուսական իիմնարկների անդամների՝ միջազգային իրավունքի ընդհանուր կանոններով կամ հատուկ համաձայնագրերով սահմանված հարկային արտոնությունները:

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62, 64 եւ 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Յ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Սիրիայի Արաբական Հանրապետության կառավարության միջեւ եկամուտների կրկնակի հարկումից խուսափելու մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**10 հոկտեմբերի 2006 թվականի
ՍԴ-651**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՑԻ ՀԵՆՐԻԿ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԽՄԱՆ ՎՐԱ՝
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 290 ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ
ՄԱՍԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

18 հոկտեմբերի 2006թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի /նախագահող/, Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Դուկասյանի /գելուցող/, Հ. Նազարյանի, Ռ. Պապյանի,

մասնակցությամբ՝ դիմող՝ քաղ. Հ Դանիելյանի և պատասխանող կողմի ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1 կետի, 101 հոդվածի 6 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25 և 69 հոդվածների,

դրեաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Հենրիկ Դանիելյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Հ Դանիելյանի դիմումն է սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործի նյութերը, սույն գործով գելուցողի գրավոր հաղորդումը եւ կողմների գրավոր բացատրությունները, հետազոտելով գործում առկա մյուս փաստարդերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998թ. հուլիսի 1-ին: Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից այն ստորագրվել է 1998թ. սեպտեմբերի 1-ին և համաձայն նշված օրենսգրքի 500 հոդվածի՝ այն ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 12-ից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածը վերնագրված է՝ «Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների անօրինական և անհիմն որոշումների եւ գործողությունների բողոքարկումը դատարան»:

Նշված հոդվածի 1-ին, 2-րդ եւ 3 -րդ մասերում ամրագրված է.

«1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների եւ գործողությունների օրինական եւ հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացնել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները եւ օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով եւ գործողություններով, եւ եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

2. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի եւ դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարծելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում:

3. Բողոքը կարող է ներկայացնել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան՝ այն մերժելու մասին տեղեկություն ստանալու կամ, եթե դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել, բողոք ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում»:

2. Դիմող կողմը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 3-րդ մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 3, 8, 19 եւ 31 հոդվածներին, քանի որ դատարաններում իր նկատմամբ կիրառելով այդ նորմը՝ պատճառաբանել են, որ ինքը մեկ ամսվա ընթացքում չի դիմել դատարան՝ դրանով բաց բողնելով բողոքարկման համար օրենքով սահմանված ժամկետը։ Տվյալ նորմը սահմանադրական չէ, քանի որ դրանում նշված չէ, որ պատասխանող դիմողին պետք է տեղյակ պահի ժամկետային սահմանափակման մասին։ Նման նշում չլինելու եւ իր անտեղյակության պատճառով փաստորեն սահմանափակվել է դատարան դիմելու իր իրավունքը, ինքը գրկվել է իր սեփականության դատական պաշտպանության իրավունքից, ինչպես նաև իր սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու եւ տնօրինելու հնարավորությունից։

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Դիմող կողմը գտնում է, որ նման վիճակ առաջացել է նաև քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում իրեն չտրամադրելու պատճառով:

3. Պատասխանող կողմն առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 290 հոդվածը նախատեսելով անձի՝ վարույթն իրականացնող մարմնի գործողություններն ու որոշումները բողոքարկելու իրավունքը, միաժամանակ նախատեսում է դրա իրականացման երկու պայման, որ նախ՝ բողոքը պետք է ներկայացվի վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան, եւ երկրորդ՝ բողոքը պետք է ներկայացվի այն մերժելու մասին տեղեկություն ստանալու, կամ, եթե դրա վերաբերյալ տեղեկություն չի ստացվել, բողոք ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում:

Դատական պաշտպանության հստակ ժամկետի սահմանումը, պատասխանող կողմի կարծիքով, նշված իրավունքի խախտում չի կարող դիտվել: ՀՀ քր. դատ. օր.-ը, մանրամասն կարգավորման ենթարկելով քրեական գործերի քննության եւ լուծման կազմը, կանոնակարգել է նաև դատավարական գործողությունների կատարման եւ որոշումների ընդունման ժամկետները: ՀՀ քր. դատ. օր.-ը նաև ժամկետներ է սահմանել ինչպես հետաքննության մարմնի, քննիչի եւ դատախազի որոշումների, այնպես էլ դատավճռի բողոքարկման համար: Մասնավորապես, ՀՀ քր. դատ. օր.-ի 379 հոդվածը սահմանում է վերաքննիչ բողոք բերելու 15-օրյա ժամկետ, որը չի կարելի դիտել որպես Սահմանադրության 20 հոդվածով նախատեսված՝ յուրաքանչյուրի՝ իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված կարգով վերադաս դատարանի կողմից վերանայման իրավունքի սահմանափակում: Նույն նկատառումներով չի կարելի պնդել, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 290 հոդվածի երրորդ մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 19 հոդվածին:

ՀՀ քր. դատ. օր.-ի 290 հոդվածի 3-րդ մասը, ըստ պատասխանողի, չի հակասում նաև ՀՀ Սահմանադրության 3 հոդվածին, քանի որ, ի տարբերություն նախկին ՀՀ քր. դատ. օր.-ի, ՀՀ քր. դատ. օր.-ը երաշխափորում է մարդու իրավունքները եւ ազատությունները, այդ թվում նաև՝ դրանց դատական պաշտպանության իրավունքը, սահմանում է դրա իրականացման հստակ մեխանիզմներ:

Պատասխանող կողմը գտնում է նաև, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 290 հոդվածի 3-րդ մասը սեփականության իրավունքի պաշտպանության հետ ուղղակի առնչություն չունի:

4. Գործի հանգամանքների պարզումը վկայում է, որ ՀՀ Պանիելյանը 27.09.04թ. եւ 15.10.04թ. դիմել է ՀՀ գլխավոր դատախազին՝ հայտնելով, որ 1983թ. օրինական կարգով ամուսնացել է քաղ. Ռ. Սարգսյանի հետ: 1996թ. ինքը վաճառել է իր երկուսենյականց բնակարանը եւ գնել մեկսենյականց բնակարան, որը ձեւակերպել է կնոջ՝ Ռ. Սարգսյանի անվանք: Վերջինս մահացել է 24.08.2003 թվականին: Նրա մահից հետո դիմողին

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

հայտնի է դարձել, որ այդ մեկսենյականոց բնակարանը 27.06.2003թ. իբր կտակվել է իր կնոջ քրոջը՝ Ս. Սարգսյանին: Նա գտնում է, որ այդ գործարքը կեղծ է՝ կնոջ հարազատները նոտարների միջոցով ցանկացել են խարդախությամբ տիրանալ իր կողմից գնված՝ վերը նշված բնակարանին, եւ խնդրել է նրանց ենթարկել քրեական պատասխանատվության՝ վկայակոչելով նաև, որ ««Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 5 կետի համաձայն նոտարի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցել միայն ՀՀ գլխավոր դատախազը»:

Հ. Դանիելյանի դիմումն ուղարկվել է Արարկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների դատախազին, որն էլ իր հերթին հանձնարարել է Արարկիրի ոստիկանությանը հետաքննություն իրականացնել: Վերջինիս նախապատրաստած նյութերով 20.12. 2004թ. որոշում է կայացվել մերժել քրեական գործի հարուցումը՝ հանցակազմի բացակայության պատճառով:

ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ ստուգվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունը եւ քննչական վարչության դատախազը 2005թ. փետրվարի 2-ին Հ. Դանիելյանին պատասխանել է, որ վարչությունում ուսումնասիրել են Արարկիրի ոստիկանության կողմից նյութերի ընթացքը լուծվել է օրենկանական այն վերացնելու հիմքեր չկան, հարցը կրում է քաղաքացիական բնույթ եւ այն պետք է լուծվի դատական կարգով: Դրանից հետո Հ. Դանիելյանը 21.02.06թ. կրկին դիմել է գլխավոր դատախազին՝ խնդրելով քրեական գործ հարուցել իր բնակարանին առնչվող գործողությունների հետ կապված, կամ իրեն տրամադրել նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու որոշում, որպեսզի ինքը հնարավորություն ունենա այն բողոքարկել դատարան: Սակայն պատասխան չի ստացել:

Հ. Դանիելյանը գտել է, որ ինքն իրավունք ունի դատախազության գործողությունները բողոքարկել դատարան՝ 03.04.2006թ. դիմելով Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանին՝ խնդրելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 5-րդ կետի համաձայն պարտավորեցնել ՀՀ գլխավոր դատախազությանը քրեական գործ հարուցել իր բնակարանը «խարդախությամբ տիրանալու փորձ անող անձանց նկատմամբ»:

Վերը նշված դատարանը 05.04.06թ. որոշմամբ բողոքը թողել է առանց քննության, պատճառաբանելով, որ ՀՀ դատախազությունից պատասխան ստանալուց հետո Հ. Դանիելյանը ՀՀ քր. դատ. օր.-ի 290 հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում՝ մեկ ամսվա ընթացքում, չի դիմել դատարան:

Առաջին ատյանի դատարանի որոշումը Հ. Դանիելյանը բողոքարկել է վերաքննիչ դատարան: Վերաքննիչ դատարանը 04.05.2006թ., շմատնանշելով ՀՀ քր. դատ. օր.-ի որեւէ նորմ, Հ. Դանիելյանի վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության՝ հետեւյալ պատճառաբանությամբ. «Նկատի ունենալով, որ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի եւ օվերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմին-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ների որոշումների եւ գործողությունների բողոքարկման արդյունքում, վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարանի որոշումները վերջնական են եւ բողոքարկման ենթակա չեն»:

Վերը նշված որոշման դեմ Հ. Դանիելյանը բողոք է ներկայացրել ՀՀ վճռաբեկ դատարան: Վերջինս բողոքը բողել է առանց քննության՝ պատճառաբանելով, որ ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի համաձայն վճռաբեկ դատարանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, հանդիսանում է ՀՀ բարձրագույն դատական ատյանը եւ կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: Այդ պայմաններում օրինական ուժի մեջ չմտած մինչդատական վարույթի, այդ թվում քրեական գործի հարուցումը մերժելու հետ կապված հարցերի բողոքարկումը բարձրագույն դատական ատյան, չի բխում վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակից: Բացառիկ դեպքերում նման բողոքները վճռաբեկ դատարանի քննարկման առարկա կարող են դառնալ, եթե այդ հարցն ունի սկզբունքային նշանակություն դատական պրակտիկայի համար: Սույն գործով բողոքարկվող որոշումը չունի նախադեպային նշանակություն: Վերը նշված պայմաններում վճռաբեկ բողոք է բերվել այնպիսի որոշման դեմ, որը վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա չէ, հետեւարար, ՀՀ քր. դատ. օր.-ի 407 հ. 3-րդ մասի ուժով այն պետք է բողնել առանց քննության:

5. Գործի նյութերի վերլուծությունը վկայում է, որ.

Նախ. ըստ այդ նյութերի եւ դիմող կողմից գրափոր հայտարարության՝ նա չի ստացել քրեական գործի հարուցումը մերժելու մասին որեւէ որոշում, այդ թվում հետաքննության մարմնի որոշումը, որը կայացրել է ՀՀ ոստիկանության Արարկիրի բաժնի պետը 20.12.2004 թվականին, եւ որուն նշված է, որ այն կարող է բողոքարկվել վերադաս դատախազին կամ վերաբննիչ դատարան՝ առանց ժամկետային որեւէ սահմանափակման: Փաստորեն, հետաքննության մարմինը իմք է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185 հոդվածի 3-րդ մասը, որը բողոքարկման ժամկետային սահմանափակում չի բովանդակում: Սակայն դիմող կողմին քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումն օրենքով սահմանված կարգով չտրամադրելը նրան զրկել է իր իրավունքների արդյունավետ պաշտպանության հնարավորությունից:

Երկրորդ. Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման քննության իրավասություն չի ունեցել, քանի որ տվյալ պահին գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185 հոդվածի 3-րդ մասի համաձայն (հոդվածը կոչվում է «Քրեական գործի հարուցումը մերժելը») «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վերադաս դատախազին կամ վերաբննիչ դատարան» (25.05.06 ՀՕ-91-Ն օրենքով օրենսգրքի 185 հոդվածի 3-րդ մասը փոխվել եւ շարադրվել է հետեւյալ խմբագրությամբ. «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահման-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ված կարգով»): Դատարանը, քննության առնելով դիմումը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 3-րդ մասի հիմքով 05.04.2006թ. որոշել է Հ. Դանիելյանի բողոքը բողնու առանց քննության:

Երրորդ. 17.04.06թ. ՀՀ քրեական եւ զինվորական գործերով վերաքննիչ դատարան ներկայացրած իր վերաքննիչ բողոքում դիմող կողմը խնդրում է՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185 եւ 394 հոդվածների համաձայն վերացնել Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների 1-ին ատյանի դատարանի 05.04.06թ. որոշումը, որպեսզի քր. գործ հարուցվի իմ բնակարանին խարդախությամբ տիրացած անձանց նկատմամբ»: Վերաքննիչ դատարանը՝ շպարզելով քրեական գործի հարուցումը մերժելու, նման որոշում դիմողին տրամադրելու, այդ որոշումը բողոքարկելու վերաբերյալ նրա իրավունքները պարզաբնելու հանգամանքները, իմք չընդունելով իիշյալ 185 հոդվածի պահանջը եւ բողոքը չընելով ըստ էության՝ վարույթն իրականացնող մարմնի գումվելու վայրի առաջին ատյանի դատարանի որոշումներն իր 04.05.2006թ. որոշմամբ համարելով վերջնական եւ բողոքարկման ոչ ենթակա, Հ. Դանիելյանի վերաքննիչ բողոքը բողել է առանց քննության եւ վերադարձել է: Դա նաև այն դեպքում, եթե առաջին ատյանի դատարանի որոշման եզրափակիչ մասում շեշտվում է, որ «Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ քրեական եւ զինվորական գործերով վերաքննիչ դատարանին 15 օրվա ժամկետում»:

Չորրորդ. ՀՀ վճռաբեկ դատարանն իր 16.06.2006թ. որոշմամբ յուրովի մեկնարանելով ՀՀ Սահմանադրությունը, իմք չընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ տվյալ պահին գործող 414 հոդվածի պահանջները, վճռաբեկ բողոքը թողել է առանց քննության, քանի որ, ինչպես նշվեց, ըստ վճռաբեկ դատարանի եզրակացության՝ նման հարցերի քննությունը «...չի բխում վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակից» եւ «սույն գործով բողոքարկվող որոշումը չունի նախադեպային նշանակություն»:

Գործի հանգամանքների պարզման արդյունքում արձանագրելով այս իրողությունները, սահմանադրական դատարանը, այնուամենայնիվ, Սահմանադրությամբ լիազորված չէ զնահատել հետաքննության մարմնի, դատախազի կամ ընդհանուր իրավասության դատարանների որոշումների ու վճիռների սահմանադրականությունը: Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 93 հոդվածը նախատեսում է, որ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը: Սահմանադրական դատարանին է Սահմանադրությամբ եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով իրավասություն վերապահված Սահմանադրության դրույթների վերաբերյալ վերջնական իրավական դիրքորոշում ներկայացնել՝ նորմատիվ ակտերի սահմանադրականությունը զնահատելիս: Այդ իրավական դիրքորոշումների բովանդակությունը սահմանադրական նորմի պաշտոնական մեկնարանությունն է: Իր հերթին, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածը պարտավորեցնում է սահմանադրական

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

դատարանին՝ ապահովել ՀՀ իրավակարգում Սահմանադրության գերակայությունը եւ անմիջական գործողությունը: Դա իրականացնելու համար սահմանադրական դատավարության իիմնական սկզբունքներից մեկն է համարվում գործի հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքը: Բացի դրանից, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 7-րդ մասում ամրագրված է, որ նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցերով իր որոշումներն ընդունելիս, ի թիվս այլ հանգամանքների, սահմանադրական դատարանը պետք է հաշվի առնի նաև մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման եւ պաշտպանության, ինչպես նաև Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը: Այս տեսանկյունից սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ըստ քննության առարկա գործի հանգամանքների՝ գործնականում չի ապահովվել ու պաշտպանվել քաղաքացու՝ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներով ամրագրված իրավունքները:

6. Քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 3-րդ մասի դրույթների առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ հոդվածի դրույթները՝ իրենց իրավակարգավորման առարկայի շրջանակներում, պետության կողմից օրենքով սահմանված ժամկետային սահմանափակումների առումով համահունչ են ՀՀ Սահմանադրության 19 հոդվածով, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածով երաշխավորված դատական քննության մատչելիության եւ արդար դատաքննության իրավունքներին: Ժամկետային սահմանափակման նպատակն է պահպանել իրավական որոշակիությունը եւ ապահովել, որպեսզի գործերը վերանայվեն ողջամիտ ժամկետներում: Օրենսգիրքը պարտավորեցնում է քրեական վարույթ իրականացնող մարմիններին հանցագործությունը եւ այն կատարած անձանց բացահայտել սեղմ ժամկետներում, ինչպես նաև նախատեսվում է այդ ուղղությամբ իրականացված գործողությունների եւ ընդունված որոշումների բողոքարկման սեղմ ժամկետներ: Իրավաչափ նպատակով արդարացված սահմանափակումներն ունեն նաև միջազգային իրավական իիմնափորում որպես պետություններում իրավական որոշակիության եւ կայունության երաշխավորման միջոց: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է այս հարցին եւ նշել, որ Կոնվենցիայի 6 հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ «Դատաքննության իրավունքը, որի մասնավոր տարր է հանդիսանում մատչելիության իրավունքը, չի հանդիսանում բացարձակ իրավունք եւ կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, հատկապես, բողոքի ընդունելիության պայմանների առնչությամբ, քանի որ այն իր էությամբ պահանջում է պետության կողմից կարգավորում, որը կարող է փոփոխվել՝ կախված ժամանակից եւ տեղից, ինչպես հասարակության, այնպես էլ կոնկրետ անձանց պահանջմունքներին եւ միջոցներին համապատասխան: Պետություններն այս առնչությամբ օգտ-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

վում են հայեցողության ազատությունից: Այնուամենայնիվ, դատարանի մատչելիության իրավունքը չի կարող սահմանափակվել այնպես եւ այն սահմաններով, որ վճարի նրա էությունը, եւ դրանք համապատասխանում են Կոնվենցիայի 6 հոդվածի 1-ին կետին, եթե ունեն օրինական նպատակ եւ կիրառված միջոցների եւ դրված նպատակի միջեւ գոյություն ունի արդար հավասարակշռություն» (Golder v. United Kingdom, 21 feb. 1975, Fayed v. United Kingdom, 25 aug. 1994, Ashingdane v. United Kingdom, 28 may 1985, Garcia Manibardo v. Spain (15 feb. 2000), 29.06.2000, Bellet v. France, 20 nov. 1995, Philis v. Greece, 27 aug. 1991, Tolstoy Miloslavsky v. United Kingdom, 23 jun. 1995): Մեկ այլ գործով Եվրոպական դատարանը շեշտում է, որ. «Բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետների կարգավորումը, անկասկած, նպատակ ունի ապահովել արդարադատության պատշաճ իրականացումը, հատկապես իրավական որոշակիության սկզբունքը: Չահագրգրված անձինք պետք է հաշվի առնեն, որ այդ կանոնները պետք է կիրառվեն» (Perez de Rada Cavanilles v. Spain, 28 oct. 1998, Societe anonyme “Sotiris et Nikos Kouras ATTEE” v. Greece (16 nov. 2000), 16 feb. 2001): Միաժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր վճիռներում առանձնահատուկ կարեւորել է, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

Ինչ վերաբերում է այդ սահմանափակման մասին իրազեկման խնդրին, ապա տվյալ հոդվածում խոսքը վերաբերում է հետաքրննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի եւ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների անօրինական եւ անհիմն որոշումների եւ գործողությունների՝ դատարան բողոքարկմանը: Ակնհայտ է, որ նշված իրավասու անձանց կամ մարմինների որոշումների բողոքարկման արդյունքում միայն դրանք կարող են ճանաչվել անօրինական կամ անհիմն: Քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասում նշված անձանց՝ իրենց իրավունքների եւ պարտականությունների պարզաբանումը, դրանց իրականացման հնարավորության ապահովումն այդ որոշումների կայացման փուլում պետք է երաշխավորվի, եւ դա նման որոշումներ կայացնող մարմինների ու անձանց պարտականությունն է, եւ օրենսգրքի 290 հոդվածի 3-րդ մասում իրավունքների պարզաբանման լրացուցիչ դրույթի ամրագրման պահանջը հիմնավոր չէ: Այս հարցը, մասնավորապես, կանոնակարգված է օրենսգրքի 101 հոդվածով: Այդ հոդվածի 2-րդ մասի դրույթը սահմանում է, որ «Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձի պարզաբանել նրա իրավունքները եւ պարտականությունները, ապահովել սույն օրենսգրքով սահմանված կարգով դրանց իրականացման հնարավորությունը»: Ընդ որում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6 հոդվածի 30-րդ կետի համաձայն՝ քրեական վարույթն իրականացնող մարմին է համարվում դատարանը, իսկ քրեական գործի մինչդատական վարույթում՝ հետաքրննության մարմինը, քննիչը, դատախազը:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Նույն հոդվածի 31-րդ կետը սահմանում է, որ դատավարության մասնակիցներն են դատախազը (մեղադրողը), քննիչը, հետաքննության մարմինը, ինչպես նաև տուժողը, քաղաքացիական հայցվորը, նրանց օրինական ներկայացուցիչները եւ ներկայացուցիչները, կավածյալը, մեղադրյալը, նրանց օրինական ներկայացուցիչները, պաշտպանը, քաղաքացիական պատասխանողը եւ նրա ներկայացուցիչը: Բացի դրանից, օրենսգրքի 6 հոդվածի 33-րդ կետով սահմանվում է նաև «դիմող» հասկացությունը, համաձայն որի՝ դիմող է համարվում յուրաքանչյուր անձ, որը դիմել է դատարան, քրեական հետապնդման մարմնին՝ քրեական դատավարության կարգով խախտված իրավունքների պաշտպանության համար: Միաժամանակ, համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 98, 103, 177, 185, 198, 263, 290 եւ մի շաբթ այլ հոդվածների, 290 հոդվածի 1-ին մասում վկայակոչվող «այլ անձինք»՝ տվյալ դեպքում դիմողը, փաստացի ընդգրկվում են քրեադատավարական իրավահարաբերությունների ոլորտ, օրենսգիրքը ճանաչում է նրանց որոշակի իրավունքներն ու պարտականությունները, եւ նրանք այդ կարգավիճակում պետք է օգտվեն իրենց իրավունքների եւ պարտականությունների պարզաբանման ու դրանց իրականացման հնարավորության ապահովման երաշխիքներից՝ որպես իրենց իրավունքների արդյունավետ իրականացման էական պայման:

Մինչդեռ, սահմանադրական դատարանը փաստում է, որ այդպիսի երաշխիքներ (իրավասու մարմնի, պաշտոնատար անձի կողմից դիմողին՝ իր դատավարական իրավունքները բացատրելը) դիմողի կարգավիճակով հանդես եկող անձի մասով օրենսգրքի որեւէ նորմով հստակ նախատեսված չէ: Քրեական դատավարության օրենսգրքում նման դրույթի ոչ հստակ ձեռակերպված լինելը կարող է նաև այդ անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության առումով ոչ հանաչափ իրավիճակի առաջացման պատճառ դառնալ: Այս խնդիրն օրենսդրական կանոնակարգման անհրաժեշտություն ունի եւ ՀՀ Ազգային ժողովի իրավասության հարցն է:

Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ քաղաքու սահմանադրական իրավունքի չապահովման պատճառը ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 290 հոդվածի 3-րդ մասի սահմանադրականության խնդրով է պայմանավորված, այլ օրենսդրական նորմերի անհստակության եւ իրավակիրառական պրակտիկայի արդյունք է, ուստի նպատակահարմար է համարում սույն գործով իր որոշման պատճառաբանական մասի վրա իրավիրել ՀՀ գլխավոր դատախազության եւ ՀՀ դատարանների նախագահների խորհրդի ուշադրությունը՝ դիմոդի կողմի սահմանադրական իրավունքի օրենքով սահմանված կարգով իրացումն ապահովելու նպատակով:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 3-րդ մասի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**18 հոկտեմբերի 2006 թվականի
ՍԴՈ-652**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

2006 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-ԻՆ ԹԵՇՐԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱԿԻ-
ԽՍԼԱՍՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ
ԿՐԹՎԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹՎՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԻՄՆՄԱՆ ԵՎ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՓՈԽԲԱՐՁՐՈՒՄԸ
ՀՈՒՇԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ և
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

20 Խոկտեմբերի 2006թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալյայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ռ. Պապյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Գ. Ղարիբջանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետի, 101 հոդվածի 1 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դրսքաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2006 թվականի փետրվարի 1-ին Թեհրանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջեւ կրթական եւ մշակութային կենտրոնների հիմնման եւ գործունեության պայմանների մասին փոխըմբռնման հուշագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցի բացատրությունները, հետազոտելով հուշագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Փոխըմբռնման հուշագրի ստորագրումը երկու պետությունների միջև պայմանավորված է Կողմերի մշակութային արժեքների, ավանդական մշակութային կապերի զարգացման եւ պահպանման փոխադարձ հետաքրքրությամբ եւ բխում է 1994 թվականի նոյեմբերի 28-ին Թեհրանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև մշակույթի, գիտության, կրթության, սպորտի, գրոսաշրջության եւ զանգվածային լրատվության միջոցների բնագավառներում համագործակցության մասին համաձայնագրից:

2. Հուշագրի համաձայն՝ Կողմերը պայմանավորվում են իրենց ներպետական օրենսդրությանը համապատասխան իրենց երկրներում հիմնել մյուս երկրի կրթական եւ մշակութային կենտրոն՝ համապատասխան պայմաններ ստեղծելով նաեւ սեփականության իրավունքով շենք, հողատարածքներ ձեռք բերելու խնդրում, որի հիմնական գործառույթը կրթական եւ մշակութային աշխատանքների իրականացումն է, այդ թվում՝ դպրոցի հիմնումը եւ այլ կրթական, մշակութային, գեղարվեստական եւ հրատարակչական աշխատանքների իրականացումը, ինչպես նաեւ հուշագրի 7 հոդվածում նախատեսված պայմաններով այդ կենտրոնների բնականուն գործունեության ապահովումը:

3. Վերոհիշյալ կենտրոնները գործելու են շահույթ չհետապնդող կազմակերպության կարգավիճակով՝ համագործակցելով համապատասխան Կողմի դիվանագիտական ներկայացուցչությունների հետ:

4. Հուշագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 9 հոդվածում ամրագրված՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխահավետ հարաբերություններ հաստատելու սկզբունքին եւ բխում են Սահմանադրության 48 հոդվածի 9 եւ 11 կետերում նախատեսված՝ պետության խնդիրներից:

Ելեկով գործի բննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետով, 102 հոդվածի առաջին եւ երկրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5 հոդվածի 2 կետով, 67 եւ 68 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. 2006 թվականի փետրվարի 1-ին Թեհրանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Իրանի Իսլամական Հան-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

բապետության կառավարության միջեւ կրթական եւ մշակութային կենտրոնների հիմնման եւ գործունեության պայմանների մասին փոխըմբռնման հուշագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**20 հոկտեմբերի 2006 թվականի
ՍԴՈ-653**



ՀԱՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 2-ԻՆ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ
ՄԻԶՈՑՆԵՐԻ ՀԱՓՃԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ
ՎԵՐԱԴԱՐՁՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ ՀԱՍՎԳՈՐԾՎԿՅՑՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՎՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

20 հոկտեմբերի 2006թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (գեկուցող), Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետի, 101 հոդվածի 1 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դրաբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2006 թվականի հունիսի 2-ին Թբիլիսիում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Վրաստանի կառավարության միջև ավտոտրանսպորտային միջոցների հափշտակության դեմ պայքարում եւ դրանց վերադարձն ապահովելու գործում համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի դիմումն է սահմանադրական դատարան:

«ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Յ.

1. ღნისიღյան առարկա համաձայնագիրն ստորագրվել է 2006թ. հունիսի 2-ին Թրիխիում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև՝ ավտորանսպորտային միջոցների հափշտակությունը կանխելու և դրանց վերադարձն ապահովելու համար համաձայնեցված միջոցներ իրականացնելու նպատակով:

2. Համաձայնագրով նախատեսվում է Կողմերի համագործակցությունն ավտոտրանսպորտային միջոցների հափշտակության հետ կապված հանցագործությունները կանխելու, հայտնաբերելու, բացահայտելու, քննելու, հափշտակված ավտոտրանսպորտային միջոցները հետախուզելու եւ դրանց վերադարձն ապահովելու գործում: Համագործակցությունն իրականացվելու է Կողմերի իրավասու մարմինների միջոցով, որոնց ցանկերը փոխանցվելու են միմյանց: Պետք է օգտագործվեն նաև հնտերպնի միջոցները, այդ թվում Գլխավոր քարտուղարության կենտրոնական բազան:

3. Հաստ համաձայնագրի՝ Կողմերից մեկի տարածքում հափշտակ- ված ավտոտրանսպորտային միջոցի հայտնաբերման, առգրավման կամ կալանման դեպքում այդ Կողմի իրավասու մարմինը 20 օրվա ընթացքում այդ մասին գրավոր ծանուցում է մյուս Կողմի իրավասու մարմնին, որի վարույթում գտնվում է քրեական գործը: Հափշտակված ավտոտրանսպորտային միջոցը հայտնաբերած կամ առգրաված Կողմի իրավասու մարմինները պարտավոր են ձեռնարկել համապատասխան միջոցներ տվյալ ավտոտրանսպորտային միջոցի պահպանվածությունն ապահովելու համար եւ չեն կարող օգտագործել կամ տնօրինել այն:

4. Ըստ համաձայնագրի՝ ծանուցում ստացած Կողմի իրավասու մարմինը կարող է գրավոր հարցում ուղարկել մյուս Կողմի իրավասու մարմնին՝ ավտոտրանսպորտային միջոցի վերադարձման վերաբերյալ: Հարցվող Կողմի իրավասու մարմինն ավտոտրանսպորտային միջոցի վերադարձման վերաբերյալ հարցումն ստանալուց 30 օրվա ընթացքում կայացնում է համապատասխան որոշում եւ այդ մասին տեղեկացնում հարցնող Կողմի իրավասու մարմնին:

5. Կողմերից յուրաքանչյուրը պետք է ապահովի մյուս Կողմից ստացված տվյալների գաղտնիությունը, իսկ դրանք երրորդ Կողմին փոխանցելու անհրաժեշտության դեպքում պետք է ստանա մյուս Կողմի գրավոր համաձայնությունը:

6. Ըստ համաձայնագրի՝ ավտոտրանսպորտային միջոցի վերադարձած վերաբերյալ հարցման կատարումը կարող է մերժվել կամ հետաձգվել: Կողմերը դադարեցնում են հափշտակված ավտոտրանսպորտային

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

միջոցի հետախուզումը հարցնող Կողմի իրավասու մարմնի որոշմամբ:

7. Համաձայնագրում նախատեսված են դրույթներ՝ ծագող վիճելի հարցերը լուծելու, ծախսերի, համաձայնագրում փոփոխություններ եւ լրացնումներ կատարելու, դրա ուժի մեջ մտնելու եւ դադարելու վերաբերյալ:

8. Սույն համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետեւյալ ֆինանսական պարտավորությունները՝

ա) վերադարձվող ավտոտրանսպորտային միջոցները ՀՀ սահմանները հատելիս ազատվում են հարկային, մաքսային եւ այլ գանձումներից ու վճարներից,

բ) կրում է ավտոտրանսպորտային միջոցն առգրավելու եւ մինչեւ սեփականատիրոջ կամ նրա ներկայացուցչին կամ նյու Կողմի իրավասու մարմնին հանձնելու պահը դրա պահպանման ծախսերը:

9. Համաձայնագրը կատարված է երկու քնօրինակով՝ հայերեն, վրացերեն եւ ռուսերեն, ընդ որում, բոլոր տեքստերն ել հավասարազոր են: Համաձայնագրի մեկնաբանման դեպքում գերակայությունը տրվում է ռուսերեն տեքստին:

10. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները ՀՀ Սահմանադրության 9 հոդվածին համահունչ ապահովում են Կողմերի միջեւ արտաքին հարաբերությունների իրականացումը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Պ Ո Յ Ե Ց**.

1. 2006 թվականի հունիսի 2-ին Թրիխսիում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Վրաստանի կառավարության միջեւ ավտոտրանսպորտային միջոցների հափշտակության դեմ պայքարում եւ դրանց վերադարձն ապահովելու գործում համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**20 հոկտեմբերի 2006 թվականի
ՍՊԸ-654**

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ



ՀԱՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

2006 թվականի Ապրիլի 28-ին Երեվանում ՍՈՒՐԱԳՐՎԱԾ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ

ԴՐԱԶԱՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ

ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԿԱՆ ՔՍԴԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄԻՋԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԿԱՆ ՔՍԴԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱ-

ՌՈՒՄ ՀԱՍՏԱԳՈՐԾՎԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՆԱԳՐՈՒՄ

ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ և

ՀԱՄԱՅՆՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

31 հոկտեմբերի 2006թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարուբյունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարար Հ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետի, 101 հոդվածի 1 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2006 թվականի ապրիլի 28-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության եւ Ղրղզստանի Հանրապետության կրթության, գիտության եւ երիտասարդական քաղաքականության նախարարության միջեւ երիտասարդական քաղաքականության բնագավառում համագործակցության մասին համաձայ-

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նազրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնաափելով սույն գործով գեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ.**

1. Սույն համաձայնագիրն ստորագրվել է 2006 թվականի ապրիլի 28-ին՝ Երեւանում: Դրա նպատակն է նպաստել Հայաստանի Հանրապետության եւ Ղրղատանի Հանրապետության միջեւ երիտասարդական քաղաքականության բնագավառում երկրորդ համագործակցության իրավական հիմքերի ստեղծմանը եւ բարեկամական հարաբերությունների հետագա գրգացմանը:

Համաձայնագիրը հիմք կհանդիսանա երկու երկրների երիտասարդության երկկողմ շփումներն ակտիվացնելու համար:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- օժանդակել երիտասարդության հարցերի պետական մարմինների, ազգային եւ տարածաշրջանային երիտասարդական միավորումների՝ երիտասարդության հետ տարվող աշխատանքների ոլորտում իրավահավասար եւ փոխահավետ համագործակցության ամրապնդմանն ու գրգացմանը,

- ապահովել երիտասարդության մասնակցությունը երիտասարդության հետ տարվող աշխատանքների ոլորտում նախագծերի եւ ծրագրերի իրականացմանը,

- խրախոսել եւ օժանդակել երիտասարդական քաղաքականության բնագավառում կապերի եւ համագործակցության զարգացմանը՝ առանձին պայմանագրերի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության եւ Ղրղատանի Հանրապետության միջեւ համատեղ աշխատանքի, կապերի եւ փոխադարձ փոխանակումների համար բարենպաստ պայմանների ստեղծման, երիտասարդական քաղաքականության բնագավառում աշխատանքային փորձի փոխանակման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ընդհանուր ծրագրերի ներդրմանը եւ երիտասարդական ու մանկական միջոցառումների անցկացմանն օժանդակելու միջոցով,

- օժանդակել բոլոր մակարդակներում պետական եւ ոչ կառավարական կազմակերպությունների միջեւ անմիջական կապերի զարգացմանը, ներառյալ պատվիրակությունների, փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող խնդիրների վերաբերյալ տեղեկատվության փոխանակումները, ինչպես նաև համատեղ մշակված ծրագրերով միջոցառումների անցկացումը,

- աջակցել երիտասարդների ամառային հանգստի կազմակերպման

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, արձակուրդների ընթացքում ուսանողական խմբերի փոխանակմանը,

- խրախուսել երիտասարդության հետ տարվող աշխատանքների ոլորտի մասնագետների, մարզիչ-դասավանդողների, այլ մասնագետների համագործակցությունը, ինչպես նաև նպաստել նրանց փորձի փոխանակմանը,

- ապահովել երիտասարդության հետ տարվող աշխատանքների ոլորտի վիճակագրական եւ այլ տեղեկատվության փոխանակումը, այդ թվում Հայաստանի Հանրապետությունում երիտասարդական քաղաքականությունը կարգավորող օրենսդրական եւ այլ նորմատիվ ակտերի, երիտասարդական քաղաքականության իրականացման գործընթացի վերաբերյալ տեղեկատվության, ուղեցույցների, տեղեկատվական, մեթոդական եւ այլ նյութերի փոխանակումը,

- իրականացնել անչափահասների հարցերով գրադարձ ծառայությունների, երիտասարդների համար սոցիալական կենտրոնների եւ դրանց այն մասնագիտացված կազմավորումների աշխատանքային փորձի փոխանակում, որոնք հոգեբանական, իրավաբանական եւ այլ օգնություն են ցուցաբերում անչափահասներին եւ երիտասարդությանը,

- նպաստել աշխատանքային գրադարձության ծրագրերի, ինչպես նաև երիտասարդների բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի մշակման ու իրականացման բնագավառում փորձի փոխանակմանը,

- խրախուսել երիտասարդական աշխատանքային եւ ուսանողական շինարարական ջոկատների փոխանակումը,

- երիտասարդական փոխանակումների մասին կնճքած առանձին պայմանագրերի շրջանակներում համագործակցություն իրականացնելիս, փոխադարձության սկզբունքի հիման վրա, հոգալ Հայաստանի Հանրապետության կողմից ուղարկվող պատվիրակությունների ճանապարհածախը մինչեւ միջոցառման անցկացման վայր եւ հակառակ ուղղությամբ, ինչպես նաև արտասահման մեկնելու համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բոլոր տեսակի ապահովագրական ծախսերը, ստանձնել համաձայնագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետություն այցելող պատվիրակությունների կեցության ծախսերը, ներառյալ տեղավորումը, սնունդը, ներքին տրանսպորտային փոխադրումները, ինչպես նաև այլ անհրաժեշտ օգնությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան,

- փոխադարձության սկզբունքով ապահովել, որպեսզի համաձայնագրում ներառված գործողության բոլոր տեսակները համապատասխանեն եւ իրականացվեն ՀՀ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան եւ ֆինանսավորվեն ՀՀ բյուջեով նախատեսված միջոցների սահմաններում, ինչպես նաև ՀՀ ազգային օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետով,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց Յ.

1. 2006 թվականի ապրիլի 28-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության եւ Վրդուանի Հանրապետության կրթության, գիտության եւ երիտասարդական քաղաքականության նախարարության միջեւ երիտասարդական քաղաքականության բնագավառում համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**31 հոկտեմբերի 2006 թվականի
ՍՊԸ-655**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 5-ԻՆ ԹԵՀՐԱՆՈՒՄ ՍՈՒՐԳԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՆԻ ԽՍԼԱՍՄԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՆՁՆՄԱՆ ՀԱՍՏԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆՔ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

31 հոկտեմբերի 2006թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով՝ Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալյայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետի, 101 հոդվածի 1 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դրնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2006 թվականի հուլիսի 5-ին Թեհրանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Իրանի Խալամական Հանրապետության միջեւ հանձնման համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելով վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1. Համաձայնազրի ստորագրումը երկու պետությունների միջև պայմանավորված է միջազետական փոխհարաբերություններն ամրապնդելու եւ հանձննանել առնչվող բնագավառներում արդյունավետ համագործակցություն ստեղծելու նպատակով:

2. Համաձայնագրով Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է մյուս Կողմի հարցման հիման վրա հանձնել իր տարածքում գտնվող յուրաքանչյուր անձի, որը հանցագործություն կատարելու կամ դատավճիռն ի կատար ածելու համար գտնվում է մյուս պայմանավորվող Կողմի իրավասումարմինների կողմից վարվող դատական հետապնդման մեջ:

3. Համաձայնագրի 2-րդ հոդվածում նախատեսված են հանձնման հետեւյալ հնարավոր պայմանները.

- քրեական հետապնդման մեջ գտնվող անձի հանձնում այն արարքի համար, որը Կողմերի օրենսդրությամբ համարվում է հանցագործություն ել պատմելի է առավելագույնն ազատազրկման՝ ոչ պակաս, քան մեկ տարի ժամկետով,

- դատապարտյալի հանձնում, որի կատարած հանցագործությունը եւ դրա համար նախատեսված առավելագույն պատիժը համապատասխանում են վերը հիշատակված պայմանին եւ կայացված դատավճիռը սահմանում է նվազագույնը 6 ամիս ազատազրկում:

4. Համաձայնագրով, միաժամանակ, նախատեսված են հանճնման հարցումը մերժելու դեպքերը (հոդված 3).

- Եթե հանցագործության կատարման պահին անձը հայցվող Կողմի քայլաքազի է,

- քաղաքական կամ զինվորական հանցագործության դեպքում,
- Կողմերից մեկի օրենսդրությանը համապատասխան հանցագործությունն իրավաբանորեն դատական կարգով հետապնդելի չէ կամ դատավճիռն ի կատար ածելու և նթակա չէ,

- հանձնման հարցման իրականացումը վճարում է հայցվող կողմի պետական ինքնիշխանությանը, ազգային անվտանգությանը, հասարակական կարգին կամ բարոյական նորմերին կամ հակասում է իրավական հիմնարար սկզբունքներին եւ այլն:

5. Համաձայնագրի այլ հոդվածներով նախատեսված են հանձնման իրականացման պայմանները եւ դեմքագաղօդ:

6. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետեւյալ հիմնական պարտավորությունները.

- Իրանի Իսլամական Հանրապետության հարցման հիման վրա հաճանել իր տարածքում գտնվող, համաձայնագրի պայմանների համաձայն հանձննան Ենթակա յուրաքանչյուր անձի, որը հանցագործություն կատարելու կամ դատավճիռն ի կատար ածելու համար գտնվում է իր իրավասունարմինների կողմից վարվող դատական հետապնդման մեջ,

- հանձնման վերաբերյալ հարցումն ստանալով՝ իր ներպետական օրենսդրությանը համապատասխան անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել հայցվող անձին ձերբակալելու կամ կալանավորելու համար, եթե առկա չեն հանձնումը մերժելու համաձայնագրի 3-րդ հոդվածով նախատեսված հիմքերը,

«ԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱԿԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն հանձնումը մերժելու դեպքում, օրենսդրությանը համապատասխան դատական կարգով հետապնդել մեղադրվող անձին,
 - հայցող կողմին փոխանցել հանցագործության ապացույց համարվող բոլոր իրերն ու առարկաները կամ հանցագործության համար օգտագործված կամ հանցագործության ընթացքում ձեռք բերված գործիքները,
 - բոլոր կողմանը կամ անձինը պատճենահանումը, որը մյուս Կողմին է հանձնվել երրորդ պետության կողմից,
 - կրել իր տարածքով այն անձի հանձնումը, որը մյուս Կողմին է հանձնվել երրորդ պետության կողմից:

7. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 30.1. հոդվածի երրորդ մասի դրույթներին եւ բխում են 9 հոդվածում ամրագրված՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու սկզբունքից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայատանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

1. 2006 թվականի հուլիսի 5-ին Թեհրանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Իրանի Իսլամական Հանրապետության միջև հանձննան համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

31 አንቀጽናምያዕስ የ 2006 የፌዴራል ስነ



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

1961 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ՀԱՎԱՅՑՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ԿՏԱԿԱՅԻՆ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎՔԻ ՎԵՐԱԲԵՐՈՂ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ԿՈՆՎԵՆՑԻԱՅՑՈՒՄ (ԿԻՑ ՎԵՐԱՊԱՀՈՒՄՆԵՐՈՎ) ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏՊԱՏԱԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՑ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ.

Քաղ. Երեւան

31 հոկտեմբերի 2006թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոփյանի (գեղուցող), Վ. Հովհաննիսյանի, Զ. Դուկայանի, Ռ. Պապյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետի, 101 հոդվածի 1 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25 և 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1961 թվականի հոկտեմբերի 5-ին Հաազայում ստորագրված՝ Կտակային հանձնարարությունների ձեւին վերաբերող իրավունքների հակասությունների մասին կոնվենցիայում (կից վերապահումներով) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով գեղուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունները, հետազոտելով կոնվենցիան եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1. Կտակային հանձնարարությունների ձեւին վերաբերող իրավունքների հակասությունների մասին կոնվենցիան ստորագրվել է Հաազայի կոնֆերանսի կազմակերպության անդամ պետությունների կողմից 1961 թվականի հոկտեմբերի 5-ին՝ Հաազայում:

Կոնվենցիայի նպատակն է սահմանել ընդհանուր դրույթներ կտակային հանձնարարությունների ձեւին վերաբերող իրավունքների հակասությունների վերաբերյալ:

2. Կոնվենցիան լայն իրավական հնարավորություն է ստեղծում նրա համար, որպեսզի կտակարարի հանձնարարությունները բոլոր դեպքերում իրագործվեն՝ անկախ այն քանից, թե որտեղ է կտակը կազմվել եւ դրանից բխող գույքը կոնվենցիայի մասնակից պետություններից որի տարածքում է գտնվում:

Կոնվենցիան կարգավորում է կտակ կազմելու ձեւի հետ կապված իրավունքի կիրառման կանոններն այն դեպքերում, երբ կտակը կազմվել է այլ պետությունում, իսկ դրանով նախատեսված ժառանգման ենթակա գույքը կոնվենցիայի մասնակից մեկ այլ պետությունում կամ պետություններում է:

Կոնվենցիան ենթակա է կիրառման նաեւ, եթե դրանով ժառանգություն ստացողն այն պետության քաղաքացին չէ, որտեղ կտակը պետք է կատարվի:

Համաձայն կոնվենցիայի՝ կտակը ձեւի առումով վավերական կլինի, եթե դրա ձեւը համապատասխանի այն վայրի ներքին իրավունքին՝

ա) որտեղ կտակարարը կատարել է այն, կամ

բ) որի քաղաքացին է եղել կտակարարը հանձնարարությունը կազմելու կամ իր մահվան պահին, կամ

գ) որտեղ կտակարարն ունեցել է իր բնակության վայրը հանձնարարությունը կազմելու կամ իր մահվան պահին, կամ

դ) որտեղ գտնվում է հանձնարարությանն առնչվող անշարժ գույքը:

Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունը լրացնից ֆինանսական պարտավորություններ չի ստանձնում:

3. Կոնվենցիայի վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունը կատարել է վերապահումները: Համաձայն կոնվենցիայի՝ Հայաստանի Հանրապետությունն իրեն իրավունք է վերապահում՝

- ճանաչել քանավոր արված կտակային հանձնարարությունները, որոնք արվել են իր քաղաքացիներից մեկի կողմից, որը չունի այլ պետության քաղաքացիություն,

- կոնվենցիայի կիրառման ոլորտից քացառել կտակային այն կետերը, որոնք իր իրավունքի համաձայն չեն վերաբերում ժառանգության հարցերին,

- կոնվենցիան կիրառել միայն այն կտակային հանձնարարությունների նկատմամբ, որոնք արվել են Հայաստանի Հանրապետության համար դրա ուժի մեջ մտնելուց հետո:

4. Կոնվենցիայում ամրագրված դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 8, 9, 11.3., 31 եւ 42 հոդվածներին եւ ապահովում են Հայաս-

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

տանի Հանրապետության քաղաքացիներին վերոնշյալ հոդվածներով վերապահված իրավունքների իրականացման հնարավորությունները:

Ելնելով գործի քննության արդյունքներից և դեկազարդելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 1961 թվականի հոկտեմբերի 5-ին Հաազայում ստորագրված՝ Կտակային հանձնարարությունների ձեւին վերաբերող իրավունքների հակասությունների մասին կոնվենցիայում (կից վերապահումներով) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**31 հոկտեմբերի 2006 թվականի
ՍԴՈ-657**

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 գեկտեմբերի 1996թ. կողմանական թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրության հասցեն՝
Երևան Բաղրամյան 10
Հեռախոս՝ 58-81-71
E-mail: armlaw@concourt.am.
<http://www.concourt.am>.

Ստորագրված է տպագրության՝ 09 փետրվարի 2007 թ.

Դասիչ՝ 77754
Գրաշափը՝ 70x100 1/16
Տպաքանակը՝ 500

*ՀՀ ՍԴ դեղիկագիրը ՀՀ կառավարությանն
առընթեր բարձրագույն որակավորման
հանձնաժողովի որոշմամբ ընդգրկված է
այդենախոսությունների արդյունքների
դրագրման համար ընդունելի
պարբերականների ցանկում*